



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Առկա ուսուցում 1824 թողարկում

Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոն

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵՂ

«Քաղաքագիտություն» մասնագիտությամբ քաղաքագիտության մագիստրոսի  
որակավորման աստիճան հայցելու համար

Մագիստրանտ՝

Ղեկավար՝

Ամբիոնի վարիչ՝

Գաբրիելյան Հասմիկ Արմենի

Զաքարյան Արտակ Բորիսի

Քաղ. գիտ. թեկ., դոցենտ

Մարգարյան Մարիամ Մամիկոնի

Քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Փիլ. գիտ. թեկ., դոցենտ

Երևան 2020

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
<b>ԳԼՈՒԽ 1 ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՓՈՒԼԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄՑ</b>	
1.1 Խորհրդարանական համակարգի զարգացման փուլերը Հայաստանի Հանրապետությունում.....	8
1.2 Օրենսդիր մարմնի կայացման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում. Ազգային ժողովի հիմնական գործառույթները .....	21
<b>ԳԼՈՒԽ 2 ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....</b>	<b>36</b>
2.1 Խորհրդարանական մշակույթի կայացման ինստիտուցիոնալ առանձնահատկությունները.....	36
2.2 Խորհրդարանական մշակույթի ձևավորման իրավաքաղաքական հիմքերը	47
2.3 Խորհրդարանական մշակույթի կիրառական առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում .....	52
<b>ԳԼՈՒԽ 3 ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՈ. ԱՆՑՈՒՄ ԴԵՊԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ .....</b>	<b>58</b>
3.1 2015 թվականի Սահմանադրական փոփոխությունները, որպես կուսակցությունների գործունեություն և դերակատարների ընդլայնում.....	58
3.2 Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի հիմնախնդիրները խորհրդարանական կառավարման անցման գործընթացում .....	70
3.3 Կուսակցությունների լիդերները և նրանց դերակատարությունը խորհրդարանական մշակույթի կայացման և զարգացման հիմքում.....	79
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....</b>	<b>94</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....</b>	<b>97</b>
Օրենքներ և այլ իրավական ակտեր.....	97
Գրականություն .....	97
Համացանցային կայքեր.....	101

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բոլոր ժամանակներում պետությունները պետական կառավարման ձևին առնչվող հիմնախնդիրների վերլուծությանը մեծ ուշադրություն են դարձրել: Պետական իշխանության երեք թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև հարաբերությունների որակը ոչ միայն խթանել է պետությունների պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը, այլև ձևավորել խորհրդարանական մշակույթ:

**Թեմայի արդիականությունը:** Մագիստրոսական թեզի հետազոտության թեմայի ընտրությունը պայմանավորում ենք Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում կառավարման խորհրդարանական ձևի անցմամբ (նշենք, որ պետական կառավարման ձևերին առնչվող թեման հատկապես արդիական է և առավել կարևորվում է հետխորհրդային երկրներում, քանի որ այստեղ անցումը հին պետական իշխանության համակարգից դեպի նորը, որը տեղի ունեցավ արմատական սոցիալական վերափոխումների միջոցով, անխուսափելիորեն հանգեցրեց նաև պետական կառավարման ձևերի փոփոխությանը), որի պայմաններում հրատապ է դառնում կուսակցությունների դերի ուսումնասիրությունը ոչ միայն որպես քաղաքականություն իրականացնող գլխավոր և/կամ առանցքային դերակատարների, այլև իբրև խորհրդարանական մշակույթի կայացման ինստիտուտի:

Խորհրդարանական մշակույթի կայացման հիմք են հանդիսանում քաղաքական էլիտայի, քաղաքացիական և ժողովրդավարական ինստիտուտների հարաբերությունները, այդ ինստիտուտների լեգիտիմության աստիճանը և լեգիտիմացման գործընթացը, հասարակության քաղաքական համոզմունքները, քաղաքական գիտակցության, քաղաքական գործընթացներին մասնակցության, դրանց ընկալունակության աստիճանը, ինչպես նաև կայացած կուսակցական համակարգի առանցքային դերը:

Այս համատեքստում մագիստրոսական թեզի արդիականությունը պայմանավորված է ՀՀ-ում խորհրդարանական կառավարման պայմաններում կուսակցությունների՝ որպես խորհրդարանական մշակույթ ձևավորողների դերով:

**Հետազոտության հիմնական նպատակներն ու խնդիրները:** Սույն հետազոտության հիմնական նպատակն է, հաշվի առնելով ՀՀ-ում անցումը պետական կառավարման խորհրդարանական մոդելին, միևնույն ժամանակ ընդգծելով պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը միտված հրամայականները, ինչպես նաև կարևորելով հասարակություն-պետություն հարաբերությունների ներդաշնակման և զարգացման անհրաժեշտությունը, առաջ բերել կուսակցությունների դերը որպես խորհրդարանական մշակույթի ձևավորման հիմնական ինստիտուտի գնահատելու նոր մոդել: Ընթացող համակարգային փոխակերպումների, ժողովրդավարական գործընթացների նպատակային իրականացման առումով կարևորվում է կառավարման համակարգի թե՛ կառուցվածքային և թե՛ կիրառական վերլուծությունը, ինչպես նաև դրա զարգացման միտումների վերհանմանն ուղղված ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոհիշյալ նպատակի իրականացումը՝ առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել խորհրդարանական համակարգի զարգացման փուլերը Հայաստանի Հանրապետությունում,
- քննարկել Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր մարմնի կայացման նախադրյալները,
- բացահայտել խորհրդարանական մշակույթի կայացման նախադրյալները՝ վեր հանելով առկա առանձնահատկությունները,
- դիտարկել խորհրդարանական մշակույթի իրավաքաղաքական հիմքերը, վերլուծել առկա կիրառական առանձնահատկությունները,
- ուսումնասիրել կուսակցական համակարգի զարգացման միտումները 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների համատեքստում,
- վեր հանել կուսակցական համակարգի հիմնախնդիրները խորհրդարանական կառավարման անցման պայմաններում,
- դիտարկել կուսակցական լիդերների դերը խորհրդարանական մշակույթի ձևավորման, կայացման և զարգացման գործընթացում:



**Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը:** Հետազոտության ուսումնասիրության մեթոդների ընտրության հարցում էական նշանակություն են ունեցել քաղաքական գիտության զարգացման արդի հրամայականները: Հետազոտության ընթացքում կիրառվել է ինչպես համակարգային, այնպես էլ պատմահամեմատական, գործառույթակառուցվածքային մեթոդներ:

Հայաստանի Հանրապետության խորհրդարանական համակարգի բնութագրման, ինչպես նաև կուսակցությունները, որպես խորհրդարանական մշակույթի կայացման հիմնական ինստիտուտ դիտարկելու նպատակով աշխատանքում օգտագործվել է դիալեկտիկական և սիներգետիկական մեթոդաբանությունը: Դիալեկտիկական մեթոդաբանության օգնությամբ վերլուծել ենք ՀՀ-ի խորհրդարանական համակարգում տեղ գտած փոփոխությունները, ապա սիներգետիկական մեթոդի օգնությամբ բացահայտել կուսակցական համակարգի զարգացումը՝ կարևորելով որպես խորհրդարանական մշակույթի կայացման հիմնական ինստիտուտի կուսակցական համակարգի զարգացման ինստիտուցիոնալ, սոցիալ-հոգեբանական և քաղաքակրթական դինամիկան: Այս մեթոդները հնարավորություն են ընձեռել բազմաչափության մեջ դիտարկել քաղաքական կուսակցությունների՝ որպես խորհրդարանական մշակույթի ձևավորման, կայացման ու զարգացման հիմնական ինստիտուտի խնդիրները:

**Ուսումնասիրության օբյեկտը:** Հետազոտության օբյեկտ են հանդիսանում կուսակցությունները և խորհրդարանական մշակույթի կայացման մյուս հիմնական ինստիտուտները:

**Ուսումնասիրության առարկան:** Աշխատանքի ուսումնասիրության առարկան խորհրդարանական կառավարման պայմաններում Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցությունների դերն է որպես խորհրդարանական մշակույթի կայացման հիմնական ինստիտուտ:

**Գիտական նորույթ:** Վերոհիշյալ հիմնախնդրի բազմաշերտությունը ենթադրում է համակարգված ուսումնասիրություն: Աշխատանքի մեջ փորձ է արվել վերլուծել կուսակցությունների դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետությունում

խորհրդարանական կառավարման անցման գործընթացում՝ հիմնվելով քաղաքական մտքի պատմության մեջ ձևավորված մոտեցումների վրա:

Ըստ այդմ արձանագրել ենք գիտական նորույթ պարունակող հետևյալ արդյունքները. ներկայացվել է խորհրդարանական մշակույթի կայացման գործում քաղաքական կուսակցությունների դերը գնահատելու նոր մոտեցում՝ պայմանավորված կուսակցական լիդերության ինստիտուտով, որը հիմնվում է Պլատոնի, Մաքիավելիի, Լասուելի և մի շարք այլ տեսաբանների մոտեցումների վրա:

**Աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը:** Մագիստրոսական աշխատանքից բխող գիտական եզրակացություններն ու մոտեցումներն ունեն տեսական և կիրառական նշանակություն:

Սույն աշխատանքի տեսական նշանակությունն այն է, որ աշխատանքի շրջանակներում առաջ են քաշվել մի շարք նոր հարցադրումներ, որոնք վերաբերում են Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական համակարգի անցման պայմաններում կուսակցությունների դերի քննարկմանը, որպես խորհրդարանական մշակույթի կայացման հիմնական ինստիտուտի:

Կիրառական տեսանկյունից աշխատանքն արժևորվում է նրանով, որ կատարված վերլուծությունը կարող է կիրառվել փորձագետների և վերլուծաբանների կողմից և հնարավորություն տալ վերջիններիս արդիականացնել իրենց գիտելիքները: Այն օգտակար կարող է լինել նաև քաղաքական վերլուծաբանների, փորձագետների, հատկապես, քաղաքական գործիչների համար:

**Գրականության տեսություն:** Մագիստրոսական թեզի թեմայի ընտրությունը (Կուսակցությունները որպես խորհրդարանական մշակույթի կայացման ինստիտուտ ՀՀ-ում) պայմանավորված է եղել քաղաքական գիտության մեջ նրա ուսումնասիրման ներկայիս աստիճանով: Մինչ այսօր կուսակցությունների և կուսակցական համակարգերի վերաբերյալ կան մշակված տարաբնույթ տեսություններ, որոնք առավել քան բացահայտում են զարգացած երկրներում կուսակցական համակարգերի արդյունավետ գործունեությունը, կերպափոխումները կամ դրանց դրսևորումները հետխորհրդային երկրներում ժողովրդավարական անցման գործընթացներում: Մինչ այսօր խնդրահարույց է քաղաքական զարգացման ճգնաժամերի մեջ գտնվող երկրների

քաղաքական համակարգերի կերպափոխման առանձնահատկությունների ուսումնասիրումը, ինչպես նաև այդ գործընթացում պետական կառավարում իրականացնող ինստիտուտների կողմից կառավարման մշակույթ ձևավորելու հնարավորությունը: Այս համատեքստում, կուսակցական համակարգերի տեսության ուսումնասիրության հարցում նշանակալի ներդրում է կատարվել Է. Բյորքի, Ռ. Միխելսի, Զ. Սարտորիի, Մ. Դյուվերժեի, Կ. Ջանդայի, Զ. Լապալամբարայի և այլոց կողմից:

Խորհրդարանական մշակույթի ուսումնասիրությունն իրականացվել է տեսաբաններ Գ. Ալմոնդի, Ս. Վերբայի, Գ. Լեբոնի ուսումնասիրությունների հիման վրա:

Չնայած բազմաբովանդակ գրականության առկայությանը՝ Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական մշակույթի ձևավորման, զարգացման ու կայացման հրամայականները դեռևս մնում են բավարար չափով չուսումնասիրված:

**Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:** Աշխատությունը բաղկացած է ներածական մասից, երեք գլուխներից, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, եզրակացություններ և առաջարկություններ բաժիններից, ինչպես նաև վերջում ներկայացված է օգտագործված գրականության ցանկը: Աշխատանքը բաղկացած է 103 էջից:

# ԳԼՈՒԽ 1 ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻՑԻՈՆ ՓՈՒԼԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## 1.1 Խորհրդարանական համակարգի զարգացման փուլերը Հայաստանի Հանրապետությունում

Պետությունն առաջացել է այն պատճառով, որ մեզնից յուրաքանչյուրն առանձին ինքնաբավ չէ և շատ ուրիշ բաների կարիք ունի:

Ուրեմն տարբեր կարիքներ ստիպում են մեզ ձեռք մեկնել միմյանց, և քանի որ կարիքները շատ են, մարդիկ միավորվում են համատեղ բնակության և փոխադարձ օգնության համար: Այդպիսի համատեղ կեցությունը մենք կոչում ենք պետություն<sup>1</sup>:

Առհասարակ, բոլոր ժամանակներում պետությունները, պետական կառավարման ձևին առնչվող հիմնախնդիրների վերլուծությանը մեծ ուշադրություն են դարձրել: Հարց է առաջանում՝ ինչու<sup>2</sup>:

Պետական կառավարման ձևը բարձրագույն պետական իշխանության կազմակերպման եղանակն է, այսինքն՝ թե ինչպիսի հարաբերություններ են առկա պետական իշխանության երեք թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև: Իշխանության այդ երեք թևերն ունեն իրավական կարգավիճակ, որտեղ էլ ամրագրվում են նրանց միջև փոխհարաբերությունների սկզբունքները: Այդ մարմինների ձևավորման գործընթացում կարևորվում է քաղաքացիների մասնակցությունը: Համաձայն ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի<sup>2</sup> ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Նշենք, որ պետական կառավարման ձևերին առնչվող թեման հատկապես արդիական է և առավել կարևորվում է հետխորհրդային երկրներում, քանի որ այստեղ անցումը հին պետական իշխանության համակարգից դեպի նորը, որը տեղի ունեցավ

<sup>1</sup> Պլատոն, «Երկեր չորս հատորով» հատոր IV, Պետություն», Երևան 2017, էջ 66

<sup>2</sup> ՀՀ Սահմանադրություն, Գլուխ 1, հոդված 2:

արմատական սոցիալական վերափոխումների միջոցով, անխուսափելիորեն հանգեցրեց նաև պետական կառավարման ձևերի փոփոխությանը:

Անդրադառնանալով հանրապետական կառավարման համակարգին, որը ժողովրդավարություն իրականացնելու հիմնական ձևն է համարվում և որտեղ իշխանությունը ձևավորվում է ժողովրդի անմիջական մասնակցությամբ՝ ազատ ընտրությունների միջոցով, նշենք, որ առանձնացվում են 3 տիպի՝ նախագահական, խառը կամ կիսանախագահական, խորհրդարանական կամ պառլամենտական կառավարման համակարգեր:

Նախագահական կառավարման համակարգը համարվում է երկմանդատ կառավարման համակարգ, քանի որ թե՛ նախագահը և թե՛ խորհրդարանն ընտրվում են ժողովրդի կողմից: Նախագահը պետության գլուխն է, գործադիր իշխանության ղեկավարը, նա է ձևավորում կառավարությունը, և կառավարությունը հաշվետու է նախագահին (ավելի շատ, քան պառլամենտին): Կառավարման նախագահական ձևին հատուկ է օրենսդիր և գործադիր իշխանությունների անկախ գործունեությունը, որի արդյունքում նախագահը իրավունք չունի ցրելու պառլամենտը, պառլամենտն էլ իր հերթին չի կարող անվստահություն հայտնել կառավարությանը: Սակայն առկա են վերահսկման և հավասարակշռման մեխանիզմներ, ինչպես, օրինակ, նախագահը կարող է վետո դնել պառլամենտի ընդունած օրենքների վրա, իսկ պառլամենտն էլ իր հերթին կարող է հայտարարել իմփիչմենթ՝ անվստահություն հայտնելու գործընթաց:

Նախագահական պետության դասական օրինակ է ԱՄՆ-ը: Լիազորությունների բաժանումն այստեղ կատարվում է ավանդույթի ուժով: ԱՄՆ Կոնգրեսը, որը հայտնի է գործադիր իշխանության նկատմամբ ունեցած իր մեծ ազդեցությամբ, հատկապես, երբ ընդդիմությունը մեծամասնություն է կազմում պալատներից մեկում կամ երկու պալատներում, կարող է զգալիորեն խոչընդոտել նախագահական<sup>3</sup> քաղաքականությանը: Թեև ԱՄՆ-ը նախագահական համակարգի ամենավառ օրինակն է, պետք է ասենք, որ նախագահական համակարգն ամենատարածվածն է Լատինական Ամերիկայում, Աֆրիկայի մեծ մասում և ոչ Բալթյան խորհրդային

---

<sup>3</sup> Սթիվեն Մ. Ֆիշ, Ավելի հզոր օրենսդիր մարմիններ, ավելի հզոր ժողովրդավարական երկրներ, ժողովրդավարության ամսագիր 17:1 (2006), 5-20:

հանրապետություններում: Այն նաև առկա է Ինդոնեզիայում, Ֆիլիպիններում և Հարավային Կորեայում:

Կիսանախագահական համակարգերում համատեղվում են թե՛ խորհրդարանական, թե՛ նախագահական համակարգերի հատկանիշները: Նախագահը և վարչապետը մասնակցում են երկրի կառավարմանը վերաբերող գործառույթներին: Նախագահն ընտրվում է ուղղակի ընտրության կարգով, իսկ վարչապետը և նրա աշխատակազմը պետք է հավանություն ստանան թե՛ նախագահի և թե՛ խորհրդարանի կողմից: Այս առումով նախագահի և խորհրդարանի լիազորությունների բաժանումը տարբեր երկրներում տարբեր է: Վարչապետը և կառավարությունը պատասխանատու են խորհրդարանի առջև, որը անվստահության քվեի միջոցով կարող է ստիպել նրանց հրաժարական տալ: Ի տարբերություն խորհրդարանական և բացարձակ նախագահական համակարգերի՝ կիսանախագահական համակարգում խորհրդարանի լիազորությունները սահմանափակ են:

Կիսանախագահական կառավարման համակարգը բաժանվում է երկու տիպի՝ նախագահական-խորհրդարանական և խորհրդարանական-նախագահական: Նախագահական-խորհրդարանականի այսինքն՝ նախագահակենտրոն համակարգի պարագայում նախագահն ավելի մեծ լիազորություններ ունի կառավարության ձևավորման գործում՝ կարող է ձևավորել կառավարություն, նշանակել վարչապետ, իսկ խորհրդարանը կարող է երկրորդ փուլում կառավարության հաստատման ժամանակ անվստահություն հայտնել կառավարությանը: Այսպիսի կարգ էր գործում Հայաստանի Հանրապետությունում մինչև 2005 թվականի սահմանադրական բարեփոխումները, որից հետո արդեն անցում կատարեցինք խորհրդարանական-նախագահական մոդելին, որտեղ նախագահը վարչապետ է նշանակում, բայց խորհրդարանական խումբ-խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո, պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձի:

Ֆրանսիայում, որը կիսանախագահական երկրի ցայտուն օրինակ է, նախագահն ավանդաբար զբաղվում է արտաքին քաղաքականության, պաշտպանության և անվտանգության հարցերով, իսկ ներքին քաղաքականության համար

պատասխանատու է վարչապետը: Այն դեպքում, երբ խորհրդարանը և նախագահը վերահսկվում են ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների կողմից, խորհրդարանը կարող է կտրուկ սահմանափակել նախագահի լիազորությունները: Սրա շնորհիվ հնարավոր է ստեղծել հակակշիռների և զսպումների արդյունավետ մեխանիզմ, սակայն այն կարող է նաև առաջացնել տարածայնություններով և իրարամերժ կարծիքներով լի կոնֆլիկտային հարաբերություններ:

Կիսանախագահական համակարգերը տարածում գտան հետխորհրդային երկրներում՝ Լեհաստանում, Ռումինիայում, Մոլդովայում, Մոնղոլիայում, Ռուսաստանում և Ուկրաինայում: Հետխորհրդային երկրների ժողովրդավարացման գործընթացների միջև գոյություն ունեցող հիմնական տարբերությունները հաճախ վերագրվում են կիսանախագահական համակարգի արդյունքում նախագահի և խորհրդարանի միջև ընթացող իշխանության պայքարին: Որոշ կիսանախագահական երկրներում ողջ իշխանությունը կենտրոնացած է նախագահի ձեռքում՝ օրենսդիր իշխանության հաշվին:

Կառավարման խորհրդարանական ձևի պարագայում խորհրդարանը ձևավորում է կառավարությունը, այսինքն խորհրդարանական ընտրություններից հետո ձայների մեծամասնություն ստացած քաղաքական ուժը կամ կուսիցիոն սկզբունքով մի քանի քաղաքական կուսակցություններ ձևավորում են կառավարություն, և կառավարությունն էլ իր գործունեության համար հաշվետու է խորհրդարանին: Կառավարման այս ձևում ևս առկա է նախագահի պաշտոն, որն ընտրվում է խորհրդարանի կողմից, հանդիսանում է պետության գլուխը, սակայն օժտված է զուտ ներկայացուցչական լիազորություններով օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում: Արդյունքում խորհրդարանը և գործադիր իշխանությունը միահյուսված են, ինչը նպաստում է քաղաքական կարգապահությանը և օրենսդիր ու գործադիր մարմինների համագործակցային հարաբերությունների ձևավորմանը: Վարչապետն ունի զգալի գործադիր լիազորություններ: Նա հաշվետու է օրենսդիր իշխանությանը, որը կարող է հեռացնել նրան պաշտոնից անվստահության քվեի միջոցով, եթե վերջինս զրկվի ձայների մեծամասնությունից, կամ եթե խորհրդարանը հավանություն չտա կառավարության քաղաքականությանը:

Համարվում է, որ գործադիր իշխանության ղեկավարի կախվածությունը խորհրդարանից երաշխավորում է խորհրդարանական համակարգի ճկունությունը և հարմարվողականությունը, ինչը բացակայում է նախագահական համակարգում: Ի տարբերություն մեծ իշխանությամբ օժտված նախագահի, ում քաղաքականությունը թեև զրկվում է ժողովրդի հովանավորությունից, սակայն որին խորհրդարանը և ժողովուրդը պարտավոր են հանդուրժել մինչև պաշտոնավարման սահմանված ժամկետի լրանալը, վարչապետի մանդատը կարող է ընդհատվել խորհրդարանի կողմից ցանկացած ժամանակ, եթե նրա քաղաքականությունը դառնում է անցանկալի: Անվստահության քվեն խորհրդարանական համակարգերում օրենսդիր իշխանության համար ծառայում է, որպես վերահսկողության հզոր գործիք:

Կան խորհրդարանական կառավարման (պառլամենտարիզմի) մի քանի տեսակներ: Խորհրդարանական ձևը գերակշռում է մասնավորապես, եվրոպական երկրների մեծ մասում: Միացյալ Թագավորությունը և Կանադան Վեթմինսթերյան մոդելի<sup>4</sup> ներկայացուցիչներն են, որի առանձնահատկություններից մեկն այն է, որ գործադիր իշխանությունը կազմվում է մեկ կուսակցությունից:

Պառլամենտարիզմի վառ օրինակ է նաև Գերմանիան, իսկ Շվեյցարիան պատկանում է հանրաքվեի վրա հիմնված խորհրդարանական երկրների տեսակին, քանի որ կարևոր քաղաքական որոշումներն այստեղ հաճախ ընդունվում են համաժողովրդական հանրաքվեի միջոցով:

«Ո՞վ պետք է կառավարի» հարցը փոխարինելով «Ինչպե՞ս պետք է կառավարել» հարցով, նշենք, որ Հայաստանի Հանրապետությունն այն քիչ պետությունների շարքին է դասվում, որտեղ գործել են կառավարման մի քանի<sup>5</sup>, իսկ այսօր արդեն անցում ենք կատարել՝ խորհրդարանական կառավարման համակարգին: Սակայն, եթե հարցը դիտարկենք հետխորհրդային երկրների փորձն ուսումնասիրելով, կտեսնենք, որ նմանատիպ պատկերը բնորոշ է հետխորհրդային մյուս երկրներին ևս,

---

<sup>4</sup> Վեթմինսթերյան մոդելը հանդիպում է Բրիտանական համագործակցության ներկա և նախկին անդամ երկրների մեծամասնությունում, օրինակ՝ Ավստրալիայում, Հնդկաստանում, Իռլանդիայի Հանրապետությունում, Ճամայկայում, Մալայզիայում, Նոր Զելանդիայում և Սինգապուրում:

<sup>5</sup> 1991-1995 թվականներին «հիբրիդային», 1995-2005 թվականներին կիսանախագահական, 2005-2015 թվականներին խորհրդարանական-նախագահական մոդելներ:



մասնավորապես, հարևան Վրաստանին: Այս պարագայում, անհրաժեշտություն է առաջանում քննարկել նախորդ կառավարման ձևերի անհամաձայնություններն ու հանգամանորեն ուսումնասիրել խորհրդարանական կառավարման համակարգի առանձնահատկությունները, դիտարկել դրանց բացերը ևս և հիմնավորել՝ արդյո՞ք ընտրված կառավարման համակարգը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հասարակական առանձնահատկություններին, և թե ինչ բարդություններ կարող են առաջ գալ, եթե դրանք առկա են:

Պայմանականորեն փուլերի բաժանելու դեպքում կունենանք հետևյալ պատկերը.

1. 1991-1995 թվականներին Հայաստանի Հանրապետությունում գործող պետական կառավարման համակարգը «հիբրիդային» բնորոշումն է ստացել: Համակարգը նման բնորոշում է ստացել, քանի որ այս ձևին հատուկ էին կառավարման, թե՛ Խորհրդային Միության տարիներին բնորոշ տարրեր, թե՛ նախագահական և թե՛ խորհրդարանական կառավարման համակարգի տարրեր: Մասնավորապես գոյություն ունեին նախագահի, փոխնախագահի և վարչապետի պաշտոններ, որոնցից առաջին երկուսը համապատասխանում են նախագահական կառավարման ձևին, երկրորդը՝ կիսանախագահականին և խորհրդարանականին:

1991 թվականին Գերագույն խորհուրդի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքը<sup>6</sup>, որով սահմանվեց ժողովրդավարական պետության համար պարտադիր՝ պետության գլխի պաշտոնը: Նույն օրենքի առաջին հոդվածով Հայաստանի Հանրապետության Նախագահը Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն էր և գործադիր իշխանության գլուխը: Սա նախագահական հանրապետությունում Նախագահի դասական կարգավիճակ է համարվում: Դիտարկելով նախագահ-կառավարություն, նախագահ-խորհրդարան, խորհրդարան-կառավարություն հարաբերությունները կարող ենք նկատել, որ դրանք չեն մեկնաբանվում կառավարման երեք տիպերից և ոչ մեկի համատեքստում, մասնավորեցնելով նշենք, որ հստակ սահմանված չէր բարձրագույն գործադիր իշխանության համակարգը: Նախագահը, (համաձայն հոդված 1-ի և հոդված

---

<sup>6</sup> ՀՀԳԽՏ, 1991/15:

8-ի) հանդիսանալով Հանրապետության գործադիր իշխանության գլուխը և ղեկավարելով կառավարության գործունեությունը, միևնույն ժամանակ, նշանակում և ազատում էր կառավարության նախագահին, նրա համաձայնությամբ նշանակում և ազատում էր կառավարության անդամներին և ընդունում կառավարության հրաժարականը: Նախագահի հետ ընտրվում էր փոխնախագահ, որը նախագահի հանձնարարությամբ կատարում էր նրա առանձին լիազորությունները:

Արդյունքում, գործադիր իշխանությունն ուներ երեք ղեկավար՝ Հանրապետության նախագահը, Հանրապետության փոխնախագահը և կառավարության նախագահը, որը սակայն չէր հանդիսանում կառավարության գործունեության ղեկավարը:

Գործադիր իշխանության այսպիսի համակարգը որոշակի հակասություններ էր առաջացնում օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև փոխհարաբերություններում: Այս պայմաններում, կառավարությունը քաղաքական պատասխանատվություն էր կրում խորհրդարանի առջև: Հանրապետության նախագահին Գերագույն խորհուրդը, պատգամավորների ձայների պարզ մեծամասնությամբ, կարող էր առաջարկել վերանայել կառավարության, դրա նախագահի կամ որևէ անդամի նշանակման հարցը: Համաձայն հոդված 8-ի «Հանրապետության նախագահի կողմից իր ընդունած որոշումը պաշտպանելու դեպքում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով դադարեցնել նշված պաշտոնատար անձանց լիազորությունները»: Միևնույն ժամանակ նախագահը ինչպես նաև գործադիր իշխանության ոլորտում նրա հանձնարարությունները կատարող փոխնախագահը կարող էին պաշտոնանկ արվել միայն այն դեպքում, եթե մեղավոր ճանաչվեին հայրենիքի դավաճանության, կաշառակերության կամ այլ հանցագործությունների կատարման մեջ (հոդված. 11, մաս 1):

«Հայաստանի անկախության մասին» հռչակագրով որդեգրված իշխանությունների տարանջատման ժողովրդավարական սկզբունքին հակասում էին Օրենսդիր և Գործադիր իշխանությունների հարաբերությունները կարգավորող որոշ իրավադրույթներ, ինչպես օրինակ սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահի և փոխնախագահի

պաշտոնները միաժամանակ թափուր մնալու դեպքում նախագահի պաշտոնը զբաղեցնում է Գերագույն խորհրդի նախագահը, դրա հնարավոր չլինելու դեպքում՝ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալը: Ակնհայտ է դառնում, որ այս դեպքում օրենսդիր և գործադիր իշխանությունների բարձրագույն պաշտոնները կենտրոնանում էին մեկ անձի ձեռքում, ընդ որում, առաջնային դեր էր ստանում Գերագույն խորհուրդը:

Իշխանությունների տարանջատման սկզբունքին հակասում էին նաև օրենքով Հանրապետության նախագահին և Գերագույն խորհրդին վերապահված դատական իշխանությանը հատուկ որոշ լիազորություններ, ինչպես օրինակ 8-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ նախագահը «վերացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության առանձին նախարարությունների, Հայաստանի Հանրապետության պետական կոմիտեների, մյուս գերատեսչությունների, տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների այն որոշումները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշումներին և իր հրամանագրերին»: Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն. «Նախագահի այն հրամանագրերը և կարգադրությունները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը և օրենքներին, սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա վերացվում են Գերագույն խորհրդի կողմից»: Հետևաբար ստացվում է, որ Սահմանադրական դատարանի եզրակացություններն ունեին ընդամենը խորհրդատվական բնույթ, իսկ վերջնական որոշումը կայացնում էր Գերագույն խորհուրդը:

Այդպիսով, 1991 թվականից մինչև 1995 թվականի Սահմանադրության ընդունումը գործում էր պետական կառավարման «հիբրիդային» բնույթ ունեցող մոդել: Այն տարբերվում էր հայտնի բոլոր կառավարման մոդելներից, միևնույն ժամանակ ներառելով այդ մոդելներին բնորոշ ամենատարբեր հատկանիշներ: Այդ մոդելի համար հատկանշական էին միջհամակարգային, այսինքն՝ իշխանության օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև և ներհամակարգային՝ գործադիր և դատական իշխանության համակարգերում առկա բազմաթիվ հակասություններ:

Ակնհայտ հակասություն կար Անկախության հռչակագրում ամրագրված իշխանությունների տարանջատման սկզբունքին: Հավասարակշռված չէին իշխանության տարբեր թևերի միջև հարաբերությունները, ձևավորված չէր զսպումների և հակակշիռների մեխանիզմը:

Խորհրդարանական կառավարման և խառը կառավարման հանրապետություններում այդպիսի հստակություն պահպանել հնարավոր չէ, և կարելի է խոսել միայն որոշակի սկզբունքի մասին:

Կարևոր ենք համարում նշել, որ պետական մարմինների միջև գործառույթների և իրավասության բաշխման տարբերակները ձևավորվում են պատմականորեն: Դրանք նույնը չեն, օրինակ, ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում: Խնդիրն այն է, որ պետք է պահպանվեն իշխանությունների տարանջատման ելակետային կողմնորոշիչները<sup>7</sup>: Սակայն Հայաստանի Հանրապետության անցումային շրջանի կառավարման մոդելում այդ սկզբունքը միշտ չէ, որ պահպանվում էր, իսկ որոշ դեպքերում նույնիսկ հակասում էին այդ սկզբունքին:

Անցումային ժամանակաշրջանում գտնվող մի շարք այլ երկրներում նույնպես ձևավորվել էին պետական կառավարման «հիբրիդային» ձևեր: Ընդհանրապես հետխորհրդային երկրների (օրինակ՝ Վրաստան) փորձն ապացուցում է, որ անցումային ժամանակաշրջանի կառավարման ձևը զուրկ է կայունությունից և հավասարակշռությունից: Սակայն չենք կարող չփաստել, որ Հայաստանի Հանրապետությունում կառավարման այդ մոդելը գործեց բավականին արդյունավետ: Հարց կարող է առաջանալ՝ որոնք են այդ՝ տեսականորեն անարդյունավետ մոդելի արդյունավետության պատճառները:

Նկատենք, որ Հայաստանի Հանրապետության անցումային շրջանի կառավարման մոդելն առանձնանում էր հզոր նախագահական իշխանությամբ: Կա ընդունված կարծիք, որ անցումային շրջանի տրամաբանությունը պահանջում է միանձնյա ղեկավարություն, որն ունակ է համախմբել իշխանությունը, դարձնել այն շարժուն և գործունակ: Այդ խնդիրը կարող է լուծել միայն նախագահը, որը կընդունի

---

<sup>7</sup> Гаганова Н. А. Концепция разделения властей и идея субсидиарности. // Государство и право, 2003, N 3, էջ 88-91:

որոշումներ և կապահովի դրանց կատարումը՝ հենվելով քաղաքական և պետական ինստիտուտների քաղաական և մասնագիտական ռեսուրսների վրա:

Գործադիր իշխանության ներհամակարգային հնարավոր հակասությունների չեզոքացման համար նպաստող հանգամանք էր նաև այն, որ 1991 թվականի նախագահական ընտրություններից հետո կառավարության նախագահի պաշտոնակատար նշանակվեց Հանրապետության փոխնախագահը, ինչի արդյունքում բացառվեց փոխնախագահի և կառավարության նախագահի միջև միջանձնային հակասությունների վտանգը: Դրական դեր ունեցավ նաև այն հանգամանքը, որ խորհրդարանը կազմավորվել էր ղարաբաղյան շարժման հզոր ազդեցության ներքո, ուստի օրենսդիր և գործադիր իշխանությունների քաղաքական նպատակներն այստեղ համընկնում էին: Այս հանգամանքը հնարավորություն տվեց խուսափելու օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև այն հակասություններից, որոնք կարող էին առաջանալ անկատար օրենսդրական լուծումների պատճառով: Այդպիսի իրավիճակին բնորոշ է ավտորիտարիզմի վտանգը. այս առումով՝ նախագահական իշխանությունն ինքնին վտանգավոր է: Սակայն ընդունված կարծիքի համաձայն, նշենք, որ նախագահական համակարգի գործունեությունը հսկայական չափով կախված է այդ պաշտոնում ընտրվածի անձնական հատկանիշներից<sup>8</sup>:

Այսպիսով, կառավարման նախագահական և խորհրդարանական ձևերի միաձուլմամբ գործող կիսանախագահական հանրապետությունում նախագահն ընտրվում է ընտրությունների միջոցով և համարվում է պետության գլուխը, սակայն բարձրագույն գործադիր իշխանությունը պատկանում է վարչապետի գլխավորությամբ կառավարությանը: Նախագահը պետք է համագործակցի խորհրդարանական մեծամասնության հետ և հաշվի առնի մեծամասնության կարծիքը կառավարություն ձևավորելիս: Նախագահական և կիսանախագահական կառավարման ձևերի տարբերությունն առավել ցայտուն է դառնում, երբ խորհրդարանի մեծամասնությունն ընդդիմադիր է նախագահին:

---

<sup>8</sup> Osiatynski W., A Note on General Wojciech Jaruzelski // EECR, 1994, Vol. 3, N 1, էջ 48:

Ինչպես արդեն նշեցինք, այս խնդիրը բնորոշ է հետխորհրդային երկրներին և ունի հանգամանորեն վերլուծությունների անհրաժեշտություն, ինչը պարզ է դառնում այդ երկրների շուրջ կատարած ուսումնասիրություններից: Այդ են վկայում Ղրղզստանում կիսանախագահական կառավարման համակարգից անցումը խորհրդարանական համակարգի, Վրաստանում 2013 թվականին տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների արդյունքում անցումը խորհրդարանական կառավարման համակարգին: Հարկ ենք համարում նշել, որ պետական կառավարման ձևն ազդեցություն է կրում ինչպես պատմական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, կրոնական համակարգերի, այնպես էլ պատմական ավանդույթներից, որի ցայտուն օրինակ է Մեծ Բրիտանիայում կառավարման միապետական համակարգը, ներքաղաքական պայքարի առանձնահատկություններից, հասարակության մեջ իշխող կրոնական արժեքների համակարգից, օրինակ՝ Վատիկանը:

## 2. 1995-2005թթ.կառավարման կիսանախագահական մոդել:

1995 թվականի հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ընդունվեց Հայաստանի 3-րդ Հանրապետության Սահմանադրությունը, համաձայն որի անցում կատարվեց կառավարման կիսանախագահական մոդելի:

Հիմնավորելու համար անհրաժեշտությունը կառավարման կիսանախագահական մոդելի անցմանը և հիմք ընդունելով առկա թե՛ քաղաքական և թե՛ սոցիալ-տնտեսական պայմանները, նշենք, որ կառավարման նախագահական ձևը ոչ արդյունավետ է գնահատվել Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի կողմից<sup>9</sup>: Բացառման սկզբով և առկա քաղաքական պայմաններից ելնելով նշենք, որ խորհրդարանական ձևը նույնպես ի վիճակի չէր ապահովել պետական իշխանության արդյունավետ կառավարումը, քանի որ կառավարման այս մոդելի արդյունավետության համար կարևոր և առանցքային նշանակություն ունի կուսակցությունների կայուն ու ձևավորված համակարգը:

---

<sup>9</sup> Նախագահական կառավարման ձևն առավել արդյունավետ է պետական կառուցվածքի դաշնային ձևի պայմաններում:

Կառավարման մոդելի արդյունավետությունն է, որ բացառում է կառավարական և խորհրդարանական ճգնաժամերը: Վ. Ստեփանյանը<sup>10</sup> պնդում է, որ գործնական առումով կիսանախագահական ձևն անցումային կոնկրետ պատմական պայմաններում կենսունակ այլընտրանք չունի<sup>11</sup>:

Հարկ ենք համարում նշել, որ նախագահի ինստիտուտը շարունակում էր մնալ ուշադրության կենտրոնում: Կարևոր խնդիր էր իշխանությունների երեք թևերի և նախագահի իշխանության միջև հավասարակշռության պահպանումը, այս հարաբերություններում զսպումների մեխանիզմի կիրառումը:

Մատնանշված խնդիրների իրագործմամբ էր պայմանավորված ՀՀ կիսանախագահական կառավարման մոդելի արդյունավետությունը և ժողովրդավարության սկզբունքներին համապատասխանության մակարդակը: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված Նախագահի լիազորությունների համաձայն՝ հստակ տարանջատվում էին.

1. պետության գլխի լիազորություններ,
2. օրենսդիր իշխանության լիազորություններ,
3. գործադիր իշխանության լիազորություններ,
4. դատական իշխանության լիազորություններ:

3. 2005 թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունների հիմնական ուղղություններից մեկն էր Սահմանադրությամբ ամրագրված կիսանախագահական կառավարման մոդելի կատարելագործումը:

Ինչպես նշում է Հ. Հակոբյանը, «հասարակությունը ստացավ մի Սահմանադրություն, որի հիմքում, անշուշտ, իշխանության թևերի հարաբերական անկախությունն է, սահմանադրական ինստիտուտների լիազորությունների ամբողջականությունն ու համարժեքությունը գործառույթներին<sup>12</sup>»:

<sup>10</sup> 1995 թվականին ՀՀ ԳԽ Սահմանադրական հանձնաժողովի նախագահի տեղակալ:

<sup>11</sup> Ստեփանյան Վ., Կառավարման խորհրդային ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն// Օրենք և իրականություն, 2003, N19-20, էջ 1-2:

<sup>12</sup> Հակոբյան Հ. Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում. Երևան, 2007, էջ 509:

Փոփոխությունների արդյունքում, համաձայն Սահմանադրության 74.1 հոդվածի, արձանագրվեց Հանրապետության Նախագահի՝ Ազգային ժողովն արձակելու լիազորության ծավալի էական սահմանափակումը, այսինքն՝ Հանրապետության Նախագահն այդ ոլորտում արդեն ընդհանրապես օժտված չէր որևէ հայեցողական լիազորությամբ. նա չէր կարող ինքնուրույն որոշում ընդունել Ազգային ժողովի արձակման մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Նախագահը կարող էր արձակել Ազգային ժողովը՝ Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ: Հատկանշական է, որ, ի տարբերություն առաջին մասի ձևակերպմանը («արձակում է Ազգային ժողովը»), երկրորդ մասում օգտագործվում է «կարող է արձակել» ձևակերպումը: Հետևաբար, այս դեպքում Հանրապետության Նախագահը կարող է նաև մերժել Ազգային ժողովի արձակման մասին առաջարկությունը:

Սահմանադրական փոփոխություններով նախատեսվեցին մի շարք նոր պետական մարմիններ և պետական պաշտոններ, որոնց ձևավորման լիազորությունը վերապահվեց խորհրդարանին կամ պարիտետային հիմունքներով՝ Հանրապետության Նախագահին և խորհրդարանին:

Փոփոխությունների արդյունքում Հանրապետության Նախագահի լիազորություններն էականորեն սահմանափակվեցին նաև կառավարության ձևավորման և հրաժարականի գործընթացներում: Համաձայն Սահմանադրության 55 հոդվածի 4-րդ կետի՝ Հանրապետության Նախագահը «Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին»: Պետք է նկատել, որ այսպիսի ձևակերպումն ապահովում է Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի լիազորությունների առավել հավասարակշռվածությունը:

Այսպիսով, կառավարման կիսանախագահական ձևի ուսումնասիրության արդյունքում, հասկանում ենք, որ կառավարման այս ձևի ներուժը բավարար չէր հայկական երկու պետությունների առջև ծառայած խնդիրների լուծման համար, քանի



որ փակուղիներ ստեղծելու միտումներ ուներ, որի պայմաններում կատարված փոփոխությունները չէին կարող ամբողջությամբ լուծել առաջ եկող խնդիրները, վերացնել կառավարման այդ ձևի թերությունները:

Ուստի անհրաժեշտություն ծագեց անցնել կառավարման այլ ձևի:

4. 2015 թ սահմանադրական բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետությունն անցում կատարեց կառավարման խորհրդարանական ձևին, որը այսուհետ, հաշվի առնելով պատմական ավանդույթները և քաղաքական մշակույթը, գտնվում է կայացման ու զարգացման փուլում, որին մանրամասնորեն կանդրադառնանք ստորև:

## **1.2 Օրենսդիր մարմնի կայացման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում. Ազգային ժողովի հիմնական գործառույթները**

Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա<sup>13</sup>:

Կառավարման նախկին ձևերում ժողովուրդը իշխանությունն իրականացնելու երկու հիմնական լծակ ուներ՝ խորհրդարանական և նախագահական ընտրությունները: 2015 թվականի Սահմանադրական բարեփոխումներից հետո պահպանվել է միայն խորհրդարանականը: Այսպիսով, եթե նախկինում քաղաքացիները կարող էին ընտրել և՛ գործադիր, և՛ օրենսդիր իշխանություն, ապա այս դեպքում կարող են ընտրել միայն օրենսդիր իշխանությանը, որը «օրենքներ ստեղծելու կամ արդեն իսկ ստեղծված օրենքների պահպանմանը հետևելու ...<sup>14</sup>» ներկայացուցչական մարմինն է և լիազորված է ժողովրդի փոխարեն ընտրել գործադիր իշխանությանը:

Հանդես գալով ժողովրդի շահերի պաշտպանությամբ՝ Ժան-ժակ Ռուսոն առաջադրում է հետևյալ գաղափարները. ժողովուրդն ինքնիշխան է, նրա իշխանությունն անօտարելի ու անբաժանելի է, օրենսդիր իշխանությունը պատկանում է

<sup>13</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 4:

<sup>14</sup> Монтескье Ш. Избранные произведения, М., 1955, с. 290:

ժողովրդին և կարող է պատկանել միայն նրան<sup>15</sup>: Հեղափոխական բնույթ ուներ Ռուսոյի այն միտքը, համաձայն որի՝ սուվերենը՝ ժողովուրդը, իրավունք ունի սահմանափակելու, փոխելու կամ վերացնելու գործադիր իշխանությունը, եթե վերջինս չի կատարում իր պարտականությունները<sup>16</sup>: Պետության կատարելագործման մեջ Ռուսոն կարևոր տեղ էր հատկացնում քաղաքական ու բարոյական առաքինություններով օժտված մարդկանց դաստիարակությանը:

Խորհրդարանը՝ Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովը<sup>17</sup>, պետական իշխանության օրգանական մասն է, և, որպես օրենսդիր մարմին, գերիշխող է օրենսդրական իր գործառույթով: Խորհրդարանի կողմից սահմանվում են պետական կառավարման հիմնական բաղադրիչները, դրանց կազմակերպման և գործունեության կարգը, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը: Ժողովրդի ձայների մեծամասնությամբ ձևավորված լինելու հանգամանքով պայանավորված՝ խորհրդարանն իրականացնում է հասարակական հարաբերությունների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների կարգավորման գործառույթը: Որքան ազատ, ժողովրդական կանոններին ու պահանջներին համապատասխան է ձևավորվում խորհրդարանը, այնքան մեծ է նրա ազդեցությունը երկրի հասարակական-քաղաքական գործընթացների վրա<sup>18</sup>:

Խորհրդարանական կառավարման համակարգը, որն առավել ժողովրդավարականն ու ներկայացուցչական է համարվում, ենթադրում է այնպիսի առավելություններ, որոնք չունեն կիսանախագահական կառավարման համակարգը, որը իր բոլոր առավելություններով հանդերձ թերի էր, քանի որ գործադիր իշխանության հիմնական գործող դերակատարը, կառավարությունը, ողջ ծավալով ինքնուրույն չէր կարող որոշել ներքին և արտաքին քաղաքականությունը, սակայն դրա համար կրում էր ուղղակի պատասխանատվություն: Գործնականում փաստացի իշխանությունը՝ հստակ

<sup>15</sup> Руссо Ж. Ж. Трактаты. М., Наука, 1969, с. 72.

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>17</sup> Խորհրդարանը տարբեր երկրներում տարբեր անվանումներ ունի, ինչպես՝ Մեծ Բրիտանիայում՝ պառլամենտ՝ Վերին պալատ(Լորդերի պալատ) և Ստորին պալատ (Համայնքների պալատ), Շվեդիայում՝ Ռիքսթագ, ՌԴ-ում՝ Դաշնային ժողով և այլն:

<sup>18</sup> Հակոբյան Հ. Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Եր., Տիգրան Մեծ, 2007, էջ 81:

լիազորություններով, այդ թվում՝ կառավարությունը կազմավորելու խնդիրը, կենտրոնացված էր Հանրապետության նախագահի ձեռքում, սակայն հիմնական պատասխանատվությունը շարունակում էր կրել կառավարությունը:

Այժմ այդ անհամամասնությունը պարզապես բացառվում է: Վարչապետը ոչ միայն ինքնուրույն հանդես է գալիս որպես բարձրագույն գործադիր իշխանության գլուխ, գործնականում իրացնում արտաքին և ներքին քաղաքականության առանցքային գործառույթները և անմիջականորեն ղեկավարում է կառավարությունը, նաև հանդես է գալիս որպես պետության քաղաքական և ռազմավարական կառավարման ուղղակի պատասխանատու:

Ասվածի համատեքստում անդրադառնալով նաև հանրապետության նախագահի ներկա կարգավիճակին՝ պետք է նշել, որ պետության գլխի՝ Հանրապետության նախագահի կարգավիճակն առայժմ համարժեք չի ընկալվում, և նույնիսկ զուգահեռներ են տարվում լիազորություններից զուրկ մի շարք երկրների համանման պաշտոնյաների հետ:

Սակայն կարևոր է փաստել, որ Սահմանադրությամբ Հանրապետության նախագահն օժտված է իր կարգավիճակին հարիր լիազորություններով, ինչպես՝ «Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը<sup>19</sup>»: Նկատենք, որ Սահմանադրության պահպանմանը հետևելը բնավ չի սահմանափակվում Սահմանադրական դատարան դիմելով: Այն ենթադրում է նաև միջազգային փորձին քաջածանոթ այնպիսի ինստիտուտների ներդրում, ինչպիսին է օրինակ սահմանադրական մշտադիտարկումը և այլն: Միայն այս սահմանադրական հիմնադրույթը հանրապետության նախագահին վերապահում է լրջագույն դերակատարում՝ սահմանադրական վերահսկողության, երկրում իրավունքի գերակայության և օրինականության երաշխավորման խիստ պատասխանատու ոլորտում:

2015 թ. Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների առանցքային հիմնահարցը թերևս կառավարման համակարգի

---

<sup>19</sup> ՀՀ Սահմանադրություն, 123-րդ հոդվածի 2-րդ մաս:

փոփոխությունն էր՝ կիսանախագահական կառավարման ձևից անցումը կառավարման խորհրդարանական մոդելին: Հայաստանում պետական կառավարման համակարգի իրականացման սահմանադրական կանոնների արմատական փոփոխությունի համար, բնականաբար, եղել են օբյեկտիվ սոցիալ-քաղաքական և պատմաիրավական որոշակի նախադրյալներ:

Ուսումնասիրելով հայոց պատմության ընթացքը՝ տեսնում ենք, որ ներկայացուցչական կառավարման որոշակի տարրեր Հայաստանում առկա են եղել դեռևս 4-րդ դարում, երբ թագավորի կամ հոգևոր առաջնորդի կողմից գումարվում էին ազգային-եկեղեցական ժողովներ, որոնց ներկայացված են եղել միջնադարյան հայ հասարակության բոլոր հիմնական խավերը: Դրանք ունեցել են իրավաստեղծ բնույթ ու համապատասխան լիազորություններ՝ ընդունելու օրենքի ուժ ունեցող աշխարհիկ և եկեղեցական համապարտադիր կանոններ, ուստի անվանվել են նաև օրենսդիր ժողովներ:

Հատկանշական է, որ այդ ժողովներում առկա են եղել որոշումների կայացման և դրանց վավերացման միջնադարյան իրականության համեմատությամբ ժողովրդավարական ընթացակարգեր:

Պատմական հաջորդ ժամանակաշրջաններին՝ միջնադարյան և նոր շրջանի հայ իրավաքաղաքական մտքի կարևոր դրսևորումներից մեկը խորհրդարանական կառավարման համակարգի տեսական հիմնավորումն էր: Սակայն պառլամենտարիզմի և խորհրդարանական կառավարման գաղափարն ինստիտուցիոնալ դրսևորում ստացավ միայն 19-20-րդ դարերում: Հենց այս ժամանակաշրջանում ձևավորվեցին ավանդական հայկական կուսակցություններն իրենց քաղաքական-գաղափարախոսական հիմնադրույթներով, ինչպես նաև Հայաստանի առաջին ու երկրորդ Հանրապետությունների խորհրդարանական կառավարման սահմանադրական համակարգերը:

Եվ վերջապես, 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի անկախության հռչակագիրը, որը, հանդիսանալով սահմանադրական կարևորագույն փաստաթուղթ, միաժամանակ նորագույն պատմական ժամանաշրջանում հայկական պառլամենտարիզմի և խորհրդարանական կառավարման իրավական և դոկտրինալ

ավանդույթների նորմատիվ աղբյուրն է: Անկախության հռչակագրով Հայաստանում ստեղծվեցին խորհրդարանական կառավարման համակարգ ձևավորելու սահմանադրաիրավական հիմքերը: Անկախության հռչակագրի<sup>20</sup> 3-րդ կետից ուղղակիորեն բխում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, հանդես է գալիս որպես ժողովրդի կողմից ընտրված և «ժողովրդի անունից հանդես գալու» բացառիկ իրավունք ունեցող բարձրագույն ներկայացուցչական միակ պետական ինստիտուտը: Հռչակագրի այլ կետերում ամրագրված են խորհրդարանական համակարգին բնորոշ այլ դրույթներ ևս:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը անկախության հանրաքվով կողմ քվեարկվեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու օգտին: 1991 թվականի նոյեմբերին Լևոն Տեր-Պետրոսյանը, հավաքելով ընտրողների 83% ձայները, ընտրվեց ՀՀ առաջին նախագահ: Սակայն հետաքրքիր է այն հանգամանքը, որ Հայաստանի անկախությունից ի վեր շուրջ 25 տարի գործող նախագահակենտրոն համակարգը հայ սահմանադրաիրավական իրականությունում չդրսևորեց իր ժողովրդավարական որակները՝ հանգեցնելով Նախագահի ինստիտուտի փաստացի մենիշխանության և քաղաքական համակարգի անձնավորման, ինչը բացասաբար անդրադառնավ հայաստանյան քաղաքական-իշխանական համակարգի հետագա ժողովրդավարացման, իշխանությունների իրական տարանջատման և որոշակիորեն ապակենտրոնացված կառավարման բնականոն իրականացման վրա:

Այսպիսով կարող ենք ենթադրել, որ ներկայումս գործող խորհրդարանական կառավարման համակարգն իրապես կարող է համարվել Հայաստանի երրորդ Հանրապետությունում երկար տարիներ գործած նախագահակենտրոն համակարգի արդյունավետ այլընտրանք:

Թեպետ պատմաիրավական և սահմանադրական առումներով խորհրդարանական կառավարման ձևն առավել արդյունավետ է և ժողովրդավարական (ինչի մասին վկայում է այն հանգամանքը, որ Եվրոպայի պետությունների մեծ մասում

---

<sup>20</sup> Հայաստանի անկախության հռչակագիր, 1990 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ գերագույն խորհուրդը ընդունել է Հայաստանի անկախության հռչակագիրը, որտեղ նշված էր, որ ՀԽՍՀ-ն կազմալուծվում է և ձևավորվում է նոր պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը:

գործում է խորհրդարանական կառավարման համակարգ), սակայն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պառլամենտական կառավարման մոդելի բնականոն գործառնումը և օրենսդիր մարմնի կայացման նախադրյալները կախված են նրանից, թե այն ինչպիսի սահմանադրական ամրագրում է ստացել յուրաքանչյուր երկրում, և ինչպիսին է այնտեղի քաղաքական պրակտիկան:

Բնականաբար, տարբեր պետություններում պառլամենտական կառավարումն ունի իր յուրահատկությունները և իհարկե՝ ռիսկային կանոնակարգումները: Այս համատեքստում բացառություն չէ նաև Հայաստանը, որը, չունենալով սահմանադրական պետականության և, առավել ևս, պառլամենտարիզմի բավարար փորձ, կանգնած է արմատական ինստիտուցիոնալ վերափոխման շեմին, որի սահուն ընթացքը պայմանավորված է նրանով, թե կառավարման մոդելի առումով ինչպիսի ռիսկեր կան փոփոխված Սահմանադրությունում: Այդ ռիսկերի բացահայտումը, վերլուծությունն ու լուծման ուղիների առաջադրումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն և կարող է նպաստել Հայաստանի նորաստեղծ խորհրդարանական համակարգի կայացմանն ու արդյունավետ գործունեությանը: Չէ որ, ինչպես արդեն նշել ենք, պետական մարմինների միջև գործառույթների և իրավասության բաշխման տարբերակները ձևավորվում են պատմականորեն, դրանք նույնը չեն, օրինակ, ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում:

Մեր կարծիքով, խորհրդարանական կառավարման ձևի բնականոն և արդյունավետ գործառնման, ինչպես նաև, որպես օրենսդիր մարմնի կայացված լինելու համար ամենակարևորն ընտրական համակարգի և խորհրդարանի կողմից գործադիր իշխանության ձևավորման խնդրի սահմանադրաիրավական կանոնակարգումն է, որպեսզի այս ամբողջ գործընթացում ապահովվի ժողովրդի ուղղակի և վճռական մասնակցությունը, որը հնարավոր է կայացած կուսակցական համակարգի առկայությամբ:

Այդ համատեքստում կարելի է առանձնացնել սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրված երկու դրույթ, որոնց ընթացիկ սահմանադրաիրավական կարգավորումը ունի ռիսկային տարրեր՝ նոր ձևավորվող խորհրդարանական կառավարման համակարգի ժողովրդավարական բնույթի և

կառուցակարգային՝ հավասարակշռվածության տեսանկյունից: Այդ դրույթներն են՝ համամասնական ընտրական համակարգի շրջանակներում գործող կայուն խորհրդարանական մեծամասնության ինստիտուտն ու վարչապետի ընտրության կարգը:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում համաձայն Հայաստանի Հանրապետությունում ձևավորված խորհրդարանական կառավարման մոդելի, խորհրդարանը գերակա և առաջնային նշանակություն ունի:

Ինչպես արդեն նշել ենք, ազգային խորհրդարանի ունեցած դերը վերլուծելու համար պետք է նախևառաջ սկսել երկրի սահմանադրական կառուցվածքի, ինստիտուտների միջև գոյություն ունեցող կառուցվածքային հարաբերությունների և նրանց տրված լիազորությունների ուսումնասիրությունից: Խորհրդարաններն ունեն որոշ ընդհանուր հատկանիշներ, որոնցից կարևոր են երեք հիմնական գործառույթները՝ ներկայացնել ժողովրդին, օրենքներ ստեղծել և իրականացնել վերահսկողություն: Այս գործառույթներն իրականացնելու համար խորհրդարանները կիրառում են տարբեր գործիքներ: Դրանցից մի քանիսը սահմանվում են տվյալ երկրի սահմանադրության մեջ, սակայն ավելի հաճախ դրանք ընդգրկվում են խորհրդարանի գործընթացները կարգավորող մշտական կանոնների մեջ:

Խորհրդարանի կողմից կամ խորհրդարանի ակտիվ մասնակցությամբ են ձևավորվում իշխանության գործադիր և դատական թևերը: Խորհրդարանի՝ Ազգային ժողովի կենտրոնական դերը պետական իշխանության համակարգում առավել արդիական է դարձնում այդ մարմնում կայուն մեծամասնության ապահովման հիմնախնդիրը, քանի որ խորհրդարանական կառավարման բոլոր մոդելների համար կարևորագույնը խորհրդարանական կայուն մեծամասնության ապահովման հիմնախնդիրն է: Բացի դրանից՝ խորհրդարանի կայունությունը պարտադիր նախապայման է գործադիր իշխանության ամբողջ համակարգի, ներառյալ՝ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ Կառավարության կայունության ապահովման համար:

Խորհրդարանական կառավարման ձևը նախընտրելի է, քանի որ այն նպաստում է ոչ անձնակենտրոն քաղաքական ու կուսակցական համակարգերի ձևավորմանն ու

արդիականացմանը, ապագայում անխուսափելի է դարձնում կառավարման առավել ժողովրդավար եղանակների ներդրման հնարավորությունները, բարձրացնում է հանրային իշխանության պատասխանատվությունը և գործունեության կանխատեսելիությունը: Բացի այդ, կիսանախագահական կառավարման ձևը ունի որոշակի ընգծված թերացումներ, մասնավորապես, եթե նախագահը չի ստանում պառլամենտի մեծամասնության լիարժեք աջակցությունը, ապա հարցականի տակ է դրվում իրեն սահմանադրությամբ վերապահված մի շարք կարևոր գործառույթների իրականացումը: Խորհրդարանի մեծամասնությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ պետության ղեկավարի կողմից արտաքին քաղաքականության ընդհանուր համակարգման, երկրի տարածքային ամբողջականության ու անվտանգության երաշխավորի իրացման հարցերում: Օրինակ, եթե խորհրդարանի մեծամասնությունը ի հակառակ նախագահի որոշի կրճատել ռազմական ծախսերը, կամ փոխի արտաքին քաղաքական առաջնահերթությունները, ապա նախագահի դերակատարումն այդ հարցերում կդառնա զուտ սիմվոլիկ և անիրագործելի: Դա կարտահայտվի նաև պետական բյուջեի և կառավարության ծրագրերի կատարման վրա:

Հայաստանի Սահմանադրությամբ նախատեսված ուժեղ վարչապետով խորհրդարանական համակարգում, բնականաբար, առաջնային նշանակություն է ստանում վարչապետի ընտրության և նշանակման կարգը: Այս հարցին անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովը, որը խորհրդարանական ընտրությունների կարևորագույն նպատակն է համարում ժողովրդի կողմից իր ներկայացուցիչների հնարավորինս համամասնորեն ընտրությունն ու վարչապետի ընտրությունը՝ իր քաղաքական մեծամասնությամբ, ինչին, թեկուզև անուղղակիորեն, պետք է մասնակցի ժողովուրդը:

Նախ, Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ Նախագահի կողմից անհապաղ վարչապետ է նշանակվում խորհրդարանական մեծամասնության կողմից առաջադրված ցանկացած թեկնածու՝ անկախ նրա՝ մեծամասնության ընտրական ցուցակը գլխավորելու կամ առնվազն դրանում ընդգրկված լինելու հանգամանքից: Այսինքն՝ վարչապետ կարող է նշանակվել նաև հանրությանն անհայտ կամ հասարակության վստահությունը չվայելող անձ, եթե



նրան առաջադրի խորհրդարանական մեծամասնությունը: Դրանով իսկ ժողովրդի ազդեցությունը գործադիր իշխանության ձևավորման վրա սահմանափակվում է միայն որևէ քաղաքական ուժի՝ կուսակցության՝ Կառավարության ձևավորման մանդատ տալով:

Ուսումնասիրելով այլ խորհրդարանական երկրների փորձը, տեսնում ենք, որ խորհրդարանական կառավարման համակարգերի զգալի մասում վարչապետ է նշանակվում խորհրդարանում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի ղեկավարը, կամ առնվազն պահանջվում է, որ վարչապետի թեկնածուն լինի խորհրդարանի անդամ: Օրինակ, ինչպես Հունաստանում, այնպես էլ Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ երկրներում պետության գլխի՝ համապատասխանաբար նախագահի կամ միապետի կողմից վարչապետ է նշանակվում խորհրդարանում մեծամասնություն ստացած քաղաքական ուժի ղեկավարը: Իսրայելում, Մալթայում, Թուրքիայում և որոշ այլ երկրներում սահմանված է, որ վարչապետ պետք է նշանակվի խորհրդարանի անդամներից մեկը:

Խորհրդարանական համակարգ ունեցող մի շարք երկրներում, ինչպես Շվեդիայում, Գերմանիայում, Իսպանիայում թեպետ ամրագրված չէ, որ վարչապետ պետք է նշանակվի խորհրդարանական ընտրություններում մեծամասնություն ստացած կուսակցության ղեկավարը, սակայն այդ երևույթը դարձել է սահմանադրական սովորույթ:

Հայաստանի Հանրապետության համար առավել կարևոր է, որ վարչապետը լինի այն կուսակցության ղեկավարը կամ առնվազն անդամը, ում կողմից ինքն առաջադրվում է վարչապետի պաշտոնին, հակառակ դեպքում նա քաղաքական պատասխանատվություն չի կրի այդ կուսակցության նախընտրական ծրագրի կատարման համար, ինչի արդյունքում՝ կարող է վարել քաղաքական իմաստով ոչ կանխատեսելի և ամբոխահաճո քաղաքականություն՝ թուլացնելով պետական կառավարման համակարգի հանրային վարկանիշը և ներքին միասնականությունը: Հատկանշական է, որ նոր Ընտրական օրենսգիրքը հետընտրական դաշինքների ձևավորման համար քաղաքական ուժերից պահանջում է համաձայնության գալ և ներկայացնել վարչապետի թեկնածու, որպեսզի Կենտրոնական ընտրական

հանձնաժողովը գրանցի համապատասխան դաշինքը: Ձայների մեծամասնությամբ խորհրդարան անցած կուսակցությունը կամ դաշինքը պետք է հստակ նշի վարչապետի իր թեկնածուին կամ Ընտրական օրենսգրքով սահմանի, որ կուսակցության կամ դաշինքի համապետական ցուցակի առաջին համարով նշված անձը այդ քաղաքական ուժի վարչապետի թեկնածուն է, որի դեպքում ընտրողները հստակ կիմանան, որ քվեարկելով այս կամ այն կուսակցության օգտին վարչապետ են ընտրում իրենց համար արդեն որոշակի անձի: Այս կերպ մեծանում է ինչպես ժողովրդի մասնակցությունը գործադիր իշխանության ձևավորման գործընթացին, այնպես էլ քաղաքական ուժերի և ապագա վարչապետի քաղաքական պատասխանատվությունը: Վերջինս, փաստորեն, խորհրդարանի հետ մեկտեղ ժողովրդից ստանում է ուղղակի լեգիտիմություն:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով: Այսպիսով լիովին բացառվում է սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը՝ վարչապետի, Հանրապետության նախագահի կամ Ազգային ժողովի նախագահի կողմից Ազգային ժողովի արձակման վերաբերյալ կամայական որոշումների ընդունման հնարավորությունը: Այդ հանգամանքը կարող է նպաստել պատգամավորների կողմից իրենց գործառույթների անկաշկանդ իրականացմանը և, միևնույն ժամանակ, Ազգային ժողովի հանրային հեղինակության բարձրացմանը:

Որպես ժողովրդավարական ուղենիշներով առաջնորդվող երկիր՝ Հայաստանի Հանրապետությունում առաջնահերթությունը տրվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրված և իրավական ճանաչում ստացած նորմերին, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Թեև համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 2-ի Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին, վերոնշյալը, չպետք է շփոթել ժողովրդի կողմից իշխանության իրականացման հետ, ժողովուրդը իշխանության ձևավորման միակ աղբյուրն է, սակայն ոչ երբեք դրա անմիջական իրականացնողը:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և

տեղական կառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա ( ՀՀ Սահմանադրության 1, 2, 3 ,4-րդ հոդվածներ):

Այս բաժանման հիմքում ընկած է այն գաղափարը, որ ժողովրդական զարգացման որոշակի ուղի անցած ցանկացած երկրի համար պետական իշխանությունն իր միասնականությամբ հանդերձ որոշակի լիազորություններ իրականացնելու համար տարանջատման և ժողովրդավարական սկզբունքներով մեկը մյուսին հավասարակշռելու անհրաժեշտություն ունի:

Ժողովրդավարական հասարակարգում Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, որտեղ ժողովուրդն անմիջականորեն իր ներկայացուցիչների միջոցով մասնակցում է պետական իշխանության իրականացմանը:

Ազգային ժողովն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունը: Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնող Ազգային ժողովին է վերապահված օրենքներ ընդունելու մենաշնորհը:

Խորհրդարանը կոլեգիալ մարմին է: Բոլոր որոշումներն ընդունվում են կոլեգիալ կարգով՝ կարծիքների բախմամբ և, իհարկե, մեծամասնության սկզբունքով (Սահմանադրության 62, 63, 71, 72, 83.1, 84-րդ հոդվածներ): Օրենսդիր մարմնում բացառվում է մեկ մարդու կամքը, ուստի օրենքի նախագծերը ներկայացվում, քննարկվում և հիմնավորվում են, որից հետո ընդունվում են մեծամասնության կողմ քվեարկելու արդյունքում և ստանում պարտադիր կատարման իրավական ուժ:

Խորհրդարանին է վերապահված պետական բյուջեի հաստատման մենաշնորհը: Սահմանադրությամբ ամրագրված այս կետի համաձայն, իրավա-քաղաքական առումով պետության ֆինանսական գլխավոր փաստաթուղթը քննարկում և հաստատում է օրենսդիր մարմինը: Ֆիսկալ և մոնետար քաղաքականության իրացման նպատակով՝ եկամուտների հավաքագրման մասին բոլոր օրենքները՝ հարկային, մաքսային, բանկային, ինչպես նաև վարկերի վավերացման, հետ կապված բոլոր օրենքներն ընդունվում են խորհրդարանի կողմից: Խորհրդարանը հաստատում է նաև կենտրոնական բանկի ծրագիրն ու տարեկան հաշվետվությունը:

Խորհրդարանը գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն ունեցող մարմին է: Խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում Խորհրդարանն իրավասու է հաշվետվություն պահանջել Կառավարությունից, և այս լիազորության կիրառումը կարող է հանգեցնել անգամ գործադիր իշխանության նկատմամբ սանկցիա կիրառելուն՝ Կառավարությանն անվստահություն հայտնելուն: Այն իրականացվում է վարչապետին անվստահություն հայտնելու մասին խմբակցությունների իրավասություններով, որի ընթացքում պետք է ներկայացվի նոր վարչապետի թեկնածությունը:

Ազգային ժողովի վերահսկողական գործառույթի իրականացման ընթացքում ստացված տեղեկությունները կարող են նպաստել Ազգային ժողովի կողմից իր բոլոր մյուս գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանը: Վերահսկողության ընթացքում ստացված տեղեկությունները կարող են օգտագործվել, մասնավորապես, Ազգային ժողովի կողմից իր օրենսդրական, ֆինանսական, կազմակերպչական և այլ գործառույթների իրականացման գործընթացներում: Ազգային ժողովի ֆինանսական գործառույթների հետ կապված երկու կարևորագույն լիազորություններն են պետական բյուջեի ընդունումը և պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը: Սահմանադրությամբ ամրագրված են ոչ միայն Ազգային ժողովի ֆինանսական գործառույթին առնչվող լիազորությունները, այլև դրանց իրականացման ընթացակարգերի հիմունքները:

Ամփոփելով նշենք, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում, խորհրդարանական կառավարման պահանջներին համապատասխան, ամրապնդվեց Ազգային ժողովի իրավական կարգավիճակը: Նույն փոփոխությունների արդյունքում արձանագրվեց, որ Ազգային ժողովը ոչ միայն օրենսդիր, այլ նաև ժողովրդի ներկայացուցչական մարմինն է՝ համաձայն 88-րդ հոդվածի , 1-ին մասի: Հենց Ազգային ժողովի՝ ժողովրդի միակ ներկայացուցչական մարմինը լինելու հանգամանքից են բխում Ազգային ժողովի սահմանադրորեն ամրագրված մի շարք նոր գործառույթներ: Այդ գործառույթներից առավել կարևորները սահմանվեցին նույն հոդվածի 3-րդ մասով. «Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն»: Միևնույն ժամանակ նախատեսվեց, որ

Ազգային ժողովն իրականացնում է նաև Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Այսպիսով, խորհրդարանը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը: Լինելով ժողովրդի կողմից ձևավորված մարմին՝ կատարում է հասարակության համար ընդհանուր կանոններ մշակողի, գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնողի, զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով անկախ կարգավորման մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողի դերը: Թե՛ խորհրդարանական մշակույթի ձևավորման համար, թե՛ օրենսդիր մարմնի կայացած լինելու համար էական նշանակություն ունի խորհրդարանի՝ քաղաքական գործունեության տեսանկյունից պրոֆեսիոնալ լինելը: Միայն պրոֆեսիոնալ խորհրդարանում է հնարավոր մշակել պառլամենտական ավանդույթներ, ձևավորել մշակույթ: Այն քաղաքական մտքի զարգացման, քաղաքական որոշումների կայացման, մեծամասնության կողմից սահմանված քաղաքական ծրագրերի և ռազմավարական նշանակության խնդիրների քննարկման ինստիտուցիոնալ հարթակ է:

Ազգային ժողովին հատուկ են բազմակարծությունը, քաղաքական բանավեճերը, մասնագիտական քննարկումները (լսումները, ոլորտային հանձնաժողովների նիստերը) ընդդիմության հետ երկխոսություն վարելու և քննարկվող հարցերին համակողմանի և հասարակության շահերն արտահայտող լուծումներ գտնելու գործելաոճը:

Օրենսդիր մարմնի կայացման համար առանձնահատուկ է խորհրդարանական մշակույթի անբաժանելի մասը կազմող խորհրդարանական բառապաշարի առկայությունը:

Ամբողջովին ժողովրդավարությանն անցնելուց հետո ազատ արտահայտվելու հնարավորություն ստանալով՝ խորհրդարաններում կիրառվող խոսքի ազատությունը երբեմն կարող է հասնել ծայրահեղ դրսևորումների:

Հարկ է նշել, որ անպատեհ արտահայտություններով և խորհրդարանականներին անհարիր բառապաշարով ելույթները հարվածում են խորհրդարանական մշակույթի ավանդույթին, ելույթ ունեցող պատգամավորի վարկանիշին, հասարակության մեջ անվստահություն են առաջացնում իրենց կողմից խորհրդարանի՝ որպես ինստիտուտի

նկատմամբ: Եվ չնայած Զ.Օրուելի «Նորալեզվի հիմնական նպատակը մտքի ծավալների նեղացումն է<sup>21</sup>» մտքին, նախընտրելի և թերևս պարտադիր է օրենսդիր մարմնում հնչեցնել կենդանի խոսք՝ բովանդակային առումով հստակ ասելիքով, բայց միևնույն ժամանակ պարտադիր է գրական բառամթերքի գործածումն ու խոսքի մշակույթի դրսևորումը, անշուշտ, հիշելով, որ խոսքային լավագույն ավանդույթներ և մշակույթ ունեցող ժողովուրդ ենք և որպես ժողովրդի ընտրյալ, պարտավորված ենք լեզվի բառամթերքի պաշարի լավագույն շերտերն օգտագործել:

Խրհրդարանների գործունեության իրավա-քաղաքական կարգավորման հիմնական մեխանիզմները ընթացակարգային նորմերի սահմանումներն են, որոնք ստանում են օրենսդրական կարգավիճակ: Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պարագայում այդ կարգավորումներն ամրագրված են «Ազգային ժողովի կանոնակարգ-օրենք»-ում, իսկ խրհրդարանական մարմինների (ԱԺ խորհուրդ, խմբակցություններ, մշտական հանձնաժողովներ, ենթահանձնաժողովներ, միջազգային պատվիրակություններ, բարեկամական խմբեր, միջխրհրդարանական հանձնաժողովներ, ժամանակավոր քննիչ հանձնաժողովներ և այլն) աշխատանքային այլ ընթացակարգերը կարող են սահմանվել նաև տվյալ խրհրդարանի կողմից որոշմամբ հաստատվող աշխատակարգերով:

Կառավարման ձևերի ժողովրդավարական լինելու առանցքային չափանիշը դրա համապատասխանությունն է իշխանությունների տարանջատման սկզբունքին, իսկ բովանդակային փաստացի չափանիշը՝ սահմանադրական մշակույթի և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման մակարդակը: Այս երկու չափանիշները մի կողմից հանդիսանում են պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգի ձևավորման և պետաիշխանական ինստիտուտների միջև լիրագորությունների համաչափ բաշխման նորմատիվ-կառուցվածքային հիմքը, իսկ մյուս կողմից հասարակության բնականոն կենսագործունեության նկատմամբ սահմանադրական-նորմատիվ կանխադրույթների ներգործության և անշեղ իրացման

---

<sup>21</sup> Զորջ Օրուել, «1984», Երևան «Անտարես», 2012, էջ 56

նախապայմանները: Դրանց խախտումներն անխուսափելիորեն հանգեցնում են պետական համակարգի կառուցակարգային ձևախեղումների:

## **ԳԼՈՒԽ 2 ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

### **2.1 Խորհրդարանական մշակույթի կայացման ինստիտուցիոնալ առանձնահատկությունները**

Խորհրդարանը ներկայացուցչական, կոլեգիալ մարմին է, այն իշխանության երեք թևերից միակն է, որը ձևավորվում է ընտրությունների միջոցով քաղաքացիների անմիջական մասնակցությամբ: Այստեղ կարևորվում և առանցքային նշանակություն է ձեռք բերում խորհրդարանի և քաղաքացիական հասարակության միջև ձևավորված երկխոսությունը, որի կայացվածության աստիճանից բխում է խորհրդարանական մշակույթը:

Ազգային ինքնությունն ու պատմական հիշողությունը անցյալ-ներկա-ապագա եռաչափության մեջ խորհրդարանի և քաղաքացիական հասարակության միջև երկխոսություն ձևավորող այն անկյունաքարային նշանակության հիմքերն են, առանց որոնց չի կարող ձևավորվել խորհրդարանական մշակույթ:

Խորհրդարանական համակարգը, խորհրդարանական մշակույթը քաղաքական երկխոսության, փոխհամաձայնության մշակույթն է՝ պայմանավորված օրենքի ուժով գործունեության կանոնակարգմամբ:

Խորհրդարանական համակարգում խորհրդարանական մշակույթի կայացման բաղադրիչն է Հանրապետության Նախագահի ինստիտուտը, որի գործառույթները խորհրդանշական են:

Խորհրդարանական մշակույթի կայացման հիմք են հանդիսանում քաղաքական էլիտայի, քաղաքացիական և ժողովրդավարական ինստիտուտների հարաբերությունները, այդ ինստիտուտների լեգիտիմության աստիճանը և լեգիտիմացման գործընթացը, հասարակության քաղաքական համոզմունքները, քաղաքական գիտակցության, քաղաքական գործընթացներին մասնակցության, դրանց ընկալունակության աստիճանը, և այս համատեքստում առանցքային դեր ունեցող կայացած կուսակցական համակարգի առկայությունը:



Ժողովրդավարական անցման պայմաններում պառլամենտական մշակույթը ձեռք է բերում նաև հանրային-քաղաքական համերաշխություն ապահովողի գործառույթ, ինչպես խորհրդարանում, այնպես էլ դրանից դուրս՝ ապահովելով կուսակցությունների ժողովրդավարական համախմբումը: Ելնելով օրինականության, խտրականության բացառման, բարեխղճության, անդամների շահերի ընդհանրության, անդամության կամավորության, ինքնակառավարման, հաշվետվողականության սկզբունքներից Հայաստանի Հանրապետությունում գործում են հասարակական կազմակերպություններ, որոնք հասարակական տարբեր շերտերի շահերի արտահայտողներն են, որ չեն իրականացնում քաղաքականություն, սակայն կարող են ազդեցություն ունենալ վերջինիս իրականացման վրա:

Կրկորվում է իշխանությունների թևերի միջև գործող զսպումների և հավասարակշռությունների համակարգը, այս առումով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 88-ի 3-րդ կետի, Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, որը դրսևորվում է Ազգային ժողովի կողմից պետական բյուջեի հաստատմամբ կամ մերժմամբ:

Այստեղ կարևորվում է համագործակցության մշակույթի առկայությունն այս երկու՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև՝ այսինքն առաջ է գալիս հանրային իշխանություն իրականացնող և հասարակության ու ժողովրդի շահերն իրացնողների շահերի ներդաշնակման գործընթացը:

Համաձայն թեմայի շուրջ կատարված ուսումնասիրությունների՝ այսօր կառավարման առավել արդիական և նախընտրելի ձևը ժողովրդավարականն է: Այսինքն՝ խորհրդարանական համակարգի ընդունումը առավել նախընտրելի է, որտեղ քաղաքական մշակույթի լավագույն ավանդույթների պահպանումը և կուսակցությունների գրաված դիրքը խորհրդարանում էական նշանակություն ունեն: Այս ամենի փաստարկումն ու հիմնավորումն է վերջին երկու տասնամյակների ընթացքում

բազմաթիվ երկրների կողմից կառավարման ժողովրդավարական մոդելի պաշտոնապես ընդունումը<sup>22</sup>:

ԽՍՀՄ-ի և ընդհանրապես սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզման հետևանքով վերջին 25 տարվա ընթացքում հանուն ժողովրդավարության տեղի ունեցող արմատական փոխակերպումները, այնուհանդերձ, նոր անկախացած երկրներում ժողովրդավարական քաղաքական մշակույթ չհաստատեցին<sup>23</sup>:

Քաղաքական մշակույթը տվյալ երկրի հասարակական կյանքում մարդկանց վարքի կերպի այն ամբողջությունն է, որը մարմնավորելով իրենց արժեքային պատկերացումները քաղաքականության աշխարհի նպատակների մասին, պահպանում և մշակում է ամրագրված նորմերն ու ավանդույթները պետության և հասարակության փոխհարաբերություններում<sup>24</sup>:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Հոդված 1-ի Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Ժողովրդավարության ժամանակակից ընկալումը, սակայն, դարձել է խիստ վիճահարույց հիմնախնդիր: Ավելին, մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ ժողովրդավարության կոչը հնչում է ամբողջ աշխարհում: Դեմոկրատիա կամ ժողովրդավարություն տերմինները հաճախ սխալ են մեկնաբանվում և օգտագործվում են միայն այն ժամանակ, երբ ամբողջատիրական ռեժիմն ու ռազմական բռնապետությունները հավակնում են ստանալ ժողովրդի աջակցությունը՝ քողարկվելով ժողովրդական պիտակներով:

Դեմոկրատիայի վերաբերյալ քաղաքական մտքի պատմության մեջ եղել են իրարամերժ կարծիքներ, դեռևս Պլատոնի և Արիստոտելի ժամանակներից, անտիկ Հունաստանում հայտնի էր դեմոկրատական քաղաքական համակարգը, որը, սակայն,

---

<sup>22</sup> Չկա ժողովրդավարության հստակ սահմանում, փոխարենը երկրները մի անորոշ համաձայնության են եկել ժողովրդարության նվազագույն հատկանիշների շուրջ, որոնք են՝ ազատ և թափանցիկ ընտրությունները, քաղաքական բազմակարծությունը, մեծամասնության սկզբունքի ժողովրդի համաձայնության վրա հիմնված կառավարությունը, օրենքի գերկայությունը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, անկախության և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը:

<sup>23</sup> Մարգարյան Մ.Մ., Քաղաքական լիդերություն, Երևան 2017, էջ 259:

<sup>24</sup> Տե՛սնույն տեղում, էջ 260:

և՛ Պլատոնը, և՛ Արիստոտելը համարում էին վատ կառավարման համակարգ: Սակայն քաղաքականության տեսության մեջ տարածված է այն կարծիքը, որ դեմոկրատիայից սարսափելի ուղեբեռ չկա աշխարհում, սակայն դրանից լավ մարդկությունը ոչինչ չի ստեղծել:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են ժողովրդավարության տարբեր կոնցեպցիաներ և ժողովրդավարական քաղաքական համակարգի տարբեր մոդելներ: Հիմնականում առանձնացվում են դեմոկրատիայի 2 մոդելներ՝ ուղղակի դեմոկրատիայի մոդել և ներկայացուցչական դեմոկրատիայի մոդել:

Ուղղակի դեմոկրատիայի պարագայում ժողովուրդը ոչ միայն իշխանության ձևավորման հիմնական աղբյուրն է, այլև դրա անմիջական իրականացնողը: Այսպիսի մոդելը հիմնականում գործել է անտիկ ժողովրդավարության պայմաններում, հին հունական պոլիսներում, երբ պոլիսի բոլոր քաղաքացիներն ուղղակիորեն մասնակցել են քաղաքական որոշումների ընդունման գործընթացին:

Ներկայացուցչական դեմոկրատիայի պայմաններում ժողովուրդն իր՝ քաղաքական որոշումներն ընդունելու իրավունքը լիազորում է իր կողմից ընտրված ներկայացուցիչներին, որոնք էլ ժողովրդի անունից իրականացնում են իշխանությունը տվյալ երկրում: Այսօր ավելի տարածված է ներկայացուցչական դեմոկրատիայի մոդելը:

Լուսավորչական և ռոմանտիզմի փիլիսոփայության, անգլիական և ֆրանսիական հեղափոխությունների և նոր ձևավորվող արդյունաբերական հասարակության ժամանակաշրջանից մինչև այսօր ժողովրդավարացման գործընթացը վերելքների և անկումների երկարատև ճանապարհ է անցել:

Սամուել Հանթինգթոնի դասակարգմամբ՝ ժողովրդավարացման «առաջին ալիքը» եղել է ամենից տևականը՝ 1828-1926 թվականները, գրեթե մեկ դար, որին, սակայն, հաջորդել են 1922-1942 թվականներին ժողովրդավարացման նահանջի տարիները: Այնուհետև 1943-1962 թվականներին «երկրորդ ալիքը» տևել է ավելի կարճ, և դարձյալ այդ ժամանակահատվածին հաջորդել են նահանջի տարիները: Քսաներորդ դարի ավարտը նշանավորվում է 1974-1990 թվականների երրորդ՝ հուժկու «ալիքով», որն արդեն կրում է համաշխարհային բնույթ: Մինչև 1991 թվականը ընդամենը տասնհինգ տարվա ընթացքում, ժողովրդավարությունը հաստատվում է Հարավային

Եվրոպայում, Լատինական Ամերիկայում, հասնում է Ասիա և կարողանում Սովետական Միությունում փլուզել սոցիալիստական կարգերը: Այդուհանդերձ, ժողովրդավարացման «երրորդ ալիքը», որն ըստ էության որպես անավարտ ծրագիր շարունակվում է առայսօր, հեղինակին լավատեսության առիթ չի տալիս, քանի որ գործընթացներին զուգընթաց՝ ուժեղանում են հակազդեցությունը և ժողովրդավարական գաղափարների նկատմամբ դիմադրությունը<sup>25</sup>:

Հայաստանի Հանրապետությունը թերևս առաջինն էր, որտեղ սկսվեց Խորհրդային ամբողջատիրական համակարգի փլուզումը և արդեն 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝ արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը և զարգացնելով դեռևս 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի առաջին Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, միևնույն ժամանակ խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծմանը, հռչակեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: Հետագայում արդեն անկախ Հայաստանի Հանրապետությունը, համաձայն 1995 թվականի Սահմանադրության հոդված 1-ի, ամրագրեց ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն լինելը:

Սակայն, ժողովրդավարությունը թերի է, երբ ձևավորված չէ քաղաքացիական հասարակությունը, չկա անկախ մամուլ, տարանջատված չեն իշխանության գործադիր, օրենսդիր և դատական ճյուղերը և չկա իշխանությանը հակակշիռ և վերահսկողական գործառույթներ ունեցող քաղաքական ընդդիմություն:

Ժողովրդավարությունը մեծամասնության կամքի իրագործումն է՝ փոքրամասնության իրավունքները հաշվի առնելով: Ընտրված կառավարություն կազմելու համար անհրաժեշտ քաղաքական ընթացակարգերի շուրջ բավարար համաձայնություն ձեռք բերելուց հետո, երբ որևէ կառավարություն իշխանության է

---

<sup>25</sup> Хантингтон С., Третья волна. Демократизация в конце XX века / М., 2003, с. 26.

գալիս ազատ և համաժողովրդական քվեարկության անմիջական արդյունքում, և երբ այդ կառավարությունը փաստացի օժտված է նոր քաղաքականություն մշակելու լիազորությամբ, և նոր ժողովրդավարությունից ծնունդ առած գործադիր, օրենսդիր և դատական իշխանություններն էլ ստիպված չեն իշխանությունը կիսել այլ կառույցների հետ, անցումը ժողովրդավարությանը համարվում է ավարտված:

Որպես սոցիալ-հոգեբանական կատեգորիա կարևոր է նաև իշխանությունն իրականացնողների լեգիտիմությունը, այս առումով ուշագրավ է պրոֆեսոր Մ. Մարգարյանի այն տեսակետը, որ լեգիտիմությունը քաղաքական զարգացման համար անհրաժեշտ որոշակիացված մակարդակ է, որտեղ քաղաքական համակարգի անդամներն այն ընդունում են որպես իրենց աջակցությանն արժանի փաստ<sup>26</sup>:

Այստեղ է, որ անհրաժեշտություն է առաջանում և պարզ է դառնում, թե ինչու են ժողովրդավարության կողմնակիցներն ու տեսաբանները պնդում, որ անհրաժեշտ է տարբերակել ժողովրդավարացում և ազատականացում հասկացությունները: Ոչ ժողովրդավարական միջավայրում ազատականացումը կարող է առաջ բերել քաղաքական և սոցիալական փոփոխությունների շփոթ, ինչպես օրինակ՝ լրատվամիջոցների ավելի մեղմ գրաքննություն, աշխատավորների ինքնուրույն նախաձեռնությունների կազմակերպման համար որոշ չափով ավելի մեծ հնարավորության ընձեռում, անհատներին իրավական երաշխիքների տրամադրում, օրինակ՝ անձի անձեռնմխելիություն, քաղբանտարկյալների մեծ մասի ազատ արձակում, աքսորյալների վերադարձ, թերևս նաև եկամուտների բաշխումը բարելավելուն ուղղված միջոցառումներ և որ առավել կարևոր է՝ ընդդիմության հանդուրժում:

Ժողովրդավարությունը տանում է ազատականացման, սակայն այն ավելի լայն և զուտ քաղաքական հասկացություն է: Ժողովրդավարացումը պահանջում է կառավարության ղեկին տիրանալու իրավունքի բաց վիճարկում, իսկ դա իր հերթին պահանջում է ազատ մրցակցային ընտրություններ, որոնց արդյունքում էլ որոշվում է, թե

---

<sup>26</sup> Մարգարյան Մ. Մ., Լեգիտիմության հիմնախնդիրը քաղաքական զարգացումներում, «21-րդ դար», 2007, N 3(17), էջ 159:

ով պետք է կառավարի: Հիմնվելով այս սահմանումների վրա՝ ակնհայտ է դառնում, որ ազատականացում կարող է լինել առանց ժողովրդավարացման:<sup>27</sup>

Գերմանացի փիլիսոփա Յուրգեն Հաբերմասի կարծիքով՝ ժողովրդավարության ուսումնասիրության բնագավառում այսօր դեռևս բանավեճի թեմա է, թե ինչպես համատեղել ազատությունն ու հավասարությունը, մեծամասնության և փոքրամասնության իրավունքներն ու շահերը, ազգային համաձայնությունը և բազմամշակութայնությունը: Հաբերմասի կարծիքով՝ ազատականներն իրավական դաշտում կարևորում և ինստիտուցիոնալացնում են բոլորի համար հավասար ազատությունները: Նրանց համար մարդու իրավունքը գերակա արժեք է ժողովրդավարության նկատմամբ, ինչպես նաև սահմանադրությունն առաջնահերթ է ժողովրդի հավաքական կամքի նկատմամբ:

Համաձայնենք ամերիկացի հասարակագետ և տնտեսագետ Յոզեֆ Շումպետերի ժողովրդավարության և ազգային համաձայնության կապի վերաբերյալ այն դիտարկմանը, որ կառավարման ժողովրդավարական եղանակը երբեք չի կարող ամբողջ թափով աշխատել, եթե ազգի ներսում առաջնահերթ հարցերի վերաբերյալ կատարաձայնություն<sup>28</sup>:

Սովորաբար ազգերը հասնում են ներքին համերաշխության և համաձայնության երկարատև, համատեղ կյանքի և պայքարի արդյունքում: Էթնիկ, մշակութային ազգերի պարագայում համախմբման գործոն են հանդիսացել ընդհանուր պատմությունը, լեզուն, մշակույթը, իսկ նոր ժամանակներում կազմավորված ժամանակակից ազգերի դեպքում սոցիոմշակութային բաղադրիչին գումարվում և կարևոր նշանակություն է ձեռք բերում **քաղաքական, քաղաքացիական մշակույթը**: Ցանկացած դեպքում ակնհայտ է, որ ժողովրդավարության ամրապնդման համար անհրաժեշտ է, հասարակության առաջնորդվելը բոլորի համար ընդհանուր արժեքային համակարգով և կարևոր է ընդհանուր նպատակ ունենալը: Երբ արժեքների շուրջ չկա համաձայնություն, ժողովրդավարությունը վտանգված է: Սակայն, եթե ժողովրդավարացման հաջողության

<sup>27</sup> «Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության խնդիրները», Խուան Զ. Լինց, Ալֆրեդ Ստեփան, 2011թ., էջ 21-22:

<sup>28</sup> Шумпетер Й., Капитализм, социализм и демократия, М., Экономика, 1995, с. 147.

համար կարևոր գործոն են ազգային միասնությունն ու համաձայնությունը, ապա ազգային համախմբման համար կարևոր նախապայման են սոցիալական արդարությունը և ապահովությունը: Երկրներում, որտեղ կա սոցիալական բևեռացում, խոցելի է դառնում ազգային համախմբվածությունը, և ժողովրդավարական գործընթացները բախվում են անհաղթահարելի արգելքների:

Գերմանացի իրավաբան և փիլիսոփա Կարլ Շմիդտի կարծիքով՝ միավորվելով ժողովրդավարությանը, ազատականությունը դավաճանել է ինքն իրեն և դրանով իսկ պարտվել: Ըստ Շմիդտի՝ ազատականները կապվել են բացարձակ ոչ ազատական և ըստ էության դեպի միատարր իշխանության տանող ժողովրդավարական ուժերի հետ: Նրա կարծիքով՝ հավասարությունը և հասարակության միատարրությունը ժողովրդավարության անհրաժեշտ նախապայմաններն են, իսկ միատարրություն՝ նշանակում է պատկանել նույն ազգին և ունենալ իրավունքներ՝ որպես տվյալ ազգ-պետության քաղաքացի: Գիտնականը նաև նշում է, որ միատարրությունը ժողովրդավարության պայմաններում իրավունքներով օժտում է ազգին և ոչ թե մարդկությանը<sup>29</sup>:

Ժողովրդավարությունը, փաստորեն, օժանդակում է ազգային հավաքականության ձևավորմանը և արդյունավետ գործում է միատարր ազգ-պետության պայմաններում, իսկ ազատականությունը, հակառակը՝ նպաստում է ազգային տարանջատմանը և համաշխարհայնացման գործընթացներին:

20-րդ դարը հարստացրեց դեմոկրատիայի տեսությունը: Դեմոկրատիայի հիմնախնդիրներով զբաղվող տեսաբաններից Ռ. Դալը առանձնացրել է այն նվազագույն պահանջները, որոնք պետք է բավարարի համակարգը՝ դեմոկրատական կոչվելու համար.

1. Կառավարության որոշումների նկատմամբ վերահսկողությունը սահմանադրությունը դնում է ընտրովի պաշտոնատար անձանց վրա,
2. Այդ պաշտոնատար անձինք պարբերաբար ընտրվում են արդար

---

<sup>29</sup>Шмитт К. //www.litres.ru/karl-shmitt/gosudarstvo-i-politicheskaya-forma/.

անցկացվող ընտրություններում, որոնք հնարավորինս բացառում են ամեն տեսակ հարկադրանք,

3. Գործնականում ողջ չափահաս բնակչությունն իրավունք ունի ընտրել պաշտոնատար անձանց,

4. Քաղաքացին իրավունք ունի հավակնել ընտրովի պաշտոնի,

5. Քաղաքացիներն իրավունք ունեն արտահայտել իրենց տեսակետները՝ չվախենալով դրանց համար հալածանքների ենթարկվելուց,

6. Քաղաքացիները այլընտրանքային աղբյուրներից տեղեկատվություն ստանալու իրավունք ունեն: Տեղեկատվության այլընտրանքային աղբյուրները պաշտպանվում են օրենքով,

7. Քաղաքացիներն իրավունք ունեն ստեղծելու ազատ միավորումներ և կազմակերպություններ, այդ թվում՝ քաղաքական կուսակցություններ և միևնույն շահեր ունեցող խմբեր<sup>30</sup>:

Միաժամանակ, դեմոկրատիայի մասին խոսելիս անհրաժեշտ է շեշտել այն փաստը, որ այն միատարր չէ, տարբեր է և՛ ինստիտուտներով, և՛ ավանդույթներով, և՛ առկա քաղաքական մշակույթով: Սա է պատճառը, որ այս խնդրով զբաղվող տարբեր մտածողներ առաջ են քաշել և դրական, և բացասական տարբեր տեսություններ, ընդհուպ, կարելի է հիշատակել Միացյալ Թագավորության նախկին վարչապետ Ուինսթոն Չերչիլի հետևյալ խոսքերը. «Դեմոկրատիան՝ կառավարման վատագույն ձևն է, եթե չհաշվենք մնացածը»:

Ուսումնասիրելով դեմոկրատիայի տեսությունը, տեսնում ենք, որ արդեն դասական դարձած լիբերալ դեմոկրատիայի մոդելի տեսաբանները՝ Հոբսը, Լոքը, Մոնտեսքյոն, Մեդիսոնը, պետության գլխավոր գործառույթը համարում էին քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Այս տեսակետի հիման վրա հետագայում զարգացավ լիբերալիզմի տնտեսական դոկտրինը, ըստ որի՝ տնտեսական հարցերում պետությունը պետք է լինի «գիշերային պահակ» /Ա. Սմիթ/ և թողնի, որ գործեն շուկայի ինքնակարգավորիչ մեխանիզմները: Այսինքն սովերենությունը

---

<sup>30</sup> Քաղաքագիտություն, Հ. Մանուչարյան, Երևան, 2006թ., էջ 355-386:



ժողովրդինն է, բայց ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ընտրված ներկայացուցիչների միջոցով: Այդ պատճառով էլ հարկավոր է սահմանափակել և հավասարակշռել իշխանությունը: Այդ խնդիրը պետք է լուծի իշխանությունների տարանջատման սկզբունքը:

Միանգամայն հակադիր տեսակետների կրողներ էին Կառլ Մարքսը և նրա համախոհները<sup>31</sup>: Դեմոկրատիայի մարքսիստական մոդելի կողմնակիցները ելակետ էին ընդունում այն դրույթը, որ միայն ամբողջովին ազատ քաղաքացին կկարողանա ռեալիզացնել իր իրավունքները և ունենալ քաղաքական որոշիչ մասնակցություն: Այս ամենին կարելի է հասնել միայն մարդկանց շահագործումը դադարեցնելուց հետո: Մարքսիստների համար առաջնային էր հավասարությունը: Քաղաքական հավասարությունը չէր կարող բերել իսկական հավասարության, եթե այն զուգորդված չէր սոցիալական հավասարությամբ: Ընդհանրապես Մարքսը գտնում էր, որ մարդիկ պետք է հասնեն ինքնակազմակերպման այն մակարդակին, երբ պետության իշխող ձեռքի կարիքը այլևս չի լինի<sup>32</sup>:

Բոլորի համար դեմոկրատիան կամ մասնակցային դեմոկրատիան փորձում է վերադառնալ ուղղակի դեմոկրատիայի իդեալին՝ ձգտելով մեծացնել մարդկանց ներգրավվածությունը պետական և ոչ պետական կառույցներում որոշումների ընդունման գործընթացին: Սակայն ժողովրդավարության նման տարբերակը կարող է կիրառելի լինել միայն կոմպետենտ և տեղեկացված քաղաքացիների առկայության պարագայում: Իսկ քաղաքացիական ներգործության միջոցներից հեղինակներն առանձնացնում են հանրաքվեները, քաղաքացիական նախաձեռնությունները և այլն:

Կրկին անդրադառնալով Ռ. Դալին նշենք, որ նրա անվան հետ է կապվում պոլիարխա՝ շատերի, բայց ոչ բոլորի կառավարում տերմինի օգտագործումը: Այս հասկացությունն օգտագործվում է ցույց տալու համար ժամանակակից պլուրալիզմը և քաղաքական ինստիտուտների կարողությունը, համակարգել և համաձայնեցնել տարբեր խմբերի շահերը՝ առանց զրկելու նրանց ինքնուրույնությունից:

<sup>31</sup> Категории политической науки. Мельвиль А.Ю. и др, М.: МГИМО, РОССПЭН, 2002. стр 223.

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղում:

Այսպիսով՝ փորձեցինք ցույց տալ ժամանակի ընթացքում դեմոկրատիա հասկացության կրած փոփոխությունները և դեմոկրատիայի ժամանակակից պահանջները: Մոդելներն, իհարկե, շատ են, բայց անդրադարձանք նրանցից մի քանիսին: Դժվար է գտնել իդեալական կամ իդեալին մոտ համընդհանուր մոդել: Յուրաքանչյուր երկրում դեմոկրատիան ստանում է տվյալ երկրին, բնակչության քաղաքական մշակույթին բնորոշ դիմագիծ:

Հիմնավորելով վերոհիշյալ այն միտքը, որ ժամանակակից աշխարհում բազմաթիվ երկրներ փորձում են անցում կատարել ժողովրդավարությանը, նշենք, որ ըստ Freedom House կազմակերպության հաշվարկների, ներկայումս ավելի քան 121(193-ից) երկրներ ժողովրդավարական են: Ժողովրդավարությունը կենսունակ է և գաղափարախոսական այլընտրանք չունի: Այն հաղթել է բոլոր մրցակիցներին՝ համոզիչ կերպով ցույց տալով իր առավելությունը: Ինչպես նշել է մարդու իրավունքների գծով ճանաչված ամերիկացի մասնագետ Լերրի Դայմոնդը՝ աշխարհում չկա պետական կառավարման մի ուրիշ մոդել, որն այնքան լայն նորմատիվային գրավչություն և լեգիտիմություն ունենար, ինչպես ժողովրդավարությունը<sup>33</sup>:

Ա. Պշևորսկին ընդգծում է, որ Եվրոպայում այժմ ոչ ժողովրդավարական քաղաքականությունը տեղ չունի, ժողովրդավարական ինստիտուտներն անհրաժեշտ պայման են, որպեսզի որևէ երկիր միանա եվրոպական հանրությանը:

Բրիտանացի փիլիսոփա Կառլ Պոպերը պնդում է Պլատոնից եկող «Ո՞վ պետք է կառավարի» հարցը բոլորովին ուրիշ հարցով փոխարինելու անհրաժեշտությունը. «Կառավարման, ո՞ր ձևն է հնարավորություն տալիս ձերբազատվելու վատ կամ պարզապես ոչ բանիմաց կառավարությունից»: Այս տեսանկյունից ժողովրդավարությունը կառավարման միակ ձևն է, որը սահմանափակում է պետությանը, պաշտպանում անհատին՝ հիմք ընդունելով միայն օրենքի գերակայությունը:

Ի՞նչ է ի վերջո ժողովրդավարությունը: Այս հարցին և՛ քաղաքական մտքի պատմության մեջ, և՛ հասարակական-քաղաքական պրակտիկայում միանշանակ

---

<sup>33</sup> Даймонд Л., Глобальная перспектива, 2000г.

պատասխան ակնկալել չենք կարող: Ասվածի լավագույն ապացույցը կարող է լինել պատմական էքսկուրսը դեմոկրատիայի ընկալման տեսանկյունից՝ սկսած Պլատոնից և Արիստոտելից մինչև մեր օրերը: Ժողովրդավարությունը, ձևավորվելով իբրև հասարակական կյանքի ձև, այսինքն՝ իբրև ամիջական ժողովրդավարություն, այնուհետև փոխակերպվելով կառավարման ձևի, այսօր արդեն տարածվում է պետության բոլոր ձևերի վրա, որոնցում իշխանության կազմակերպման բարձրագույն դերը վերապահված է ժողովրդին: Դրա հետ մեկտեղ ժողովրդավարությունն այսօր բնորոշվում է իբրև պետության ձև, որում գերակայությունը տրվում է ժողովրդի հավաքական կամքին:

Պատմությունը հաստատեց, որ մարդկային քաղաքակրթության առաջընթացի հիմքում ընկած է ժողովրդավարության ճանապարհով զարգացումը: Դեմոկրատիան<sup>34</sup> քաղաքական իշխանության ժողովրդական կամքի արտահայտման ձևն է, հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական կոնֆլիկտները հաղթահարելու միակ հնարավորությունը:

Արդի ժողովրդավարության համատեքստում իշխանության նկատմամբ հասարակության վերաբերմունքը բնութագրվում է ոչ միայն նրան աջակցություն ցուցաբերելով և համերաշխությամբ, այլև մեծ մասամբ անհամաձայնությամբ, բողոքով, դիմադրությամբ:

## **2.2 Խորհրդարանական մշակույթի ձևավորման իրավաքաղաքական հիմքերը**

Իրավական պետության կառուցման գործընթացում կարևոր նշանակություն ունի տվյալ պետությանը առավել համապատասխանող պետական կառավարման մոդելի ընտրությունը:

Իրավագետների կողմից << պետական կառավարման ձևի համալիր ուսումնասիրություններ հիմնականում չեն իրականացվել: Որոշ հետազոտություններ

---

<sup>34</sup> δὴ μοκρατία՝ ժողովրդի իշխանություն, δῆμος- ժողովուրդ և κράτος իշխանություն), քաղաքական ռեժիմ, որի հիմքում ընկած է գործընթացի կամ նրա որևէ մակարդակի վրա մասնակիցների հավասար մասնակցությամբ խմբային որոշումների կայացման ընթացակարգը:

հիմնականում ուշադրություն են դարձրել ՀՀ պետական կառավարման համակարգի առանձին ինստիտուտների՝ նախագահի, խորհրդարանի, դատական համակարգի իրավական կարգավիճակի գիտական վերլուծությանը կամ Հայաստանի Հանրապետության կառավարման առանձին մոդելների էական հատկանիշների բացահայտմանը:

Անկախությունից հետո անցած տարիների ընթացքում ՀՀ կառավարման ձևը փոփոխվել է արդեն չորս անգամ.

1. 1991 թվականին սահմանադրական օրենքների հիման վրա խորհրդային կառավարման ձևից անցում կատարվեց կառավարման մի նոր ձևի, որն առավել խոսուն կարելի է բնորոշել որպես «հիբրիդային», քանի որ ներառում էր ինչպես խորհրդային, այնպես էլ նախագահական և կիսանախագահական կառավարման մոդելներին բնորոշ տարրեր:

2. 1995 թվականի Սահմանադրությամբ ձևավորվեց խիստ նախագահակենտրոն կիսանախագահական կառավարման մոդելը:

3. 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում էականորեն սահմանափակվեցին ՀՀ նախագահի լիազորությունները և ընդլայնվեցին խորհրդարանի և Կառավարության իրավասությունների շրջանակները. արդյունքում ձևավորված կիսանախագահական կառավարման մոդելը կարելի է բնորոշել արդեն որպես խորհրդարանական-նախագահական:

4. 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում 2018 թվականին անցում կատարվեց խորհրդարանական կառավարման մոդելին:

Հանրապետության նախագահի իրավական կարգավիճակի հիմունքների և լիազորությունների համակարգի վերլուծության արդյունքում գալիս ենք եզրահանգման, որ նախագահի լիազորությունները, խիստ սահմանափակված են, ավելին, Սահմանադրությամբ ամրագրված են այդ սահմանափակ լիազորությունների իրականացման այնպիսի ընթացակարգեր, որոնք նախագահին փաստացի զրկում են սահմանված լիազորություններն ինքնուրույն իրականացնելու հնարավորությունից: Այսպիսով կարելի է փաստել, որ Հանրապետության նախագահի մասնակցությունը պետական կառավարման ընթացակարգերին զուտ ձևական բնույթ է կրում:

Կիսանախագահական կառավարման համակարգի փոխարինումը խորհրդարանական կառավարման մոդելով բավականին լայն հնարավորություններ է ստեղծել ՀՀ դատական իշխանության գործունեության օբյեկտիվության, արդյունավետության և իշխանության տվյալ թևի անկախության մակարդակը որակապես բարձրացնելու համար: Սահմանադրությամբ արդեն ամրագրված են դրա համար անհրաժեշտ հիմքերը:

Ըստ էության, Հանրապետության նախագահին որևէ գործառույթ վերապահված չէ: Նա պարզապես դատավոր է նշանակում Ազգային ժողովի կողմից ընտրված անձին:

Այս առումով պետք է համաձայնվել Վ. Ե. Չիրկինի այն դիտարկման հետ, որ անցումային ժամանակաշրջանի պետության կառավարման համակարգը կրում է «հիբրիդային» բնույթ և ներառում է տարբեր ձևերին հատուկ բազմազան հատկանիշներ<sup>35</sup>:

Իրավաքաղաքական առումով խորհրդարանական մշակույթի ձևավորման համար կարևոր պետական կառավարման ձևի վրա ազդեցություն են գործում պատմական ավանդույթները (միապետությունը Մեծ Բրիտանիայում), ներքաղաքական պայքարի առանձնահատկությունները (կառավարման ձևի բազմակի վերափոխումները Աֆրիկայի մի շարք երկրներում), հասարակության մեջ իշխող կրոնական արժեքների համակարգը (աստվածապետությունը Իրանում)<sup>36</sup>:

Խորհրդարանական համակարգի կամ պառլամենտարիզմի ակունքները կարելի է գտնել բուրժուական կամ ֆեոդալական ժամանակներից:

Պատմական այդ ժամանակաշրջանում անհրաժեշտություն առաջացավ ներդնել պետական կառավարման ավելի ժողովրդավարական ձևեր, քանի որ նախկին համակարգն արդեն իսկ սպառել էր իրեն:

Իրավաբանական հանրագիտարանում պառլամենտարիզմը (անգլերեն parliamentarianism) ներկայացվում է որպես գերագույն պետական իշխանության կազմակերպման և գործունեության համակարգ, օրենսդիր և գործադիր իշխանությունների գործառույթների որոշակի բաժանմամբ՝ խորհրդարանի արտոնյալ

<sup>35</sup> Чиркин В.Е. Основы сравнительного правоведения. М, 1997, էջ 17:

<sup>36</sup> Տե՛ս, օրինակ, Конституционное право зарубежных стран, էջ 141:

կարգավիճակի պայմաններում: Խորհրդարանական համակարգում, որպես կանոն, կառավարությունը, կազմավորվում է խորհրդարանի կողմից՝ այստեղ մեծամասնություն ունեցող կուսակցության անդամներից և պատասխանատու է նրա առջև: Այսպիսով, խորհրդարանական համակարգ նշանակում է ընտրված օրենսդիր մարմնի առաջատար դերակատարություն պետական իշխանության և կառավարման համակարգում<sup>37</sup>:

Քաղաքագիտական և իրավաբանական գրականության մեջ խորհրդարանական համակարգը տարաբնույթ մեկնաբանություններ ունի: Այն դիտվում է իբրև իշխանության կազմակերպման համակարգ՝ իշխանությունների տարանջատման պարագայում<sup>38</sup>:

«Խորհրդարանական համակարգը պետական իշխանության կազմակերպման հատուկ համակարգ է, որը կառուցվածքային և գործառույթային տեսանկյունից հիմնված է իշխանությունների բաժանման, խորհրդարանի դերի գերակայության պայմաններում օրենքի գերակայող սկզբունքների վրա և ուղղված է սոցիալական արդարության և իրավակարգի հաստատմանն ու զարգացմանը<sup>39</sup>»:

Համաձայն այս տեսակետների՝ կարելի է եզրահանգել, որ ժողովրդի ինքնիշխան կամքով ձևավորված բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ Ազգային ժողովը, իրականացնում է օրենսդրական գործունեություն՝ վերահսկելով գործադիր մարմնին՝ Կառավարությանը, և երաշխավորելով քաղաքացիների պաշտպանությունը: Այստեղ խորհրդարանին վերապահված է քաղաքական և գաղափարախոսական էական դեր:

Խորհրդարանական համակարգը կարող է գոյություն ունենալ միայն խորհրդարանի գերիշխող դերի պայմաններում, քանի որ կառավարման այս ձևին հատուկ է «օրենսդիր մարմնի առավելությունը պետական մյուս մարմինների նկատմամբ<sup>40</sup>» կամ «Խորհրդարանական համակարգը պետական կառավարման մի ձև է, որին հատուկ է պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում խորհրդարանի գերիշխող դերը, վերջինիս վերահսկողությունը գործադիր իշխանության

<sup>37</sup> Юридическая энциклопедия, М., 1997, с. 313.

<sup>38</sup> Большой юридический энциклопедический словарь, М., 2005, с. 425.

<sup>39</sup> Парламентское право России, М., 1999, с. 5.

<sup>40</sup> Баглай М. В. Конституционное право РФ, М., 1995, с.337.

նկատմամբ, օրենսդիր և գործադիր աշխատանքի բաժանումը, պատգամավորների գերակա կարգավիճակը և ընտրողներից նրանց իրավաբանական անկախությունը»:<sup>41</sup>

Ըստ Ջ. Լոքի՝ Սահմանադրական պետությունում կարող է լինել ընդամենը մեկ գերագույն իշխանություն՝ օրենսդիր իշխանությունը, որին պետք է ենթարկվեն մնացած բոլորը<sup>42</sup>, սակայն այս տեսությունը վիճելի է այն առումով, որ հակասում է ժողովրդավարական պետության գերագույն իշխանությանը բացառման սկզբունքին, որի համաձայն՝ ժողովրդավարությունն ինքնին ենթադրում է հավասարություն իշխանության թևերի միջև:

Խորհրդարանական համակարգի բազմակողմանիությունն ու սոցիալական արժեքների որոշակի սանդղակը բնութագրելով՝ ռուս քաղաքագետը նշում է, որ այստեղ տիրապետում է օրենքը, հաստատվել է իրավունքի գերակայությունը և իշխանությունների տարանջատման սկզբունքը, իսկ քաղաքացիական հասարակությունը բնութագրվում է ժողովրդավարությամբ և քաղաքական բարձր մշակույթով<sup>43</sup>:

Քաղաքագետների բնորոշմամբ՝ խորհրդարանական համակարգը հասարակության պետական ղեկավարման ձև է, որը բնութագրվում է օրենսդիր և գործադիր գործառույթների հստակ բաշխմամբ՝ պետության մյուս մարմինների նկատմամբ օրենսդիրի արտոնյալ վիճակի պայմաններում<sup>44</sup>:

Ըստ Բիխարինի՝ ժամանակակից խորհրդարանական համակարգի հիմքում մի քանի կարևոր սկզբունքներ են, որոնց թվում՝ իշխանությունն ածանցյալ է ժողովրդի իշխանությունից, խորհրդարանի իշխանությունը բխում է Սահմանադրությունից, խորհրդարանական իշխանությունն ու խորհրդարանը՝ որպես իշխանության յուրահատուկ կառուցվածք կազմում են կուսակցական համակարգի մաս, որի համար խորհրդարանում կուսակցությունները պայքարում են միմյանց դեմ<sup>45</sup>: Այսպիսով, դառնալով խորհրդարանական մշակույթի ձևավորման դերակատար:

<sup>41</sup> Миронов О. О. Истоки поссийского парламентаризма.- Представительная власть, 1996, N 4-5, с. 100.

<sup>42</sup> Локк Дж. Избранные философские произведения. Т. 2, М., 1960, ц. 85.

<sup>43</sup> Миронов О. О. Истоки поссийского парламентаризма.- Представительная власть, 1996, N 4-5, с. 100.

<sup>44</sup> Общая и прикладная политология, М., 1997, с. 480.

<sup>45</sup> Бихари М., Парламентаризм.- Мир политики. Суждения и оценки западных политологов, М., 1992, с. 43.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երկարամյա ներկայացուցիչ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Հակոբյանի համապարփակ բնորոշմամբ՝ «Պառլամենտն ինստիտուտ է, իսկ պառլամենտարիզմը պառլամենտական ժողովրդավարության հաստատումն է, նրա հիմնավորումը և արտահայտումը՝ կախված կառավարման ձևից, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանից, պառլամենտարիզմի պատմությունից, քաղաքական ուժերի գործունեությունից, ընտրական համակարգից, հասարակության իրավագիտակցությունից և իրավական մշակույթից<sup>46</sup>»:

Այսպիսով, խորհրդարանական համակարգի վերաբերյալ տարաբնույթ բնորոշումներն ուսումնասիրելով և համադրելով, հասկանում ենք, որ թերևս անհնար է առավել ամբողջական ձևակերպում տալ կամ սահմանել խորհրդարան և խորհրդարանական համակարգ, խորհրդարանական մշակույթ եզրույթները, քանի որ մշտապես առկա են տեսակետներ, որոնցում շեշտադրված է համակարգի այս կամ այն տարրը և համապարփակ բնութագիր տալն, այս դեպքում, անկարելի է:

### **2.3 Խորհրդարանական մշակույթի կիրառական առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում**

Ոչ միայն ֆորմալ այլ նաև բովանդակային առումով կառավարման խորհրդարանական մոդելի պայմաններում հրատապ է դառնում խորհրդարանական մշակույթի առկայությունը, որը քաղաքակրթական զարգացման մակարդակին և ազգային ու պատմական առանձնահատկություններին զուգահեռ անընդհատ փոխակերպվում է:

Խորհրդարանական մշակույթը արժեքաբանական կատեգորիա է, կողմնորոշումների և շարժառիթների համակարգ, որով պայմանավորված է խորհրդարանի՝ որպես ներկայացուցչական մարմնի գործունեության արդյունավետությունը:

---

<sup>46</sup> Հակոբյան Հ. Հ., Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մի քանի հիմնախնդիրների շուրջ, Երևան, 2005, էջ 9:



Խորհրդարանական մշակույթը դիտարկվում է լայն և նեղ իմաստներով: Այս դեպքում տեսնում ենք, որ մի դեպքում այն պառլամենտարիզմի ինստիտուցիոնալ և սոցիալ-մշակութային գործոնների համադրություն է, մյուս դեպքում՝ խորհրդարանական մշակույթն ընկալվում է որպես «քաղաքացիների կողմից ազատ ընտրությունների միջոցով իրենց ներկայացուցիչներին օրենսդիր մարմին ուղարկելով համոզված լինելը, որ դա է միակ հնարավորությունը իշխանությանը հասցնելու իրենց պահանջներն ու խնդիրները և հանդիսանում է իշխանություններին վերահսկելու միակ արդյունավետ միջոցը<sup>47</sup>»:

Նեղ իմաստով խորհրդարանական մշակույթը խորհրդարանական էթիկան է, նրա ավանդույթային հենքով և կարգավորիչ նորմերով, որը դիտվում է որպես սոցիալ-քաղաքական երևույթ և պայմանավորված է քաղաքական հարաբերություններով<sup>48</sup>:

Այն կախված է նաև պետության ձևից, էթնիկ կազմից, հասարակության սոցիո-մշակութային հարաբերություններից, ներքին և արտաքին կոնֆլիկտներից, լեզվամշակութային առանձնահատկություններից և այլն:

Ռուս քաղաքագետ Ֆ. Բուռլացկին խորհրդարանական մշակույթ եզրույթը բնորոշում է որպես ազգային և վերազգային հանրույթի ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ պատմական ու սոցիալական փորձ, որն իր ազդեցությունն է ունենում պետության և սոցիումի քաղաքական գիտակցության, պետական կառավարման սուբյեկտների քաղաքական վարքագծի, քաղաքական զարգացումներին հասարակության կողմից տրվող քաղաքական գնահատականների ձևավորման վրա<sup>49</sup>:

Խորհրդարանական մշակույթը, գտնվելով ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ ոլորտներում, քաղաքական հարաբերությունների կարևորագույն

---

<sup>47</sup> Ковбенко Л.Н., Колесников В.Н. Парламентская культура как предмет научно-практического анализа // Власть 2008.№5, С. 78-85.

<sup>48</sup> Ачкасов В. А. Взрывающаяся архаичность: традиционализм в политической жизни России. СПб., 1997, էջ 160, Ачкасов В. А. Трансформация традиций и политическая модернизация: феномен российского традиционализма // "Философия и социально-политические ценности консерватизма в общественном сознании России". Выпуск 1. СПб., 2004, էջ 173-191:

<sup>49</sup> Бурлацкий Ф. М. Социологические проблемы политики // "Социальные исследования". Выпуск 5. М., 1970, էջ 49-50:

քաղկացուցիչ է, որի հիմքում ընկած են քաղաքական և իրավական արժեքները, շահերն ու շարժառիթները<sup>50</sup>:

Խորհրդարանական մշակույթի կայացման համար կենսական նշանակություն ունեն քաղաքական էլիտայի, քաղաքացիական ներկայացուցչական ինստիտուտների և հասարակության քաղաքական գիտակցությունը, համոզմունքները, պետության և սոցիումի միջև երկխոսությունը<sup>51</sup>:

Հենց սա են նկատի ունեցել Գ. Ալմոնդը և Ս. Վերբան, երբ քննարկելով քաղաքացիական մշակույթի հիմնահարցերը եզրակացրել են, որ ժողովրդավարական քաղաքական համակարգի կայունությունը և գործունակությունը պայմանավորված են ոչ միայն ժողովրդավարական ինստիտուտների սահմանադրական և իրավական բնույթով, այլև քաղաքական համակարգի, նրա մուտքերի ու ելքերի և քաղաքացու կողմից այդ համակարգում իր դերի արժևորմամբ<sup>52</sup> :

Գ. Բուրդոն խորհրդարանական մշակույթի կայացման գործընթացում կարևորում է հետևյալ սկզբունքները՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների իրավահավասարություն, դրանց համագործակցություն և միմյանց նկատմամբ փոխազդեցության մեխանիզմների առկայություն<sup>53</sup>:

Հենց այս սկզբունքներից ելնելով էլ հաճախ խորհրդարանական մշակույթը մեկնաբանվում է որպես քաղաքական գիտակցության մարմնավորում: Կարող ենք եզրակացնել, որ քաղաքական գիտակցությունն այն սոսինձն է, որի միջոցով հավասարակշռվում են օրենսդիր և գործադիր իշխանությունները:

Խորհրդարանական մշակույթն անմիջական կերպով կախված է ընտրական ինստիտուտի նկատմամբ քաղաքացիների վերաբերմունքից: Որքան ցածր է

---

<sup>50</sup>Ворообьев И. В. Становление института парламентаризма в современной России: взаимодействие депутатского корпуса и аппарата Государственной Думы: Автореф. дис. канд. социол.наук. М., 2004, Константинова Л. А., Лаврикова А. А. Ценностные ориентации как фактор социальной стратификации современного российского общества // [http:// cyberleninka.ru/article/n/tsennostnye-orientatsii-kak-faktor-sotsialnoy-stratifikatsii-sovremennogorossiyskogo-obschestva#ixzz2XUKA7vdt](http://cyberleninka.ru/article/n/tsennostnye-orientatsii-kak-faktor-sotsialnoy-stratifikatsii-sovremennogorossiyskogo-obschestva#ixzz2XUKA7vdt) (Այցելված 10.02.2016թ.):

<sup>51</sup> «Глобальный парламентский отчет» // "Изменяющийся характер парламентского представительства". Ташкент, 2012:

<sup>52</sup> Алмонд Г., Верба С. Гражданская культура: политические установки и демократия в пяти странах. М., 2014, էջ 283-322

<sup>53</sup> Bureteau G. Traite de science politique. Paris, 1977, էջ 28:

ընտրություններին գիտակցաբար մասնակցող քաղաքացիների տոկոսը, այնքան ցածր է խորհրդարանական մշակույթի մակարդակը: Քաղաքական գիտությունների դոկտոր Ա. Շչերբինին նշում է, որ հակառակ հարաբերությունն անհնար է. «Մենք չենք կարող եզրակացնել, որ ուղիղ կապ կա ընտրությունների նախընտրական քարոզարշավում քաղաքացիների մասնակցության բարձր տոկոսի և խորհրդարանական քաղաքական մշակույթի բարձր մակարդակի միջև: Դրա լավագույն օրինակ է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունները, որին մասնակցում էր ընտրողների ավելի քան 90 տոկոսը»

<sup>54</sup>.

Հետևաբար կարող ենք փաստել, որ «գիտակցված մասնակցության» չափանիշը թեև կարևոր է, սակայն այն առայժմ որևէ կերպ չափելի չէ:

Խորհրդարանական մշակույթի ձևավորման առանցքային ու գլխավոր դերը թեև պառլամենտինն է, սակայն անհրաժեշտ է, որ ողջ քաղաքական համակարգը պառլամենտին վերաբերվի որպես բարձրագույն օրենսդիր մարմին, որն ունի ժողովրդի կողմից ազատ ընտրությունների միջոցով լեգիտիմություն, և որ ժողովրդի ողջ ուժը կենտրոնացած է հենց այս ինստիտուտում:

Ամերիկացի հետազոտող Ա. Ջենինգսը, խորհրդարանի հիմնական գործառույթ է դիտում քննադատությունը, այլ ոչ թե կառավարումը: Ըստ նրա՝ քննադատությունն ուղղված է ոչ թե կառավարության քաղաքականության էական կերպափոխմանը, այլ պետականամետ քաղաքական գիտակցության ձևավորմանն ու կայացմանը: Խորհրդարանական մշակույթը պետք է երաշխավորի խորհրդարանում հնչող ելույթներին ուղղված սոցիումի տված քաղաքական գնահատականների ձևավորումը: Խորհրդարանական մշակույթի ուժը քաղաքացիական մշակույթի կայացումն է<sup>55</sup>:

Խորհրդարանական մշակույթը բառի լայն իմաստով ենթադրում է ոչ միայն ընտրված ներկայացուցիչների շրջանում հիմնական սոցիալական, տնտեսական, իրավական և քաղաքական գիտելիքների առկայություն (բարձր, պրոֆեսիոնալ ոլորտում խորը գիտելիքների հետ միասին), այլև նույն ոլորտներում հիմնական գիտելիքների

<sup>54</sup> Щербинин А.И. Зарождение и развитие парламентаризма // <http://duma.tomsk.ru/page/8313> [Дата обращения: 15.02.2015 г.]

<sup>55</sup> Jennings I. Cabinet Government. Cambridge, 1959, էջ 472:

կայուն մակարդակ, որում խորհրդարանն ունի էական դեր կարգավորման գործընթացներում: Առանց այդ պայմանների փոխադարձ ազդեցության, խորհրդարանը վերածվում է մի մարմնի, որը գրանցում է օրենսդիր նախաձեռնությունները, որոնք պատրաստվել են գործադիր իշխանության կամ տնտեսական շահերի խմբերի կողմից<sup>56</sup>:

Առաջին անգամ 18-րդ դարում գերմանացի փիլիսոփա Յոհան Հերդերի կողմից քննարկված «քաղաքական մշակույթ» եզրույթը շատ լայն գործածություն ստացավ, նա գրում է. «Հին հույն իմաստունների մեծամասնությունը զբաղեցնում էր հանրային պաշտոններ՝ որպես ժողովրդական առաջնորդներ, թագավորների խորհրդականներ, զորահրամանատարներ, քանի որ նման նշանավոր մարդկանցից, արիստոկրատներից կարող էր սկիզբ առնել քաղաքական մշակույթը և գործուն կերպով ազդել ցածր խավի մարդկանց վրա»<sup>57</sup>:

Ըստ Գ. Լեբոնի՝ խորհրդարանական մշակույթը հասարակության՝ որպես ամբողջական համակարգի, քաղաքական մշակույթն է, որը խորհրդարանի և քաղաքացու աշխարհընկալման, համոզմունքների, արժեքների և կողմնորոշումների, քաղաքական գնահատականների ամբողջություն է: Քաղաքական մշակույթը մարդկային հասարակության ընդհանուր մշակույթի համընդհանուր ճանաչում գտած այն ոլորտն է, որն անմիջականորեն կապված է քաղաքականության, մարդկանց քաղաքական գործունեության, վարքագծի և գիտակցության հետ<sup>58</sup>:

Քաղաքական մշակույթը դիրքորոշումների, համոզմունքների և զգացմունքների համադրություն է, որը քաղաքական գործընթացին հաղորդելով որոշակի արժեքաբանություն՝ ներկայացնում է վարքագծի ու քաղաքական համակարգի ղեկավարման հիմնարար սկզբունքներ և կանոններ<sup>59</sup>:

Այսպիսով՝ քաղաքական մշակույթն ամբողջությամբ սոցիալական տեքստ է, որի ներսում քաղաքական իրադարձությունների համակարգումը մարդու համար ստեղծում

---

<sup>56</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>57</sup> Гердер И., Идеи к философии истории человечества, перевод и примечания А. Михайлова, М.:Наука,1977, 703 с.

<sup>58</sup> Մարգարյան Մ. Մ., Պետություն, Երևան, ՀՀ ՊԿԱ, 2012:

<sup>59</sup> Մարգարյան Մ.Մ., Հայաստանի Հանրապետության քաղաքական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրը խորհրդարանական կառավարման պայմաններում, 2017:

է ինքնորոշվելու հնարավորություն<sup>60</sup>: Բացի այդ, ինքնորոշվելու հնարավորությունը ձևավորում է նաև քաղաքացիական գիտակցություն և քաղաքական մասնակցություն՝ հանրային նշանակության բոլոր հարցերում:

Արդի ժամանակաշրջանին բնորոշ ժողովրդավարական քաղաքական մշակույթը ենթադրում է լեգիտիմ քաղաքական ուժերի և առաջնորդների առկայություն, որոնց համար էական և որոշիչ են հասարակական գիտակցության մեջ հեղաշրջում կատարելը և ընտրողին վստահեցնելը իրենց՝ քաղաքական արդիականացման գլխավոր դերակատարը լինելու աներկբայելի փաստը:

---

<sup>60</sup> Տե՛ս նույն տեղում:

### **ԳԼՈՒԽ 3 ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՈ. ԱՆՑՈՒՄ ԴԵՊԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

#### **3.1 2015 թվականի Սահմանադրական փոփոխությունները, որպես կուսակցությունների գործունեություն և դերակատարների ընդլայնում**

2015 թ. Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների կարևորագույն և հիմնական ուղղություններից է կիսանախագահական կառավարման ձևից անցումը դեպի խորհրդարանականի: Այդպիսի անցման տեսական հիմք դարձան ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի մշակած և «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»-ում զետեղված դրույթները կիսանախագահական կառավարման ձևի «անհաղթահարելի» թերությունների և խորհրդարանական կառավարման ձևի առավելությունների մասին<sup>61</sup>:

Պետք է նկատել, որ այս հարցի վերաբերյալ մասնագիտական կարծիքներում առավելություն է տրվում խորհրդարանական կառավարման ձևին՝ համարելով այն պետական իշխանության ավելի կատարյալ տիպ, քան նախագահականը և կիսանախագահականը: Այս դրույթը հիմնավորելու համար նշվում են խորհրդարանական կառավարման ձևի մի շարք առավելություններ և կառավարման այլ ձևերում այդ հատկանիշների բացակայության հանգամանքը: Որպես օրինակ մատնանշվում է Արևմտյան Եվրոպայի խորհրդարանական կառավարման դրական փորձը և Լատինական Ամերիկայի պետությունների անհաջող՝ նախագահականը<sup>62</sup>:

Պատմական փորձին անդրադառնալով՝ տեսնում ենք, որ այն բազմազան է: Մանավորապես, կարելի է հղում կատարել Գերմանիայի, հետպատերազմյան Ֆրանսիայի, Իտալիայի փորձին, որոնցում խորհրդարանական կառավարման

<sup>61</sup> «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», Եր., 2014, էջ 26-35:

<sup>62</sup> Медушевский А. Н. Сравнительное конституционное право и политические институты. М., 2002, с. 204-205:

համակարգը հանգեցրեց կա՛մ տոտալիտար ռեժիմի հաստատմանը (նացիստական Գերմանիա), կա՛մ կառավարական և խորհրդարանական երկարատև ճգնաժամերի: Հենց այդպիսի անկայունության հաղթահարման անհրաժեշտությամբ էր պայմանավորված Ֆրանսիայի հինգերորդ Հանրապետության ձևավորումը՝ անցումը խորհրդարանական կառավարման համակարգից դեպի կիսանախագահականի:

Հաշվի առնելով, որ կառավարման ձևերն ի հայտ են եկել պատմաքաղաքական կոնկրետ իրավիճակներում և կրել են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոնների ազդեցություն, կնկատենք, որ կառավարման բոլոր ձևերի արդյունավետությունը պայմանավորված է միևնույն գործոններով՝ քաղաքական համակարգի և քաղաքացիական հասարակության վիճակով, քաղաքական մշակույթի և հասարակության իրավագիտակցության զարգացածության մակարդակով, իսկ խորհրդարանական կառավարման պարագայում առաջնային է համարվում կուսակցությունների զբաղեցրած դիրքի, ունեցած դերի հանգամանալից ուսումնասիրությունը:

Նշենք, որ ժամանակակից աշխարհում, երբ քաղաքական գործընթացը բնութագրվում է, որպես քաղաքական համակարգի<sup>63</sup> ինքնակազմակերպման, կերպափոխման, գործառնության և այլ համակարգերի փոխհարաբերությունների հետ ի հայտ եկած փոփոխությունները համակարգող համալիր ամբողջություն<sup>64</sup>, որի օգնությամբ ծավալվում է երկխոսություն խմբերի, անհատների և նրանց մշակույթների միջև, անհրաժեշտություն է առաջանում քննարկել կուսակցություններն ու կուսակցական համակարգերը, որպես քաղաքական համակարգի գլխավոր և/կամ առանցքային դերակատարների (actor), որոնք իրենց հերթին սկզբնավորվում են քաղաքացիական հասարակություններում և օգտվում առկա բազմաչափ ռեսուրսներից ու աջակցությունից՝ իրենց բնույթով դառնալով կապող օղակ կամ, կարող ենք ասել,

---

<sup>63</sup> Պետական հասարակական, հասարական-քաղաքական կազմակերպությունների, իրավական և քաղաքական նորմերի, իշխանության կազմակերպման և իրականացման սկզբունքների, քաղաքական դերերի, քաղաքական փոխգործունեությունների և գործառույթների ամբողջություն (Տե՛ս Վ. Պողոսյան, Կ. Միրումյան, Ա. Բաբաջանյան, Ս. Աստվածատրյան, Քաղաքագիտություն. Հանրագիտական բառարան, Երևան 2004., էջ 432):

<sup>64</sup> Զաքարյան Ա. Բ., Կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Կուսակցությունները ժողովրդավարական քաղաքական գործընթացներում, Երևան, 2015, էջ 3:

դառնալով կապի այն հիմնական ալիքը, որը գոյություն ունի քաղաքացիական հասարակության և պետության միջև:

Համակարգն ինքնին բարդ կազմակերպական ամբողջական միասնություն է, որը բաղկացած է առանձին-առանձին ամբողջական մասերից: Քաղաքական համակարգի առանձին, ամբողջական մաս է համարվում նաև կուսակցական համակարգը, որը կարող ենք բնութագրել որպես ենթահամակարգեր ունեցող ենթահամակարգ, որն ինքնուրույն արժեք է և կայուն փոխազդեցության մեջ է այդ համակարգում գոյություն ունեցող մյուս տարրերի հետ: Անհրաժեշտ է, հաշվի առնելով համակարգի ներսում առկա կապերի փոխդասավորվածությունը, էությունն ու բովանդակությունը, հստակ սահմանել դրա կառուցվածքը և գործառույթները:

Արդի ժամանակներում հասարակության քաղաքական կյանքը ոչ միայն բարդ և բազմազան է, այլև երբեմն նույնիսկ կարող ենք բնութագրել հակասական: Սա բնական է և պայմանավորված է հասարակության կյանքի ժողովրդավարացման ամրապնդման գործընթացով, որին զուգընթաց ավելի ու ավելի շատ քաղաքացիներ են հնարավորություն ստանում մասնակցելու քաղաքական գործընթացներին: Նրանք, ինչպես միավորված, այնպես էլ առանձին-առանձին ակտիվ պայքարում են իրենց շահերի, իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Բոլոր ժամանակներում հասարակության մեջ ապրող անհատները, սոցիալական խմբերը, խավերն ու դասակարգերն ունեցել են տարաբնույթ շահեր, պահանջմունքներ, ընդունակություններ ու հնարավորություններ: Այդ տարաբնույթ, երբեմն էլ հակասական, շահերը հասարակության մեջ առաջացրել են անհավասարություններ, անարդարություններ, հալածանքներ, բախումներ և բռնություններ: Այս պայմաններում անհրաժեշտություն է առաջանում գտնել շահերի զուգամիտման, դրանց ներդաշնակման ու փոխհամաձայնություններ ձեռք բերելու ուղիներ:

Մարդկության զարգացման պատմության որոշակի փուլում, երբ սոցիալական խմբերի, խավերի և դասակարգերի առաջադեմ ներկայացուցիչներն օգնեցին գիտակցելու և ընդհանուր շահերի համար համատեղ պայքարելու անհրաժեշտությունը, նրանք կազմակերպեցին ու իրականացրին այդ պայքարը և, ըստ էության, հենց այս գործընթացով էլ կարող ենք պայմանավորել կուսակցությունների առաջացումը:



Դեռևս Արիստոտելի ժամանակներից ձևավորվում էին քաղաքական խմբեր, որոնց անվանում էին կուսակցություններ<sup>65</sup> :Դրանք ծագում, ձևավորվում ու անհետանում էին իրենց կազմակերպիչների հետ միասին՝ ունենալով ժամանակավոր բնույթ: Այդ կազմակերպությունների նպատակը սեփական շահերը պաշտպանելն ու սեփական կամքն ուրիշներին թելադրելն էր: Դրանք զինակիցների, գործընկերների փոքր խմբեր էին: Նման կուսակցություններ գոյություն են ունեցել հին Հունաստանում և Հռոմում, միջնադարյան Եվրոպայում: Կուսակցություններն իբրև քաղաքական ռեալություն, հանդես են գալիս այն ժամանակ, երբ հասարակությունը ձեռք է բերում հասունության որոշակի մակարդակ<sup>66</sup>: Այս հանգամանքով պայմանավորված նշվում է, որ ժամանակակից կուսակցությունները արդյունաբերական հեղափոխության «զավակներն» են<sup>67</sup>:

Քաղաքական կուսակցությունների ձևավորման պատմության մեջ առանձնացվում են ներքոնշյալ փուլերը՝

1. արիստոկրատական կոտերիաներ<sup>68</sup>,
2. քաղաքական ակումբներ<sup>69</sup>,
3. զանգվածային կուսակցություններ, որոնք ստեղծվել են 19-րդ դարի

երկրորդ կեսին<sup>70</sup>:

Առաջին զանգվածային կուսակցությունը Անգլիայում լիբերալ կուսակցությունն է եղել 1861 թվականին: 1863 թվականին արդեն Գերմանիայում ձևավորվեց առաջին բանվորական կուսակցությունը:

Կուսակցություններն ուսումնասիրության առարկա են դարձել դեռևս 17-րդ դարի վերջից, արդեն 18-րդ դարում կարող ենք հանդիպել կուսակցությունների մասին

---

<sup>65</sup>Կուսակցություն հասկացությունը լատիներեն «pars» բառից է ծագել, նշանակում է «մաս» և բնութագրել է մարդկանց որոշակի խմբի մաս ցուցանելու համար:

<sup>66</sup>Քաղաքագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Երևանի համալս. հրատ., Եր., 2006, էջ 289:

<sup>67</sup>Современный политологический словарь, Липецк, 2000, с. 615:

<sup>68</sup>Ֆրանսերեն Coterie-խմբակ, մարդկանց համախմբված խումբ, որոնք հետապնդում են ինչ-որ խմբային նպատակներ:

<sup>69</sup>Անգլերեն Club-ակումբ, 12-րդ դարում Ֆրանսիական հեղափոխության շրջանում քաղաքական կուսակցությունների անվանում, ինչպես օրինակ Յակոբինների ակումբ:

<sup>70</sup>Հետաքրքրական է, որ վերոհիշյալ երկու փուլերն անցել են միայն անգլիական երկու կուսակցությունները՝ լիբերալները (վիգերը) և պահպանողականները (թորիները):

առաջին գիտական պատկերացումներին ժամանակի քաղաքական գործիչներ ու մտածողներ Շ. Մոնտեսքիոյի, Ժ. Ռուսոյի, Զ. Վշինգտոնի աշխատանքներում:

18-րդ դարի անգլիացի փիլիսոփա, հրապարակախոս, քաղաքական գործիչ Էդմոնդ Բյորքը<sup>71</sup>, կուսակցությունների էությունը բացահայտելու փորձ կատարելով, գտնում էր, որ այն ազգային շահը համատեղ ուժերով առաջ մղելու նպատակով միավորված մարդկանց կազմակերպություն է<sup>72</sup>:

Կուսակցություններին են անդրադարձել նաև 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին լայն ճանչում ստացած քաղաքագետներ Մ. Վեբերը, Ռ. Միխելսը, Դժ. Բրայսը: Ուշագրավ է մասնավորապես 19-րդ դարի ֆրանսիացի իրավաբան Ալեքսիս Թոքվիլի՝ Ամերիկյան դեմոկրատիայի ուսումնասիրությունների շրջանակներում արված եզրակացությունը, որ կուսակցությունները **փառասիրության ծնունդ են**: Նա մատնանշում էր քայլերի հերթականություն, համաձայն որի, մի քաղաքական գործիչ իշխանության հասնելու նպատակով ձևակերպում է իր քաղաքական շահը, այնուհետև իր քաղաքական շահերին մոտ քաղաքական շահեր է որոնում: Իշխանություն նվաճելու գործընթացում Թոքվիլը կարևորում է ուժեղ ամբիցիաների անհրաժեշտությունը ևս՝ հիմնավորելով, որ դժվար է տապալել նրան, ում ձեռքում գտնվում է իշխանությունը: Նա գրում է «Կուսակցությունները չարիք են, բնորոշ դեմոկրատական կառավարմանը»<sup>73</sup>:

Համաձայն Զ. Լապալամբարայի տեսության՝ կուսակցություն հասկացությունը տարբեր պայմաններում միանշանակ չէ: Ըստ նրա՝ իրենց հատկանիշներով առանձնացվում են կուսակցությունների հետևյալ բնութագրումները<sup>74</sup>

1. ցանկացած կուսակցություն նախ և առաջ գաղափարախոսության կամ գոնե աշխարհի և մարդու մասին հատուկ տեսության կրող է,

---

<sup>71</sup>Էդմոնդ Բյորքը համարվում է դասական պահպանողության հիմնադիրներից: Նա գտնում է, որ հասարակական կյանքը հիմնվում է ավանդույթների, բարոյական ու նյութական արժեքների, ինչպես նաև անցյալից ժառանգած արժեքների վրա, որի վրա հենվելով էլ հնարավոր է աստիճանաբար վերափոխել հասարակությունը և համատեղ փոխհամաձայնության միջոցով առաջ մղել ազգային շահը, ինչն էլ նաև կուսակցությունների նպատակն է:

<sup>72</sup> Берк Э. Размышления о революции во Франции. М., Наука, 1994:

<sup>73</sup> Токвиль А. Демократия в Америке. Кн.1. ч.2, М., : Прогресс, 1992, стр. 144:

<sup>74</sup> Lapalambara J., Anderson J. Political Parties. Encyclopedia of Government and Politics. Vol.1.p. 394:

2. կուսակցությունը կազմակերպություն է, այսինքն՝ մարդկանց բավական երկարատև միավորում քաղաքականության ամենատարբեր մակարդակներում՝ տեղականից մինչև միջազգային,

3. կուսակցության նպատակը իշխանության գրավումը և իրականացումն է, երբեմն կոալիցիայի ձևով,

4. յուրաքանչյուր կուսակցություն ջանում է ապահովել ժողովրդի աջակցությունը՝ իր օգտին քվեարկությունից մինչև ակտիվ անդամություն:

Ժամանակակից կուսակցականագիտության հիմնադիրներ են համարվում Մորիս Դյուվերժեն և Ջովաննի Սարտորին: Համաձայն կուսակցությունների ծագման վերաբերյալ Մ. Դյուվերժեի մոտեցման՝ կուսակցությունները բաժանվում են երկու խմբի: Մի դեպքում կուսակցությունների ծագումը նա պայմանավորում է ընտրական ինստիտուտի ստեղծման ու զարգացման և պառլամենտական խմբավորումների առաջացման հետ՝ անվանելով դրանք ընտրազանգվածային և պառլամենտական, մյուս դեպքում՝ արտաքին գործոններից առաջացած կուսակցություններ, որոնք անվանում է արտաքին ծագման կուսակցություններ: Նմանատիպ մեկնաբանությամբ են հանդես գալիս Ջ. Սարտորին, որը կուսակցություն է համարում ցանկացած քաղաքական խումբ, որը մասնակցում է ընտրություններին և ընդունակ է դրանց արդյունքում իր թեկնածուներին առաջադրել պետական հաստատություններ<sup>75</sup>, ինչպես նաև Կ. Ջանդան, որի բնորոշմամբ կուսակցություն են անվանվում այն կազմակերպությունները, որոնց ներկայացուցիչները բացահայտորեն մտադիր են զբաղեցնել պետական դիրքեր<sup>76</sup>:

Քաղաքական կուսակցությունների վերաբերյալ այս մոտեցումները կիսում են նաև այնպիսի հեղինակավոր մտածողներ, ինչպիսիք են Ժ. Կերմոնը և Ջ. Լապալամբարան: Ըստ Ջ. Լապալամբարանի՝ ցանկացած քաղաքական խումբ, որը ստացել է պաշտոնական կարգավիճակ, ունի ֆորմալ կազմակերպություն, կապում է կենտրոնը

<sup>75</sup> Сартори Дж. Вертикальная демократия.-Полис, 1993,с.ю87-88:

<sup>76</sup> Janda K. Political Parties: A Cross-national Survey. New York, 1980.P.5:

ծայրամասերի հետև և ի վիճակի է ընտրությունների միջոցով (ազատ կամ ոչ ազատ) իր թեկնածուներին մտցնել պետական մարմիններ, կուսակցություն է<sup>77</sup>:

Ֆրանսիացի քաղաքագետ ժ. Կերմոնի բնորոշմամբ՝ կուսակցությունը կազմակերպված ուժ է, որ միավորում է մեկ քաղաքական ուղղության պատկանող քաղաքացիներին՝ հասարակական կարծիքը որոշակի նպատակներով մոբիլիզացնելու, իշխանության մարմիններում մասնակցություն ունենալու կամ էլ իրենց պահանջների կատարմանն իշխանություններին ուղղորդելու համար<sup>78</sup>:

Ժողովրդավարական գործընթացում, որպես քաղաքական համակարգի առանցքային դերակատար, կուսակցությունները կատարում են կարևորագույն նշանակություն ունեցող փոխկապակցված մի շարք գործառույթներ, որոնք, հասարակության տնտեսական, սոցիալական, մշակութային ու քաղաքական մշակույթի զարգացման աստիճանով պայմանավորված, յուրաքանչյուր երկրում տարբեր են:

Ինչպես կուսակցությունների սահմանման, այնպես էլ գործառույթների հարցում գոյություն ունեն տարբեր տեսակետեր և մեկնաբանություններ: Կուսակցությունների գործունեության ոլորտն ըստ Կ. Լոունսոնի քաղաքականության ոլորտն է: Պայքարն իշխանության համար, հասարակության կապը պետության հետ, քաղաքական լիդերների ընտրությունը, տարատեսակ շահերի փոխհամաձայնեցումը և վերջապես քաղաքական սոցիալականացումը<sup>79</sup> կարելի է համարել քաղաքական կուսակցությունների գլխավոր գործառույթներից:

Այս հանգամանքներով և ներկա քաղաքական ժամանակով պայմանավորված էլ անհրաժեշտ է քաղաքական գործընթացների անմիջական մասնակից այս հասարակական-քաղաքական ինստիտուտին մեծ ուշադրություն դարձնել: Կուսակցությունները ոչ միայն իշխանության հասնելու միջոց են, այլև հասարակության զարգացման գործում կարող են դառնալ վճռական գործոն:

Համաձայն գերմանացի քաղաքագետ Կլաուս Ֆոն Բոյմենի՝ քաղաքական համակարգում կուսակցություններն իրենց գործառույթների շրջանակներում որոշում են

<sup>77</sup> Lapalambara J., Anderson J. Political Parties. Encyclopedia of Government and Politics. Vol.1.p. 394:

<sup>78</sup> Տե՛ս Զաքարյան Ա. Բ., Կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Կուսակցությունները ժողովրդավարական քաղաքական գործընթացներում, Երևան, 2015, էջ 14:

<sup>79</sup> Фоменко С.А., Политология, М., 2000, стр. 185:

հստակ նպատակ՝ մշակելով համապատասխան գաղափարախոսություն և ծրագիր, միավորում են հասարակական շահերն ու դրանք արտահայտում, ակտիվացնում են քաղաքացիներին ու սոցիալականացնում տվյալ համակարգի շրջանակներում՝ հատկապես ընտրությունների ժամանակ, հավաքագրում են քաղաքական ընտրանի և ձևավորում կառավարություն<sup>80</sup>:

Վերոնշյալ գործառույթները կարող ենք խմբավորել ըստ ընդհանուր հատկանիշների, այսինքն՝ ընդհանուր սոցիալ-քաղաքական և համակարգային բնութագրության:

Առաջին խմբի գործառույթները բնութագրում են կուսակցության կապը սոցիալական խմբերի ու խավերի, հասարակության հետ ամբողջությամբ վերցված: Այստեղ առանձնացվում են ներկայացուցչական, սոցիալական ինտեգրման և գաղափարախոսական գործառույթները:

Ներկայացուցչական գործառույթի բովանդակությունը սոցիալական ուժերի շահերի բացահայտումն է, ձևավորումը, հիմնավորումը, այդ ուժերի ինտեգրումը և քաղաքական ակտիվության բարձրացումը, քանի որ կուսակցությունները որոշակի սոցիալական շահերի արտահայտողներն են: Բնական է՝ այս գործառույթը ժամանակի ընթացքում բովանդակային առումով փոփոխությունների է ենթարկվել, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դասակարգային կուսակցություններին փոխարինելու են եկել համաժողովրդական կուսակցությունները կամ կուսակցություններ բոլորի համար, որոնք ձգտում են իրենց ձևավորած արժեքներն ու նպատակները նույնացնել որևէ դասակարգի, սոցիալական խավի ու խմբի շահերի հետ, միևնույն ժամանակ հանդես գալով որպես ընդհանուր շահերի արտահայտողներ: Քանի որ կուսակցությունները ձգտում են հնարավորինս շատ ձայն ստանալ, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում միավորել հասարակության հնարավորինս լայն շերտերի և ներկայացնել տարբեր սոցիալական խմբերի՝ իրավունք վերապահելով հանդես գալ նրանց անունից: Նման կուսակցության օրինակ է Իտալիայում Քրիստոնյա-դեմոկրատական կուսակցությունը:

---

<sup>80</sup> П. К. Гончаров, Ю. В. Ирхин, В. Карапивин. Начало политической науки. М., 1994, стр. 161:

Ակնհատ է դառնում, որ, ներկա քաղաքական ժամանակով պայմանավորված, կուսակցությունները ձգտում են արտահայտել, ոչ թե նեղ խմբային, այլ համազգային շահեր, միևնույն ժամանակ փաստ է, որ պատմության մեջ չի եղել մի կուսակցություն, որ կարողանա հանդես գալ ընդհանուրի շահերից:

Ներկայացուցչական գործառույթը (շահերի ներկայացումը) տեղի է ունենում սոցիալական տարբեր շերտերի ու խմբերի առանձնահատուկ շահերի համաձայնեցմամբ՝ սոցիալական ընդհանուր շահերի մոբիլիզացման եղանակով: Այդ ընդհանրացված շահերը ձևակերպվում են կուսակցությունների ծրագրերում, տեղ են գտնում կարգախոսներում:

Քաղաքական ու սոցիալական ինտեգրման գործառույթը, համաձայն Ռ. Մակրիդիսի, պետք է կատարի հակահեղափոխական դեր, որի հիմնական խնդիրն ու նպատակն է մեղմացնել դասակարգային և այլ բնույթի սոցիալական հակասությունները և պահպանել ու ամբողջացնել այն քաղաքական համակարգը, որի շրջանակներում կուսակցությունը գործում է<sup>81</sup>:

Քաղաքական սոցիալականացման գործառույթը, որն իր կարևորությամբ չի զիջում վերոհիշյալ գործառույթներին, նպատակ ունի ապահովել անձի՝ քաղաքականության ոլորտ ներգրավումը, նրա արժեքային կողմնորոշումների ազդեցությունը, սոցիալական ու քաղաքական դիրքորոշումների ձևավորման կայունությունը և ժառանգականությունը:

Գաղափարախոսական գործառույթի առնչությամբ Ժ. Բլունդելը նշում է, որ ժամանակակից կուսակցությունների գերակշիռ մասի համար գաղափարախոսությունը էական զենք է, որը կազմում է կուսակցության ինքնորոշման կարևորագույն մասը<sup>82</sup>: Ըստ էության, գաղափարախոսական գործառույթի շնորհիվ, կուսակցությունները հանդես են գալիս իբրև ռազմավարական ու մարտավարական տեսություններ մշակող կենտրոններ, որոնք միտված են իրենց գաղափարախոսության լայն տարածմանը:

Երկրորդ խմբի գործառույթները բնորոշում են կուսակցության տեղը և դերը քաղաքական համակարգում: Դրանք կադրային, քաղաքականության մշակման և

---

<sup>81</sup> М. Н. Марченко, М. Х. Фарукшин, Буржуазные политические партии, М., 1987, стр. 47:

<sup>82</sup> Նույն տեղում, էջ. 58:

քաղաքական կուրսի իրականացման գործառույթներն են: Առհասարակ կուսակցությունների գործունեության առաջնահերթ խնդիրը բոլոր ժամանակներում էլ եղել է իշխանության համար պայքարը, որը տեղի է ունենում ընտրություններին մասնակցելու միջոցով:

Կադրային գործառույթի շրջանակներում նկատի պետք է ունենալ քաղաքական հավաքագրումը կամ, ինչպես ընդունված է ասել, զինվորագրումը, որի շրջանակներում կատարվում է կադրերի պատրաստում և ընտրություն:

Քաղաքականության մշակման և քաղաքական կուրսի իրականացման գործառույթի արդյունավետությունը և, իհարկե, ծավալը պայմանավորված են քաղաքական համակարգում կուսակցության զբաղեցրած տեղով և ունեցած դերով: Բնական է՝ քաղաքական համակարգում գերակշիռ դեր ունեն իշխող կուսակցությունները, որոնց ձեռքում գտնվում է սոցիալական համակարգի շարժման ղեկը: Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ քաղաքական համակարգում կուսակցության գործունեության արդյունավետության միակ ցուցանիշը կուսակցության կողմից մշակված քաղաքականությունն է և դրա կենսագործումը:

Երրորդ խմբի գործառույթները կապված են ներկայացուցչական կյանքի կարգավորմանը, կուսակցությունների փոխհամաձայնեցմանն ու միասնությանը, քաղաքական արժեքների, նորմերի մշակմանը: Այս գործառույթի նպատակն է պահպանել կուսակցության կենսագործունեությունը:

Ելակետ ընդունելով կուսակցությունների գործառույթային և կազմակերպական հատկանիշները՝ ընդունված է առանձնացնել կուսակցությունների հետևյալ տիպերը. ավանգարդային՝ կուսակցություններ, որոնք իշխանության գալով դառնում են վարչական համակարգի տիրապետող ինստիտուտ, ընտրարշավներին մասնակցելու համար ստեղծվող կուսակցություններ, որոնք հիմնականում դրսևորվում են իշխանության կենտրոնական և տեղական մարմինների ընտրությունների ժամանակ, և պառլամենտական կուսակցություններ:

Կուսակցությունների ապագայի հարցը արդի քաղաքական գիտության մեջ դրված այն բաց հարցն է, համաձայն որի, ապագայում կուսակցությունների վարկանիշի անկումն անխուսափելի է: Այս տեսակետը պաշտպանող գերմանացի քաղաքական

գործիչ և սոցիոլոգ Ռ. Դարենդորֆը գտնում է, որ հաջորդ հարյուրամյակում կուսակցությունները կդադարեն գոյություն ունենալուց, տեղի կունենա նրանց կոնվերգենցիան:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեց խորհրդարանական կառավարման մոդելը: Այն ունենալով մի շարք ընդհանրություններ հայտնի այլ մոդելների հետ, միևնույն ժամանակ ունի նաև մի շարք էական յուրահատկություններ:

Կառավարման այս մոդելին բնորոշ է խորհրդարանի առաջնային դերը: Հետևաբար այս փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն ունեցան նաև կուսակցությունների դերի բարձրացման և գործունեության տիրույթի ընդլայնման պայմաններում: Կառավարման նման մոդելի պայմաններում խորհրդարանի կողմից են ձևավորվում իշխանության գործադիր և դատական թևերը: Խորհրդարանի՝ Ազգային ժողովի կենտրոնական դերը պետական իշխանության համակարգում առվել արդիական է դարձնում այդ մարմնում կայուն մեծամասնության ապահովման հիմնախնդիրը, քանի որ խորհրդարանական կառավարման բոլոր մոդելների համար խորհրդարանական կայուն մեծամասնության ապահովման հիմնախնդիրը կարևորագույնն է: Բացի դրանից՝ խորհրդարանի կայունությունը պարտադիր նախապայման է գործադիր իշխանության ամբողջ համակարգի, ներառյալ՝ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ Կառավարության կայունության ապահովման համար:

Ուստի, համաձայն ՀՀ «Կուսակցությունների մասին» օրենքի<sup>83</sup> 2-րդ հոդվածի, «Կուսակցություն» հասկացությունը սահմանվում է, որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր միավորում, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի **ձևավորմանն** ու **արտահայտմանը** նպաստելն է:

<sup>83</sup> ՀՀ Սահմանադրական օրենք Կուսակցությունների մասին, Գլուխ 1, հոդված 2:



Համաձայն ՀՀ սահմանադրության 46-րդ հոդվածի 1-ին կետի՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության:

Այսպիսով, կառավարման խորհրդարանական մոդելի անցման պայմաններում, կուսակցությունները, լինելով քաղաքականության առանցքային դերակատարներ, դառնում են մի կողմից՝ մեծամասնությամբ իշխանության ձևավորման և մյուս կողմից՝ ընդդիմադիր հակակշռության և փոխզսպման սկզբունքով ժողովրդավարության և դրա արժեքների պահպանման հիմնական երաշխավորները: Քաղաքական կուսակցությունները ազգային ներքին ու արտաքին քաղաքականության մշակողները, ձևավորողները են՝ օժտված քաղաքական որոշումներ կայացնելու, դրանց հիմնավորումներ տալու և պատասխանատվություն կրելու հատկությամբ: Առանց քաղաքական կուսակցությունների հնարավոր չէ ժողովրդավարություն հաստատել, քանի որ քաղաքական կուսակցությունների գոծունեության ազատությունը ժողովրդավարության գրավականն է:

### 3.2 Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի հիմնախնդիրները խորհրդարանական կառավարման անցման գործընթացում

Թեկուզև ՀՀ-ում խորհրդարանական անցման գործընթացը՝ սահմանադրական փոփոխություններից հետո մոտ չորս տարվա պատմություն ունի, այնուամենայնիվ հարկ ենք համարել ուսումնասիրել նաև կուսակցական համակարգի հնարավորություններն ու թերությունները:

Հայտնի է, որ կուսակցական համակարգը կարևորագույն նշանակություն ունի արդյունավետ խորհրդարանական կառավարման կայացման համար: Հետևաբար փորձել ենք անդրադառնալ կուսակցական համակարգի հիմնախնդիրներին՝ տեսական և գործնական մակարդակներում:

Քաղաքական գիտության կառուցվածքում այն գիտաճյուղը, որն ուսումնասիրում է կուսակցություններն ու կուսակցական համակարգերը, կոչվում է պարտոլոգիա (կուսակցականագիտություն):

Կուսակցական համակարգը, որպես քաղաքական կառույց, ընդգրկելով քաղաքական իրականության բազմաչափությունը, բաղկացած է ինքնուրույն, բայց փոխադարձ կախման մեջ գտնվող ինստիտուտներից՝ կուսակցություններից<sup>84</sup> :

Ջ. Սարտորին իր «Կուսակցություններ և կուսակցական համակարգեր»<sup>85</sup> աշխատության մեջ առաջարկել է կուսակցական համակարգերի դասական տիպաբանություն՝ առանձնացնելով կուսակցական համակարգերի յոթ տեսակ, որոնք առաջնորդվում են իշխանության ամբողջատիրությունից դեպի քաղաքական բազմակարծության տանող սկզբունքով:

1. «Միակուսակցական» համակարգեր, այստեղ իշխող կուսակցությունը փաստացի միահյուսված է պետական ապարատին (ԽՍՀՄ, Չինաստան, Կուբա):

2. «Գերիշխող», այսինքն՝ հեգեմոն դիրք ունեցող կուսակցությունների համակարգեր, որտեղ իշխող կուսակցությունների հետ մեկտեղ գոյություն ունեն կուսակցություններ-արբանյակներ, որոնք ճանաչում են «առաջարկվող

<sup>84</sup> Ջաքարյան Ա. Բ., Կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Կուսակցությունները ժողովրդավարական քաղաքական գործընթացներում, Երևան, 2015, էջ 22:

<sup>85</sup> Sartori G. Parties and Party Systems: A Framework for Analysis, Vol. 1. New York, 1976. p. 64:

կուսակցությունների դերը» և իրական ազդեցություն չունեն ընդունված որոշումների վրա, (Բուլղարիա, Լեհաստան):

3. «Դոմինանտ» կուսակցությունների համակարգերը՝ (Մեքսիկա, Հնդկաստան, Ճապոնիա՝ մինչև 1993 թվական), որտեղ երկար տարիներ, չնայած բազմակուսակցականությանը և կուսակցությունների բազմաքանակությանը, իրականում մեկ կուսակցությունը կանոնավոր կերպով հաղթում էր ընտրություններում և դառնում իշխող:

4. «Երկկուսակցական» համակարգեր, որտեղ երկու հիմնական կուսակցությունները, ինչպես օրինակ ԱՄՆ-ում դեմոկրատներն ու հանրապետականները, Մեծ Բրիտանիայում պահպանողականներն ու լեյբորիստները հերթափոխում են մեկը մյուսին: Այստեղ, իհարկե, կան նաև այլ կուսակցություններ, սակայն դրանք փաստացի զրկված են հաղթանակի որևէ հնարավորությունից:

5. «Միջին բազմակարծիք կամ չափավոր բազմակարծության» համակարգեր, որտեղ կուսակցությունների քանակը երեքը կամ չորսն է (Բելգիա, Շվեյցարիա, Ֆրանսիա):

6. «Ծայրահեղ բազմակարծիք» համակարգեր, որտեղ հինգից ավելի կուսակցություններ կան, օրինակ՝ Իտալիայում 1993 թվականին ներկայացված էին ութ կուսակցություններ<sup>86</sup>: Նմանատիպ պատկեր է նաև Ֆինլանդիայում, Նիդեռլանդներում: Նշենք, որ նմանատիպ համակարգերում բավական դժվար է մեկ ուժի կողմից իշխանության գալը, այսպիսի դեպքերում հաճախ կառավարությունը ձևավորվում է կոալիցիոն ձևով:

7. «Ատոմականացված համակարգեր» (ութ կուսակցությունից ավելի), որտեղ տեղի է ունենում ազդեցության փոշիացում և դերերի տարրալուծում (Մալազիա): Այս համակարգի ցայտուն օրինակ է Հայաստանը:

Ձ. Սարտորին երկկուսակցական և չափավոր կերպով բազմակուսակցական համակարգերը բնորոշում է որպես կենտրոնաձիգ, իսկ ծայրահեղ կուսակցականները՝ կենտրոնախույս: Եթե կուսակցական համակարգում գերակշռում են կենտրոնաձիգ

---

<sup>86</sup>Այսօր էլ Իտալիայի պառլամենտի ստորին՝ պատգամավորների պալատում ներկայացված են 8 կուսակցություններ (մանրամասն տե՛ս <https://www.camera.it/leg18/46>)

միտումները, ապա վարվող քաղաքականությունը համարվում է կախույթային, այն ժամանակ, երբ քաղաքական ուղղությունը, որը տարբերվում է չափավորությամբ կամ ծայրահեղությամբ՝ արտահայտում է կենտրոնախույս ուժերի գերակշռություն, որը բերում է կառավարության գործունեության քաղաքական պարփակման և կաթվածահարման: Այդպիսի եղանակով, Արևմտյան շատ հետազոտողների կարծիքով (Ջ. Սարոտիի, Ա. Լեփսարտ, Մ. Թեյլոր), կուսակցությունը համարվում է օպոիմալ պայման կայուն ժողովրդավարության համար:

Քաղաքագիտական գրականության մեջ ընդունված է և լայն տարածում ունի կուսակցական համակարգերի հետևյալ բաժանումը. միակուսակցական, երկկուսակցական և բազմակուսակցական, սակայն յուրաքանչյուր երկրում նույնիսկ այս ընդունված համակարգերը կարող են ունենալ առանձնահատուկ դրսևորումներ, մասնավորապես, երկրում գոյություն ունեցող կուսակցությունների քանակից և տեսակներից կախված քաղաքական համակարգում նրանց միջև հաստատվում են որոշակի կապեր և փոխհարաբերություններ: Հենց այդ կապերի և փոխհարաբերությունների ամբողջությունն ընդունված է անվանել կուսակցական համակարգ: Լինելով հասարակության քաղաքական համակարգի կարևորագույն գործոն՝ կուսակցական համակարգը մեծ ազդեցություն է թողնում հասարակության ամբողջ քաղաքական կյանքի վրա, չնայած նրան, որ յուրաքանչյուր կուսակցություն գործում է իր ծրագրերի և կանոնադրության շրջանակներում և յուրաքանչյուրը պայքարում է իշխանության նվաճման համար:

Կուսակցական համակարգը բազմաքանակ ներգործության արդյունք է, որոնք Մ. Դյուվերժեն առաջարկում է բաժանել հետևյալ խմբերի.

1. Ցանկացած երկրի համար կարևորվում են տվյալ երկրի ազգային սովորություններն ու պատմությունը, երկրի տնտեսական և սոցիալական կառուցվածքը, քաղաքական համակարգերի տիպը, հասարակության մշտական պառակտման առկայությունը, քաղաքական մշակույթը, էթնիկ կազմն ու դավանած արժեքները:

2. Ընդհանուր ազդեցություն են ունենում բոլոր երկրների համար ընտրական կարգը, որը արտահայտում է իր ազդեցությունը, ընտրողների վարքի վրա, կուսակցությունների քանակը, նրանց թիվը, կուսակցական կոալիցիաների ձևավորման

յուրահատկությունը՝ այդ համատեքստում քաղաքական պատասխանատվության բաշխման եղանակները, խորհրդարանում, ներկայացուցչության չափերը և այլն: Այստեղ կարևորվում է ընտրական համակարգերի տեսությունը: Ընտրական ինստիտուտներին ժամանակակից հասարակության մեջ, որպես իշխանության և կառավարման մարմինների ձևավորման մեխանիզմների, հատուկ նշանակություն է տրվում, որը կապված է պետական իշխանության ձևավորման հետ: Ժամանակակից աշխարհում բավականին դժվար է գտնել մի պետություն, որը կարող է իրականություն դարձնել քաղաքական ընթացքը առանց ընտրությունների<sup>87</sup>:

Այսպիսով, համաձայնվելով Մ. Դյուվերժեի վերոհիշյալ մոտեցմանը նշենք, որ կուսակցական համակարգի բնույթն ու առանձնահատկությունները պայմանավորող գործոններից են պատմական ավանդույթներն ու ազգային ինքնությունը, կրոնական պատկանելությունը, քաղաքացիական հասարակության քաղաքական գիտակցության աստիճանը, սոցիալական ուժերի դասավորվածությունը, քաղաքական մշակույթի առկայությունը, կառավարման համակարգը, ընտրական ինստիտուտների ձևավորված համակարգը և այլն: Սակայն այստեղ կարևոր է նշել, որ կուսակցական համակարգի բնույթն իր հերթին հայելային անդրադարձ է ունենում հասարակության քաղաքական կյանքի բոլոր կողմերի վրա: Վերոհիշյալի համընդհանուր դիտարկմամբ, այսինքն՝ կուսակցական համակարգի, սոցիալական հիմքի, իշխող ու ընդդիմադիր կուսակցությունների գործունեությամբ կարող ենք ամբողջական պատկերացում կազմել հասարակության քաղաքական կերպարի մասին:

Արդի ժամանակներում կուսակցական համակարգերի բնույթը որոշվում է լեգալ գոյություն ունեցող կուսակցությունների կառավարության ձևավորման, ինչպես նաև պետական մարմիններում տրված հնարավորությունների և տվյալ պետության ներքին ու արտաքին քաղաքականության մշակմամբ ու իրականացմամբ:

Այսպիսով, միակուսակցական համակարգը բնորոշվում է որպես մեկ կուսակցության կողմից իշխանության իրականացում, այսինքն տվյալ երկրում միայն մեկ կուսակցություն ունի լեգալ կարգավիճակ ու լիազորություն ձևավորելու

---

<sup>87</sup>Елисеев С. М. Политическая социология: учебное пособие. СПб.: Издательство «НесторИстория», 2007. С.140-164:

կառավարություն: Այսպիսի համակարգը բնորոշ է ամբողջատիրական հասարակարգին, ինչպես օրինակ ԽՍՀՄ-ում՝ ԽՄԿԿ-ն, ՉԺՀ-ում՝ ՉԿԿ-ն: 21-րդ դարում կուսակցական համակարգի նման դրսևորումը զուրկ է կենսունակությունից:

Ամենահինը երկկուսակցական համակարգն է, որը հաստատվել է 17-րդ դարավերջին Անգլիայում վիգերի և թորիների կողմից իշխանության իրականացմամբ: Չնայած երկկուսակցական համակարգին բնորոշ է քաղաքական համակարգում երկու խոշոր կուսակցությունների առկայություն, սակայն այս համակարգը չի ենթադրում, որ երկրում պարտադիր պետք է գործեն երկու կուսակցություններ: Այս առիթով Մ. Դյովերթեն նշում է, որ այդքան էլ հեշտ չէ տարբերել երկկուսակցական և բազմակուսակցական համակարգերը, քանի որ երկուսի պարագայում էլ երկրում խոշոր կուսակցությունների հետ զուգահեռ կան նաև փոքր կուսակցություններ, օրինակ՝ ԱՄՆ-ում դեմոկրատական և հանրապետական կուսակցություններից զատ կան նաև այլ, փոքր կուսակցություններ, ինչպես լեյբորիստական, սոցիալիստական, այնպես էլ ֆերմերային և այլ կուսակցություններ:

Երկկուսակցական համակարգը կենսունակ համակարգ է, ինչպես օրինակ՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կուսակցական համակարգերը: Սարտորիի բնորոշմամբ՝ երկկուսակցական համակարգը նպաստում է պետության կառավարելիությանն ու քաղաքական իրատեսությանը՝ բացառելով քաղաքական դեմագոգիան, քանի որ հասարակական համաձայնության արդյունք է: Իսկ բազմակուսակցությունը, պարտադրելով հաղթած կուսակցությանը իշխել մյուսների հետ համատեղ, վերջիններիս թույլ է տալիս ավելացնել սեփական սխալների թիվը<sup>88</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ապենինների վրա սկսեց ձևավորվել բազմակուսակցական քաղաքական համակարգ, որը բնորոշ է արևմտյան երկրներին: Այստեղ բազմակուսակցական համակարգի ձևավորումը պայմանավորված էր ֆաշիստական անցյալի և դրանից բխող ավտորիտար ռեժիմի հաղթահարմամբ, ինչպես նաև անգլո-ամերիկյան դաշնակիցների անմիջական օժանդակությամբ, որն

---

<sup>88</sup> Sartori G. Parties and Party Systems: A Framework for Analysis, Vol. 1. New York, 1976. p. 64:

ուղղված էր բազմակարծ ժողովրդավարության ինստիտուտների ստեղծմանն ու բազմակուսակցական համակարգի կայացմանը:

Բազմակուսակցականությունը ժողովրդավարության անհրաժեշտ պայմաններից մեկն է, որը, վերջ տալով որևէ կուսակցության իշխանության մենաշնորհին, պայմաններ է ստեղծում մարդկանց ազատ մտածողության, գաղափարական կողմնորոշման, քաղաքական գործունեության համար: Սակայն կարևոր է նշել, որ կուսակցությունների չափազանց մեծ քանակի առկայությունը բնավ չի նշանակում, որ ժողովրդավարությունը վերջնականապես հաստատվել է տվյալ երկրում: Հակառակը, չափազանց շատ թվով կուսակցությունների առկայությունը հասարակության քաղաքական անկայունության, նրա թույլ զարգացման, ժողովրդավարական ինստիտուտների կայացած չլինելու վկայությունն է, քանի որ նորմալ չէ, երբ մի քանի տասնյակ կուսակցություններ միանգամից հավակնում են իշխանության: Սակայն այս համակարգն առավել ամբողջական է ներկայացնում քաղաքացիական հասարակությունը, դրա շերտերը, քաղաքականությունը դառնում է ավելի բաց, քանի որ ներառում է միջկուսակցական մրցակցությունն ու փոխադարձ քննադատության մեխանիզմը: Այս համակարգին բնորոշ է որոշումների, բազմազան գաղափարների քննարկման և ընդունման գործընթացը: Ընդհանուր առմամբ, բազմակուսակցական համակարգը կարող ենք բնորոշել որպես առավել ճկուն:

Հարկ ենք համարում անդրադառնալ Զ. Սարտորիի մեկ այլ մոտեցմանը բազմաբևեռ կուսակցական համակարգի վերաբերյալ: Նա գրում է. «... «հինգ և ավել կուսակցություն» արտահայտությունը չպետք է միանշանակ ընդունել<sup>89</sup>: Փաստացի մենք պետք է հաշվից դուրս հանենք փոքր կուսակցություններին, որոնք գոյություն կարող են ունենալ ցանկացակ կուալիցիոն կառավարության ներսում և, ընդհանուր առմամբ, բոլոր այն կուսակցություններին, որոնք այդ պատճառով հավաքվում են և փորձում են տեղավորվել քաղաքական տարածության մեջ»: Այս պատկերը հինականում բնորոշ է բազմաէթնիկ հասարակություններին, որտեղ արտահայտված են տարբեր լեզվամտածողություններ, և այս մոդելը հիմնականում գործում է միայն այն ժամանակ,

---

<sup>89</sup>Sartori G., Teoria dei partiti e caso Italiano, Sugarco edizione, S. r.l., viale Tunisia 41, Milano, Italia, 1982, p. 59:

երբ կան առնվազն հինգ կուսակցություններ, որոնք պայքարում են նույն տարածքում՝ նույն տեղի համար:

Ջ. Սարտորին, իր ուշադրությունը կենտրոնացնելով քաղաքական իշխանության համար կուսակցության պայքարի վրա, առանձնացնում է կուսակցությունների հետևյալ գործառույթները.

1. քաղաքացու քաղաքական կյանքին և հատկապես ընտրություններին կամավոր մասնակցելը,

2. հանրության տարբեր շերտերի սոցիալական և քաղաքական ինտեգրացումը՝ ամբողջական նպատակին հասնելու համար,

3. սոցիալական խմբերի հետաքրքրությունների ներկայացման միջնորդությանը՝ նրանց հաշվեկշռին հասնելու ձգտումը,

4. կոնֆլիկտների հարթեցումը կամ նրանց հանդես նախատրամադրվածության դրսևորումը, իրենց համապատասխան չեզոքացումը,

5. մեծամասամբ քաղաքացիների իշխանության արտահայտումը,

6. քաղաքականության և քաղաքական որոշումների համապատասխան որոշումը,

7. քաղաքական առաջնորդների ընտրությունը և ձևավորումը<sup>90</sup>:

Փորձելով դիտարկել Հայստանի Երրորդ Հանրապետության կուսակցական համակարգի զարգացման հետագիծը կուսակցությունների կողմից վերոնշյալ գործառույթների կատարման տեսանկյունից, անդրադառնանք հայ իրականության մեջ բազմակուսակցական քաղաքական համակարգի ստեղծման առաջին փորձին:

Դեռևս 1918 թվականի մայիսի 28-ին հռչակված անկախ Հայստանի առաջին Հանրապետությունում ձևավորված կառավարությունը, որը չնայած գլխավորում էր Հայ հեղափոխական դաշնակցությունը, սակայն կառավարության կազմի մեջ կային նաև հնչակյաններ, ռամկավարներ, էսեռներ, մենշևիկներ և մեկ բոլշևիկ: Սակայն այս, դեռևս չձևավորված բազմակուսակցական համակարգը վերացվեց, համաձայն 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Լեզրանի և Դաշնակցական կառավարության միջև Երևանում կնքված

---

<sup>90</sup>Stu, G. Sartori, Parties and Party Systems, ECPR Press, 2005, p. 25



համաձայնագրի<sup>91</sup>, որով դաշնակցությունը ճանաչում էր կոմունիստների իշխանությունը Հայաստանի ողջ տարածքում:

Այսպիսով, հաստատվեց ամբողջատիրական քաղաքական ռեժիմ, որին բնորոշ է միակուսակցական համակարգը: Կոմունիստական կուսակցությունն իր մենաշնորհային իշխանությամբ Հայաստանում իշխեց շուրջ յոթանասուն տարի, որի ընթացքում արգելված էր այլախոհությունը, այլ կուսակցությունների գոյությունը, միևնույն ժամանակ բացարձակ հսկողություն էր սահմանված հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա: Այս համակարգը Հայաստանում խարխլվեց ԽՍՀՄ փլուզմանը համընթաց: Որպես կուսակցական համակարգի կայացման հիմնախնդիր համաձայն ենք, որ «...Երրորդ հանրապետության ինստիտուցիոնալ համակարգը միանշանակ նախորդած Երկրորդ հանրապետության բնականոն արդիականացման արդյունքը չէ, քանի որ այդ երկուսի հիմքում բացարձակապես հակադիր գաղափարական համակարգեր են<sup>92</sup>:

1988 թվականի փետրվարին Հայաստանում բռնկվեց Արցախը Հայաստանին վերամիավորելու պահանջով համազգային շարժում, որի գլուխ կանգնած էր Ղարաբաղ կոմիտեն, որը 1989 թվականի նոյեմբերին հռչակվեց կուսակցություն և անվանվեց Հայոց համազգային շարժում: Այն ճանաչվեց իշխանությունների կողմից և դարձավ միակ օրինական ընդդիմադիր կուսակցությունը (բացի կոմունիստներից):

1990 թվականի օգոստոսի 23-ին Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որով դեմոկրատական արժեքների հետ մեկտեղ հռչակվեց նաև կուսակցությունների ազատ գործունեության իրավունքը: Արդեն 1991 թվականին, «Կուսակցությունների մասին» օրենքի համաձայն, Հայաստանի երրորդ Հանրապետությունում սկիզբ դրվեց բազմակուսակցական համակարգին: Այս

---

<sup>91</sup>1920 թվականի դեկտեմբերի 1-ին ՌՍՖՍՀ կառավարության ներկայացուցիչ Լեգրանի և Հայաստանի կառավարության կողմից լիազորված Դրոյի ու Համբարձում Տերտերյանի միջև տեղի ունեցան բանակցություններ (մանրամասն տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թթ., Երևան, ՀՅԴ հրատ., 2005թ., էջ 211-212):

<sup>92</sup>Մարգարյան Մ. Մ., Քաղաքական արդիականաման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Պետական ծառայություն», 2019 թ., էջ 186:

ընթացքում ոչ միայն կուսակցություններ, այլև հասարակական շարժումներ ու կազմակերպություններ ձևավորվեցին, սակայն բավական կարճ կյանք ունեցան<sup>93</sup>:

1989 թ.-ի աշնանն արդեն ստեղծվեցին Սահմանադրական միությունը, Հանրապետական կուսակցությունը: 1990 թվականին իրենց գործունեության մասին հայտարարեցին Հայ հեղափոխական դաշնակցությունը, Ռամկավար-ազատական, Սոցիալ-դեմոկրատական, Հնչակյան կուսակցությունները: Այս կերպ հայ ավանդական կուսակցությունները վերադարձան հայրենիք:

Անդրադառնալով կուսակցությունների ինստիտուցիոնալ կարգին՝ նշենք, որ յուրաքանչյուր երկրում այն բնութագրվում է՝

1. գործունեության ծավալող կուսակցությունների թվով,
2. գործունեության սոցիալ-քաղաքական և իրավական պայմաններով,
3. ընտրազանգվածի «տեսակով» և ընտրողների թվով,
4. կուսակցությունների կառուցվածքային չափերով և դավանած արժեքների առանձնահատկություններով,
5. իշխանության հասնելու քաղաքական ռեսուրսով,
6. շահերը զուգամիտելու իրական հնարավորություններով:

Քաղաքական համակարգի կերպափոխման գործընթացներում, կայացվածության առումով գերակա են կուսակցությունների հետևյալ գործառույթները.

1. ընտրություններին մասնակցությունն ու հաղթանակը՝ պետական իշխանության մարմինների նկատմամբ որոշակի վերահսկողություն ստանալու համար,
2. հասարակության պահանջների արտահայտումը և ձևակերպումը,
3. քաղաքական այլընտրանքների առաջաջումը,
4. առաջնորդների, որոնք ապագայում իրենց տեղը կգրադեցնեն պետության կառավարման մեջ, քաղաքական որակների ստուգում և ուսուցումը<sup>94</sup>:

<sup>93</sup>1989 թվականի մայիս-հունիս ամիսներին ձևավորվեց Հայաստանի Ազգային անկախություն կուսակցությունը, որն արդեն նույն թվականի նոյեմբերի պառակտվեց:

<sup>94</sup>Ջաքարյան Ա. Բ., Կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Կուսակցությունները ժողովրդավարական քաղաքական գործընթացներում, Երևան, 2015, էջ 16:

Հայաստանում կուսակցություններն իրավական կարգավիճակ ստացան 1991 թվականին ընդունված «Կուսակցությունների մասին» օրենքով, որով թե՛ քաղաքական և թե՛ իրավական առումով բարենպաստ պայմաններ<sup>95</sup> ստեղծվեցին, սակայն գոնե այդ տարիների համար բազմակուսակցական համակարգի կայացվածության մասին խոսել չենք կարող, քանի որ դեռևս նոր պետք է ձևավորվեին ժողովրդավարական ինստիտուտները, որոնք անհրաժեշտ պայման են կուսակցական համակարգի կայացման համար:

Շուրջ յոթանասուն տարի մեկուսացած լինելով քաղաքական կյանքից՝ հայ ժողովուրդը չունեի քաղաքական գործընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմաններ, քաղաքացիական գիտակցություն: Այս ամենի հետ միասին գործող կուսակցությունների լիդերները չունեին բավարար քաղքական կշիռ:

Կարծում ենք, որ այս հանգամանքներով է պայմանավորված եղել նաև Հայաստանում գործած կառավարման համակարգերի ընտրությունը: Սակայն քայլ առ քայլ անցումը դեպի խորհրդարանական կառավարում, ենթադրում է նաև այս տարիների ընթացքում կուսակցությունների արդիականացում և համապատասխանություն թե՛ գործող իրավական նորմերին և թե՛ քաղաքական համակարգում իրենց ունեցած դերի ու գործառույթների բովանդակային կատարմանը: Սակայն այսօր ՀՀ-ում կուսակցությունները դեռևս կայացման փուլում են: Ենթադրվում է կուսակցական համակարգի արդիականացման որոշակի մակարդակ, միևնույն ժամանակ ստեղծված են նպաստավոր պայմաններ դրանց վերաիմաստավորման համար:

### **3.3 Կուսակցությունների լիդերները և նրանց դերակատարությունը խորհրդարանական մշակույթի կայացման և զարգացման հիմքում**

Լիդերության ինստիտուտի խնդիրն արդիական և հատուկ է բոլոր ժամանակներին: Տարբեր ժամանակներում էլ մտածողներին մտորելու առիթ է տվել «ո՞վ պետք է կառավարի» հարցը: Այս հարցի քննությանն են լծվել դեռևս մեր թվարկությունից

---

<sup>95</sup>Օրենքի առկայություն, տնտեսական ճգնաժամ, հասարակությա գաղափարական շերտավորում:

առաջ, անտիկ այնպիսի մտածողներ, ինչպիսին Պլատոնը, Արիստոտելն ու Ցիցերոնն են:

Համաձայն Պլատոնի քննության՝ մարդիկ բաժանվում են դասերի, և նրանցից յուրաքանչյուրն ունի իր դասին հատուկ արյան տեսակ<sup>96</sup>: Միայն հիսուն տարեկանում ամենաբարձր արյան տեր մարդկանցից լավագույնները դառնում են «Արխոնտ» և կառավարում հիմքում ունենալով նպատակ. այն է՝ պահպանել արդարություն: Պլատոնը դիմացկունությունից ու գիտելիքներից զատ կարևորում է նաև տիրապետումը դիալեկտիկային, ամեն տեսակ մոլորությունից բարձր լինելը<sup>97</sup> և լիդերի ինտելեկտուալ սկիզբը:

Արդեն վերածննդի ժամանակաշրջանում իրար են բախվում երկու մտածողներ՝ Է. Ռոտերդամցու և Ն. Մաքիավելու հակադիր պատկերացումները: Հակառակ Է. Ռոտերդամցու՝ կառավարիչը հարկ եղած դեպքում պիտի ամեն ինչ զոհի իր խնամքին հանձնված ժողովրդի ազատությունն ապահովելու համար պնդման, Ն. Մաքիավելին պնդում է, որ հանուն ազգ-պետության շահերի՝ Տիրակալն իրավունք ունի քաղաքացիներին զրկելու ազատությունից, բայց Մաքիավելին այստեղ կարևորում է Տիրակալի կարողությունը ազատության հնարավոր խաբկանք ստեղծելու հարցում<sup>98</sup>: Է. Ռոտերդամցին կառավարչին տեսնում է իբրև ժողովրդի շահերի պաշտպանի՝ այսպիսով կարևորելով կառավարչի իմաստասեր-ղեկավար լինելու հանգամանքը, Ն. Մաքիավելին առաջնային է համարում Տիրակալի ինքնավստահությունը, համարձակությունն ու խարդավանքը: Ն. Մաքիավելու մշակած սկզբունքներն արդիական են մինչ այսօր, և նա լիդեր է համարում բոլոր նրանց, ովքեր իրենց լիդերությունն իրականացնում են՝ առաջնորդվելով հետևյալ վեց սկզբունքներով.

1. սեփականության, ընտանիքի և յուրաքանչյուր քաղաքացու պատվի վստահելի պաշտպանություն այլ քաղաքացիների ոտնձգություններից,

<sup>96</sup>Փիլիսոփաները ոսկե արյան տեր մարդիկ են, զինվորականներն՝ արծաթե, երկրագործները՝ հողե, զինագործները՝ պղնձե, արհեստավորները՝ հողե (Մանրամասն տե՛ս Պլատոն, «Երկեր չորս հատորով» հատոր IV, Պետություն», Երևան 2017, էջ 60-72)

<sup>97</sup>Տե՛ս Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն, Երևան 2017 թ., էջ 74:

<sup>98</sup>Մաքիավելի Ն., Տիրակալը, Երևան 2010, էջ 40:

2. պետությունը ներքին և արտաքին թշնամիներից պաշտպանելու համար անհրաժեշտ է ուժեղ, բայց ոչ վարձու բանակ,

3. իրավունքի ռացիոնալ համակարգի ստեղծում. յուրաքանչյուր քաղաքացու պետությունը պարտավոր է կրթել իրավական և քաղաքական գիտելիքներով,

4. կրթական համակարգի արժևորում հանուն պետական շահի,

5. տնտեսական ազատ հարաբերություններ. աշխատանքը հանուն պետության և անձնական բարօրության պարտադիր է, սակայն պետությունն էլ պարտավոր է գոյության կայուն եկամուտներ ապահովել թույլերի համար:

6. քաղաքացիների ընդունակությունների ռացիոնալ ուսումնասիրում, քանի որ լավ պետությունն այն է, որտեղ մարդու կարգավիճակը համապատասխանում է նրա ընդունակություններին<sup>99</sup>:

Այսօր արդեն ընդունված է իրականացված իշխանության լեգիտիմության տրամաբանությունն իբրև հիմք ընդունած Մ. Վեբերի առաջարկած լիդերի տիպաբանության դասական տարբերակումը: Նա առանձնացրել է ավանդական, խարիզմատիկ<sup>100</sup> և ռացիոնալ-իրավական տիպերը:

Ավանդական տիպի լիդերի գործունեության հիմքը ավանդույթն է, որը հիմնված է պատմության հոլովույթում ձևավորված իշխանությանը անվերապահ ենթարկվելու վրա: Կառուցվածքային առումով այն նման է նահապետական ընտանիքի հարաբերություններին: Ավանդական տիպի լիդերը համաձայնվում է փոփոխության միայն մեկ պայմանով՝ չձևախեղել պատմականորեն քննություն բռնած ավանդական մշակութային արժեքների և կրոնական նորմերի էությունը կամ էլ բնականոն արդիականացնել այն:

Խարիզմատիկ տիպի լիդերները հատուկ են հեղափոխական փոփոխություններով արդիականացվող, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում հայտնված հասարակություններին<sup>101</sup>: Այստեղ կարևոր ենք համարում և համաձայն ենք

<sup>99</sup>Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն, Երևան 2017 թ., էջ 78-79:

<sup>100</sup>Առաջնորդ-լիդերին մարդկային բացառիկ հատկություններով օժտելը և նրան մարգարեացնելը կոչվում է խարիզմա (Մանրամասն տե՛ս Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն, Երևան 2017, էջ 112:)

<sup>101</sup>Ըստ Մ. Վեբերի՝ խարիզմատիկ են համաշխարհային կրոնի հիմնադիրներ Բուդդան, Հիսուս Քրիստոսը և Մուհամեդը, պետության հիմնադիրները՝ Լիկուրգը և Սոլոնը, մեծ զինվորականներ Ալեքսանդր

այն մտքին, որ ապացուցված քաղաքական փորձը ցույց է տալիս «...ամբոխի օգնությամբ իշխանության հասած լիդերները կառավարումն իրականացնելիս կա՛մ կանխավ դատապարտված են կործանման, կա՛մ էլ փոխակերպման են ենթարկվում դեպի ռացիոնալիզմ, որը չի ենթադրում խարիզմայի անհետացում»<sup>102</sup>: Սա նշանակում է, որ լեգիտիմ խարիզմատիկ լիդերը պետական իշխանության կառավարում իրականացնելիս կարիք ունի լեգիտիմացնելու իր վարքը:

Հաջորդ տիպը ռացիոնալ-իրավականն է: Այս տիպում լիդերի գործունեության համար կարևոր հիմք են գործող օրենքն ու հավատը: Այս տիպը հատուկ է ժողովրդավարական պետություններին: Այստեղ կարևորվում են լիդերի և պետության նկատմամբ քաղաքացիների վստահությունը և սահմանադրական իրավունքը:

Վերերյան վերոնշյալ տիպաբանությունը ևս չի կորցրել իր արդիականությունը և իր կիրառումն է գտել քաղաքական կառավարման համակարգում՝ լիդերի էության մեկնաբանման համար: Սակայն կարևոր ենք համարում նաև անդրադարձը լիդերի հոգեբանական վերլուծություններին ևս: Այսպիսով՝ հոգեվերլուծության հիմնադիր Զ. Ֆրեյդը, առանձնացնելով մարդկության գործողության մղող երեք ուժերը (սով, ցուրտ, լիբիդո), գտնում է, որ թույլ, մերժված, օտարված մարդը շատ ավելի է հակված լիդերության, քան ուժեղը. ուժեղը ոչ միայն ունի «Ես», այլև կայացած անձ է, փոխարենը թույլը կարիք ունի ինքնահաստատվելու, չունենալով ինքնություն նա ցանկանում է ունենալ իշխանություն և ընթրոշխնել այն որպես Առաջնորդ: Քաղաքականությունը մարդու ենթագիտակցական հակումների, առաջին հերթին սեքսուալ բավարարվածությանը փոխարինող ենթագիտակցական սուբլիմացիա է քաղաքական գործունեության նպատակով: Համաձայն Ֆրեյդի՝ ճնշված լիբիդոն ձևափոխվում է իշխանություն ունենալու ցանկության, բայց լիդեր դարձած մարդու ֆիզիոլոգիայից չի հանում նրա նյարդայնությունը: Դրա հետևանքով մարդկությունն ունի մի շարք պարանոիկ-նևրոտիկ լիդերներ, ինչպես օրինակ՝ Կրոմվելը, Ռոբեսպիերը, Նապոլեոնը,

---

Մակեդոնացին, Հուլիոս Կեսարը, Նապոլեոնը, Չինգիզ-խանը (Մանրամասն տե՛ս Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն, Երևան 2017 թ., էջ 112:)

<sup>102</sup>Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն, 2-րդ հրատ., Երևան «Պետական ծառայություն», 2001, էջ 19-20:

Հիտլերը, Ստալինը...<sup>103</sup>: Փաստորեն, չնայած լիդեր-դիկատորի հիմնական հատկանիշն է ամբոխի կողմից սիրված լինելը և միաժամանակ վախ առաջացնելու կարողությունը, սակայն միշտ չէ, որ լիդերներն ուժեղ մարդիկ են:

Լիդերության ձգտող անձի հոգեբանությունն ուսումնասիրելով՝ ուշագրավ դասակարգում է առաջարկել նաև Հ. Լասսուելը առանձնացնելով՝ քարոզիչ, վարչարար և տեսաբան տիպերը՝ նախապատվություն տալով «խառը» տիպին: Նման լիդերի օրինակ է Վ. Ի. Լենինը:

Լիդերը սոցիալական խմբի, կազմակերպության և ամբողջ հասարակության հեղինակավոր անդամն է, որի անհատական ազդեցությունը թույլ է տալիս նրան առաջնորդելու մարդկանց դեպի որոշակի նպատակների իրականացման, նշանակալից դեր խաղալ հասարակական քաղաքական գործընթացում<sup>104</sup>:

«ՀՀ-ում քաղաքական համակարգի կերպափոխումը տեղի է ունենում լիդերության մեխանիզմի ձևավորման, հաստատման բարդ գործընթացում: Այս պարագան պայմանավորված է ոչ հեռավոր սոցիալիստական անցյալով և հակասականությամբ լի կապիտալիզացվող ներկայով: Այսօր հայ քաղաքական դաշտում ի հայտ են գալիս լիդերներ, որոնք ոչ միայն արտահայտում են սոցիալական տարբեր խավերի, կուսակցությունների շահերը, այլև խաղային վարքաբանություն ունեն<sup>105</sup>»: Այս առիթով հատկանշական է խաղի անհրաժեշտության վերաբերյալ Յոհան Հայզինգայի կողմից ձևակերպված միտքը.«Խաղը... անհրաժեշտ է անհատին որպես կենսաբանական ֆունկցիա, իսկ հասարակությանն անհրաժեշտ է իր պարունակած իմաստով, իր նշանակությամբ, իր արտահայտչական արժեքներով, հոգևոր և սոցիալական կապերի ստեղծմամբ, կարճ ասած՝ այն անհրաժեշտ է որպես մշակութային ֆունկցիա<sup>106</sup>»: Համաձայնվելով նախորդ մտքի առաջին հատվածին՝ նշենք, որ նշված պատկերն առավել բնութագրական էր նախորդ տարիներին: Սակայն 2018 թվականին տեղի ունեցած քաղաքական գործընթացները ստեղծեցին կամ առաջ քաշեցին քաղաքական

<sup>103</sup>Фрейд Зигмунд, Буллит Уильям, Вудро Вильсон. 28-й президент США. Психологическое исследование. - М.: Прогресс, 1992. с. 288:

<sup>104</sup> Պետրոսյան Ռ., Քաղաքագիտություն, Դասագիրք բուհերի համար, Երևան, 2004, էջ 370:

<sup>105</sup> Մարգարյան Մ., «Քաղաքական լիդերություն», Երկրորդ հրատ., Երևան 2001, էջ 5:

<sup>106</sup> Հայզինգա Յ., Մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, Փրինթինթոն, Երևան 2007, էջ 18:

լիդերի նոր կերպար, որին հաջողվեց համախմբել հասարակության լայն զանգվածներին՝ ստանալով բացարձակ լեգիտիմություն:

Համաձայն Ռ. Միխելսի՝ ժողովրդավարական կուսակցությունների առաջնորդների անսահմանափակ իշխանության թեզիսը բացատրությունների կարիք ունի: Տեսականորեն լիդերը կախված է զանգվածների կամքից: Վերջինների կողմից փոքր ինչ դժգոհությունը կարող է պատճառ դառնալ կուսակցության առաջնորդի պետական իշխանությունից հեռացմանը: Այսինքն՝ ցանկացած պահի նա կարող է փոխարինվել և հեռացվել<sup>107</sup>»:

Ա. Ջաքարյանը գտնում է, որ այս պնդումը ժողովրդավարական կերպափոխման գործընթացում չի համապատասխանում իրականությանը, հիմնավորելով, որ «կուսակցությունների մեծ մասը, վերածվելով յուրատեսակ կորպորացիաների, հիմնականում իշխանությունն օգտագործում է սեփական խնդիրների լուծման համար: Կառավարելով ողջ կուսակցական ապարատը կուսակցության շատ լիդերներ սեփական կուսակցության անդամներից իրենց կախվածությունը հասցնում են նվազագույնի, քանի որ կարողանում են մանիպուլիացնել վերջիններիս գիտակցությունը: Հաճախ կուսակցությունների լիդերը կոչով դիմում է ժողովրդին կամ հենվում է ժողովրդական զանգվածների աջակցության վրա մինչև իշխանության հասնելը: Սակայն իրական լիդերները միշտ ձգտում են պահպանել իրենց դիրքերը կուսակցության առաջնորդի դերում, քանի որ ժողովրդավարական պետության մեջ հասարակական կարծիքը համարվում է որոշիչ:

Կուսակցության լիդերի գործառույթներն անմիջականորեն կապվում են այն ռազմավարական նպատակների հետ, որոնք իր առաջ դրել է տվյալ կուսակցությունը, իսկ նրան կայացած կարելի է համարել քաղաքական դաշտում հետևյալ պահանջները բավարարելուց հետո.

1. եթե նա ունի քաղաքական երկխոսություն վարելու կարողություն և ընդունակ է համակեցության կանոններ պահպանել,

---

<sup>107</sup> Михельс Р. Социология политической партии в условиях демократии 1990, с. 74:



2. Եթե նա ընդունակ է իր ներկայացրած ծրագրի իրականացման համար ուղիներ մատնանշել՝ միաժամանակ պատասխանատվություն կրելով նրա արդյունքների համար,

3. Եթե նա ի վիճակի է քաղաքական կառավարման նպատակասլացություն ապահովել»<sup>108</sup>:

Ասվածից կարելի է հետևություն անել, որ կոնկրետ իրավիճակում լիդեր է դառնում նա, ով չափազանց արագ է ըմբռնում ժամանակի պահանջը: Հենց այս մեխանիզմում են հանդես գալիս «ուժեղ, հանճարեղ կամ նույնիսկ թույլ» լիդերները<sup>109</sup>:

Հզոր լիդերը կարող է լինել իրադրության ստեղծողն ու ստեղծված իրավիճակի լիիրավ տերը, և հակառակ դրան՝ թույլ լիդերը կարող է լինել ստեղծված իրավիճակի արդյունքը կամ հետևանքը, այսինքն՝ դառնալ լիդեր լոկ իրավիճակի թելադրանքով: Այստեղից հետևություն՝ յուրաքանչյուր իրադրություն ծնում է իր լիդերը:

Կախված իրադրություններով թելադրված ռազմավարական խնդրների լուծման գործընթացների իրականացումից՝ լիդերները դասակարգվում են «ըստ իրենց խարիզմայի կամ ըստ արդյունավետ կառավարման ունակության»<sup>110</sup>:

Խարիզմատիկ են կուսակցության լիդերները, որոնց կուսակցությունը ձգտում է իշխանության, նրա համար որոշիչ են ժողովրդական աջակցությունը, և, ժողովրդական լայն զանգվածների վրա հենվելով, անձը լիդերության առավել մեծ հնարավորություններ է ստանում:

Եթե կուսակցությունը գտնվում է իշխանության մեջ և կարողանում է վերահսկել իշխանական օղակները, ապա լիդերությունն անցնում է այն անհատին, ով վերահսկում է ողջ կուսակցական ապարատը և տնօրինում ֆինանսական և իշխանական ռեսուրսները: Ժողովրդավարական գործընթացում որոշակի պատմական էվոլյուցիայի արդյունք լիդերությունը ենթադրում է լիդերի ի հայտ գալով հասարակական շարժումներ, կուսակցությունների կազմավորում, դրանց ծրագրերի կազմակերպչական սկզբունքների մշակում, կուսակցական և քաղաքական հարաբերությունների

<sup>108</sup> Զաքարյան Ա. Բ., Կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Կուսակցությունները ժողովրդավարական քաղաքական գործընթացներում, Երևան 2015, էջ 96:

<sup>109</sup> Տե՛ս նույն տեղում էջ 96-97:

<sup>110</sup> Տե՛ս նույն տեղում էջ 97:

աստիճանակարգային մշակում, բոլոր մակարդակներում իշխանության մեջ տեղի համար մղվող պայքարում կուսակցությունների մասնակցությունը և դրանց լիդերների կառավարիչներ դառնալը, կառավարման ընթացքում բարոյական սկզբունքների պահպանումը<sup>111</sup>:

Սակայն արդարացի է այն պնդումը, որ լիդերներից շատերն իրենց գործառույթներն իրականացնելիս հստակ պատկերացում չունեն քաղաքական զարգացման և արդիականացման հիմնադրույթների մասին: Ուստի դիտարկելով կուսակցական լիդերությունը, քաղաքական համակարգի կերպափոխման գործընթացում անհրաժեշտ է կարևորել ոչ միայն կուսակցության առաջնորդի անհատական և հոգեբանական առանձնահատկությունները, այլև նրա իրավաքաղաքական գիտակցության մակարդակը: Այս նկատառումներով Ամերիկացի քաղաքագետ Մարգրետ Հերմանը կուսակցական լիդերին բնութագրելիս ներկայացրել է հետևյալ գործոնները. պատմականությունը, լիդերի հոգեբանական բնութագրիչը, լիդերի փոխհարաբերություններն իր համախոհների, կողմնակիցների և հետևորդների հետ, լիդերի բառապաշարը, իրավիճակային վերլուծություններ կատարելիս նյութի բովանդակությունում «արդար կառավարման» սկզբունքների պահպանումը<sup>112</sup>:

Կարևորելով լիդերի հոգեբանական բնութագրիչները՝ Մ. Հերմանը դրանք բաժանել է հետևյալ խմբերի. հիմնային քաղաքական համոզմունքները, նրա քաղաքաան ոճը (միայնակ կամ խմբային աշխատանք, քաղաքական հոետորություն և քարոզչություն, տեղեկատվության հավաքագրում), լիդերի վերաբերմունքը սթրեսների և ճնշումների նկատմամբ, լիդերի քաղաքական փորձը, քաղաքական մթնոլորտը որում ձևավորվել է լիդերը:

---

<sup>111</sup> Տե՛ս նույն տեղում էջ 9ր:

<sup>112</sup> Херманн М. Д. Стили лидерства в формировании внешней политики. – Полис. Политические исследования. 1991. С. 91-110:.

Համաձայն Մարգրետ Հերմանի տարբերկաման՝ քաղաքական լիդերների տիպերն են. դրոշակակիր<sup>113</sup>, առևտրական<sup>114</sup>, խամաճիկ<sup>115</sup> և հրշեջ<sup>116</sup>:

Նշենք, որ վերոհիշյալ և ոչ մի տեսակը կառավարման համակարգում մաքուր ձևով գոյություն չունի: Իրական քաղաքական հարաբերություններում կառավարելու համար անհրաժեշտ է միաձուլում: Այսինքն, համաձայն ենք Ա. Ջաքարյանի այն տեսակետին, որ անհրաժեշտ է իշխանության համար պայքարի պատրաստ որոշակի հանրույթ, այդ հանրույթի կազմակերպվածությունը, որն ավելացնում է վերջինի կարողությունները և այդ կազմակերպության լիդերի առկայությունը<sup>117</sup>:

Այդ հանրույթն է քաղաքական կուսակցությունը: Այս բնորոշմամբ լիդերությունը մեր կողմից դիտարկվում է որպես ղեկավարում, իսկ լիդերը՝ ղեկավար:

Այս նկատառումներով լիդերության հետ են կապվում հետևյալ երեք հիմնախնդիրները.

1. լիդերության ստանձնումը, ձեռքբերումը,
2. լիդերության իրականացումն ու կիրառումը
3. լիդերության աջակցությունն ու պահպանումը:

---

<sup>113</sup> Դրոշակակիր լիդերը խոշոր ռազմավար և մարտավար է, ով ոչ միայն մշակում է քաղաքական ծրագիր այլև իրականացնում է այն: Լիդերի այս տիպն աչքի է ընկնում սեփական աշխարհընկալմամբ և աշխարհաճանաչողությամբ, իսկ նրա համախոհներն ընդամենը կատարողներ են: Լիդեր-դրոշակակիրներ են տարաբնույթ հեղափոխության առաջնորդները՝ Կրոմվել, Ռոբեսպիեր, Լենին, Խոմենի:

<sup>114</sup> Առևտրական լիդերը ընտրողներին վաճառում է իր գաղափարները, մշակված ծրագրերը՝ ակնկալելով նրանց աջակցությունը և փոխարենը խոստանալով տեղ ապահովել նրանց համար իշխանական հարաբերություններում: Նման լիդերին բնորոշ առանձնահատկությունն է ընտրողներին համոզելը՝ նրանց վստահության քվեն ստանալու և իր քաղաքական ծրագրերի մասնակից-կատարողներ հավաքագրելու համար:

<sup>115</sup> Խամաճիկ լիդերը որոշակի խաղի, խմբի այն շահերի կամարտահայտիչն է, որոնք, նկատի ունենալով թագադրման ձգտող անձի իշխանատենչությունը, օգնում են նրան արագորեն թագակիր դառնալու, նույնիսկ, եթե նա չունի համապատասխան հատկանիշներ: Իսկ նման լիդեր «թագազուրկ» չլինելու համաչ հաճախ դառնում է կամազուրկ խամաճիկ:

<sup>116</sup> Հրշեջ լիդերը ճիշտ ժամանակին արձագանքում է հասարակության պահանջներին, տնօրինում և ճկուն փոփոխությունների է ենթարկում քաղաքական դաշտը՝ մարելով պատեհ և անպատեհ ծագած հրդեհները: Հրշեջ լիդերներ են Ֆ. Ռուզվելտը իր «Նոր կուրսով», Ռ. Ռեյգանը իր «Ռեյգանոէկոնոմիկայով», Մ. Թետչերը իր «Թետչերիզմով», Դեն Սյաո Պինը իր «Շարունակական բարեփոխությունների» քաղաքականությամբ: (Մանրամասն տե՛ս Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն, Երևան 2017 թ., էջ 134-135:)

<sup>117</sup> Херманн М. Д. Стили лидерства в формировании внешней политики. – Полис. Политические исследования. 1991. С. 91-110:.

Առաջին հիմնախնդրի ուսումնասիրությունը կապված է լիդրության ձգտող անհատի սոցիալ-հոգեբանական բնութագրի և որակական առանձնահատկությունների հետ.

1. սուր կիրքը, զարգացվածությունը, ինտելեկտուալ բաևծր կարողությունը,
2. ամուր կամքը և նպատակասլացությունը,
3. կենսունակությունն ու բնականոն արդիականալու կարողությունը,
4. կազմակերպչական կարողությունը,
5. հեղինակությունը, բազմակողմանի տեղեկացվածությունը և տնօրինած տեղեկատվության օգնությամբ համակարգային կանխատեսումներ կատարելը,
6. որոշումների կայացման համար պատասխանատվություն վերցնելու պատրաստակամությունը,
7. վստահություն ներշնչելու ունակությունը,
8. արտաքին գրավչությունը, հագնվելու և խոսելու ոճը
9. ճիշտ կեցվածք ընդունելու կարողությունը ֆոտո և կինոխցիկների առջև<sup>118</sup>:

Երկրորդ հիմնախնդիրը կապվում է կուսակցական առաջնորդի որակների և առանձնահատկությունների հետ:

Ա. Լոուտոնը և Է. Ռուզը ձևակերպել են հետևյալ որակները, ըստ որի՝ կուսակցական առաջնորդները պետք է ունենան.

1. հետևորդներին ոգևորելու կարողություն՝ խրախուսելով ձեռքբերումների համար,
2. միջանձնային հարաբերությունների կառուցման և պահպանման կարողություններ,
3. «քաղաքական հոտառություն»՝ շրջապատի պահանջմունքների և քաղաքական իրավիճակների շուրջ զարգացումների կանխորոշում,
4. կայունություն՝ ընդդիմախոսների առջև տատանողականության բացակայություն,

---

<sup>118</sup> Զաքարյան Ա. Բ., Կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Կուսակցությունները ժողովրդավարական քաղաքական գործընթացներում, Երևան 2015, էջ 96:

5. խարիզմա կամ գրավչություն՝ մարդկանց մոտ դրական ընկալունակություն առաջացնելու նկատառումներով,

6. լիազորությունների որոշ մասը հետևորդներին տալու ռիսկի ունակություն

7. ճկունություն՝ փորձի և նոր մտահղացումների վրա հենվելու կարողություն,

8. վճռականություն՝ եթե դա պահանջում է իրավիճակը<sup>119</sup>:

Այս որակների վերլուծությունը բերում է նրան, որ դրանց որոշ մասն ուղղակի ոչ թե պարտադիր, այլ ցանկալի են, քանի որ որոշ որակներ հնարավոր է ձեռք բերել նաև լիդերության իրականացման ընթացքում, այդ իսկ պատճառով հիմնական պահանջվող որակների ցանկում կուսակցական առաջնորդների համար, ըստ Ա Ջաքարյանի, կարելի է առանձնացնել ռազմավարական մտածողությունը, կուսակցական «թիմի» ձևավորման, ղեկավարման և համագործակցության կարողությունը, խարիզման, իրավիճակի գնահատման և անհրաժեշտ ռեսուրսների հայթայթման կարողությունը, ռազմավարական նպատակներին հասնելու համար զոհողությունների կարողությունը<sup>120</sup>:

Երրորդ հիմնախնդիրը լիդերության ապահովման կարողությունն է: Կառավարման աստիճանակարգի գագաթին գտնվող ցանկացած առաջնորդ միշտ իր վրա կրում է իրենից մեկ քայլ ետ գտնվողների ազդեցությունը, քանի որ վերջիններս ևս փորձում են շարժվել առաջ: Այս դեպքում խոսքը իրական և ոչ թե վիրտուալ, այսինքն՝ միֆային լիդերների մասին է: Երբեմն վիրտուալ կամ ձևական լիդեր է հանդիսանում կուսակցության նախկին իրական լիդերը, որը տարիքի, առողջական վիճակի կամ այլ պատճառով այլևս ի վիճակի չէ կուսակցական ապարատի վերահսկողության իրականացման գործում վճռորոշ դեր ունենալ: Օրինակ Լենինի վերջին տարիների գործունեությունը իրականում ձևական լիդերություն էր համարվում, քանի որ վերահսկողական ողջ գործունեությունն իրականացվում էր Ստալինի կողմից: Ուժեղ անհատների համար, ձևական լիդերի ետևում թաքնվելով և նրա անուղղակի աջակցությունն ունենալով, միշտ կարելի է վերահսկողության տակ առնել կուսակցական և պետական կարևոր օղակներն ու ազդեցության ոլորտները:

<sup>119</sup> Лоутон А., Роуз Э., Организация и управление в государственных учреждениях-М., 1993. С. 94:

<sup>120</sup> Ջաքարյան Ա. Բ., Կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Կուսակցությունների ժողովրդավարական քաղաքական գործընթացներում, Երևան 2015, էջ 103:

Լիդերների դասակարգման ուշագրավ մոտեցմամբ է հանդես եկել Է. Ֆրոմը, ով առաջարկում է նախ պարզել հասարակության որպիսությունը, իբրև դաշտ որտեղ հանդես է գալիս լիդերը: Այս առիթով հասարակությանը տալով «առողջ» և «հիվանդ» բնույթ, այդպիսով առաջինը սահմանելով իբրև համակեցության կանոնների պահպանմամբ և հանրային շահերի արդիականացմամբ իրականացվող քաղաքական կառավարմամբ միջավայր: Հակառակ բնույթ ունի «հիվանդ» հասարակությունը, իսկ քաղաքական լիդերները, համաձայն Է. Ֆրոմի լինում են սադիստ<sup>121</sup>, մազոխիստ<sup>122</sup>, նարգիզ<sup>123</sup> տիպերի:

Դիալեկտիկական խնդիրը, ինչպես արդեն նկատեցինք, քննարկել կամ գոնե դրան անդրադարձել են գրեթե բոլոր վերոհիշյալ տեսաբանները: Ֆրիդրիխ Նիցշեն «կամք առ իշխանություն» դրսևորման, կենսական պայքարում հաղթելու պայման էր համարում խոսքային կեղծիքը. ամեն իշխանավոր իր իսկ դիրքով հակված է որոշակի դերասանական վարպետության, սովոր է անգամ կեղծելու՝ առանց կեղծավորության գիտակցման. «Բացարձակ անմեղություն շարժումի, բառի, հույզի մեջ, կեղծավոր խղճի մաքրություն, ամենահանդիսավոր և հրաշալի բառերի հնչեցման վստահություն՝ այս ամենը պայմանն է հաղթանակի... Ով ուզում է ինչ որ բանի հասնել, ասում է այն, ինչ կցանկանար, որ իր մասին մտածեին, այլ ոչ այն, ինչ իրականում մտածում է»<sup>124</sup>: Փաստացի ով կարողանում է, կեղծում է միշտ:

---

<sup>121</sup> Սադիստ լիդերի համար իշխանությունը հոգեբանական պահանջմունք է, որը թույլ է տալիս ազատվել սեփական թերարժեքությունից՝ սեփական կյանքն այլոց պարտադրելով: Մարդկանց նկատմամբ անսահման իշխանությունը, նրանց լիարժեք հպատակեցումը նման մարդկանց մեծագույն հաճույք է պատճառում: Սադիստը կախված է իրեն ենթարկվող մարդուց այնպես, ինչպես վերջինս կախում ունի իրենից: Թե՛ առաջինը, թե՛ երկրորդը առանց իրար չեն կարող գոյատևել: Տարբերությունը միայն այն է, որ սադիստը հրամաններ է արձակում, շահագործում, ցավ պատճառում, ստորացնում: (Մանրամասն տե՛ս Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն, Երևան 2017 թ., էջ 138-139:)

<sup>122</sup> Մազոխիստը որոշումներ չի ընդունում, չի դիմում ռիսկի, երբեք մենակ չի լինում, բայց երբեք էլ անկախ չի լինում: Նա զուրկ է ամբողջականությունից: Մազոխիստը, իրենից անկախ, դառնալով գոյություն ունեցող ինչ-որ բանի կցորդը, ինքն իրեն գրկում է ստեղծարար գործունեությամբ կյանքի խնդիրը լրիճելու ունակությունից:(Մանրամասն տե՛ս Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն, Երևան 2017 թ., էջ 138-139:)

<sup>123</sup> Ինքնասիրահարված նարգիզին հուզում է լոկ սեփական «Ես»-ը: Արտաքին աշխարհը նարգիզը գնահատում է շահի հարաբերակցությամբ՝ «Ի՞նչ կարող եմ ես վերցնել ձեզնից, ի՞նչ կարող եք դուք ինձ տալ...»:(Մանրամասն տե՛ս Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն, Երևան 2017 թ., էջ 138-139:)

<sup>124</sup> Ф. Ницше, Воля к власти: опыт переоценки всех ценностей. М.: “REFL-book”, 1994, с.163-164:

Առաջնորդի խոսքի և դրա ազդեցության մասին հատկանշական բնորոշում է տվել Գարեգին Նժդեհը. «Կառավարելու մի հատիկ միջոց ունի նա՝ խոսքը, խիստ, բայց ընկերական, խոսքը՝ երբեմն որպես սանձ և միշտ էլ որպես խթան»<sup>125</sup>:

Առաջնորդները խոսում են իրենց ունկնդիրների վրա ազդելու և նրանց ոգևորելու համար: Լավ մտածված, մշակված և լավ մատուցված խոսքն առաջնորդի ազդեցության միակ և զորավոր գործիքն է: Խոսքը կարող է ներառել կուսակցության նպատակները և աշխատել դրանց իրականացման ուղղությամբ: Իշխանություն ձեռք բերելու նպատակով անհատը նախևառաջ պետք է այդ իշխանությունը նվաճի իր խոսքի միջոցով<sup>126</sup>: Առաջնորդի խոսքը նաև նրա մտածելակերպի դրսևորումն է. որքան էլ ասվի, թե խոսքը մարդուն տրված է սեփական միտքը թաքցնելու համար (ինչը, իհարկե, արդարացի է ասված դիվանագետների, քաղաքական գործիչների, առևտրային բանակցություններ վարողների առնչությամբ), այդուհանդերձ, առաջնորդի խոսքի մեջ առկա լեզվական կաղապարների, հաճախադեպ ոճական հնարքների, բառագործածության առանձնահատկությունների, լեզվական սայթաքումների, տոնայնության, հնչերանգի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում խոսքի միջոցով թափանցելու խոսողի հոգեբանության մեջ<sup>127</sup>:

Դոնալդ Թրամփը շատ կարևոր է համարում լիդերի կարողությունը բաց մնալու նոր գաղափարների, նոր գիտելիքների համար: «Ինքդ քեզ եթե ամենագետ զգաս՝ նշանակում է փակում ես քո առջև նոր հնարավորությունների և հայտնագործությունների դուռը»<sup>128</sup>:

Կուսակցության լիդերն այս ամենից զատ պետք է կատարի ֆունկցիա՝ գործառույթ: Կուսակցական լիդերի գլխավոր և հիմնական գործառույթը ռազմավարական գործառույթն է, այստեղ նախևառաջ արտահայտվում են լիդերի կարողություններն ու ունակությունները, վերլուծական միտքն ու քաղաքական դաշտում առկա վիճակին համարժեք ախտորոշում տալու կարողությունը:

<sup>125</sup> Գ.Նժդեհ, էջեր իմ օրագրէն, Կահիրե, 1924, էջ 56:

<sup>126</sup> Միրզոյան Վ., Առաջնորդման փիլիսոփայություն, Երևան 2018, էջ 289:

<sup>127</sup> Տե՛ս նույն տեղում էջ 296:

<sup>128</sup> Д. Трамп, Лидерство. Золотые правила Дональда Трампа / Пер. с англ., М.: Издательство “Э”, 2017, с. 5:

Ինտեգրացիոն գործառույթն ունի երկակի բնույթ, այն պայմանավորվում է ներքին և արտաքին բաղադրիչներով: Ներքին ինտեգրացիոն գործառույթն ուղղված է կարծիքների ու տեսակետների համաձայնեցմանը, սա առավել կարևորվում է իշխանության եկած կուսակցության լիդերի պարագայում, այստեղ արդեն խոսում ենք արտաքին ինտեգրացիոն գործառույթի մասին: Կուսակցության լիդերի կարևորագույն ունակություններից են արժեշահային համակարգում առկա բևեռացումը և հնարավոր բախումների նվազեցումն է:

Կառավարման խորհրդարանական համակարգի պայմաններում առաջնային է դառնում կուսակցության լիդերի հատկապես վերոնշյալ գործառույթը, քանի որ արտաքին ինտեգրացիոն գործառույթը պայմանավորվում է կուսակցությունների և խորհրդարանական խմբակցությունների, հասարակական-քաղաքական շարժումների հետ փոխհարաբերությունների հստակեցմամբ: Ա. Զաքարյանը գրում է, որ «նույնիսկ այն դեպքում, երբ կուսակցությունը տնօրինում է լիարժեք իշխանություն (ինչպես այսօր Հայաստանի Հանրապետությունում) և կարիք չունի հարաբերությունների կարգավորման, ցանկալի է, որ, ապահովելով կուսակցությունների հետ գործընկերային հարաբերությունները, երկխոսություն ծավալի զանգվածների հետ, անկախ իր գաղափարական արժեքաբանությունից»: Տեղին է Օ'Դոնելի հետևյալ միտքը. «Լիդերը ազգային միաբանության մարմնավորումն է<sup>129</sup>»: Այսպիսով՝ քաղաքական կայունության և քաղաքացիական խաղաղության ապահովող է իշխող կուսակցության լիդերը, ով կոչված է պահպանելու քաղաքական դաշտում արժեքների փոխներդաշնակություն և ընդհանրություն:

Հաջորդը հաղորդակցական գործառույթն է, որի շրջանակներում հարաբերվում են կուսակցության լիդերը և հասարակական տարբեր խմբերը, տարբեր միությունները: Ընդ որում, այս գործառույթը ևս բաժանվում է ներքին և արտաքին հատվածների. առաջինն ընդգրկում է կուսակցության լիդերի և տեղական կառույցների ղեկավարների, կուսակցության ակտիվ անդամների հետ ունեցած անձնական կապերը, իսկ արտաքին հատվածն ընդգրկում է հասարակության լայն զանգվածների և կուսակցության լիդերի

---

<sup>129</sup> Օ'Доннелл Г. Делегативная демократия. –Век XX и мир, 1994 N 2.3



բազմազան ու տարբեր շարժառիթներով պայմանավորված հարաբերությունները: Հաղորդակցական գործառույթը խորհրդարանական կառավարման պայմաններում, կարծում ենք, դրսևորվում է երեք մակարդակում՝ ընդգրկելով վերոնշյալ երկուսը՝ ներքին և արտաքին հատվածները, ինչպես նաև հարաբերությունները խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունների հետ:

Գաղափարախոսական գործառույթ, որը կապված է լիդերների կողմից առաջադրվող գաղափարների, մտահղացումների ու ծրագրերի հետ, լիդերի կողմից ձևակերպվում և դառնում է կուսակցության ու հասարակության ընդհանուր խնդիրը:

Չափազանց կարևոր է համարվում վերջին՝ նորարարական գործառույթը, որի շրջանակներում կուսակցության լիդերը՝ պահպանելով հարաբերական կայունություն, միևնույն ժամանակ մշտապես նոր գաղափարների ու նոր նպատակների սահմանող պետք է լինի: Հիմնականում կուսակցության լիդերները ձևավորում են ապագային միտված նպատակներ, որոնք ձևակերպվում են գործունեության ռազմավարությունում:

Ամբողջացնելով կարծում ենք, որ խորհրդարանական մշակույթի ձևավորման պարագայում կուսակցական լիդերի և, առհասարակ, լիդերի գործունեության, ինչպես և քաղաքական ժամանակում նրա արդիականանալու և այնտեղ լեգիտիմանալու գործընթացը, գլխավորապես, արտացոլվում է հենց նորարարական գործառույթի իրականացմամբ, որտեղ լիդերը հնարավորություն ունի և պետք է դրսևորվի իր բոլոր՝ կենսաձագումնաբանական, սոցիալ-հոգեբանական, գոյաբանական, սոցիալական հատկանիշներով:

Այսօր քաղաքական ժամանակներին առավել բնորոշ է քաղաքական մարքեթինգի պատեհ կիրառումամբ հաջողության հասնելը: Քաղաքական իրավիճակի ու կուսակցական սահմանափակումների ճիշտ ներդաշնակման արդյունքում հնարավոր է ընդգրկել լայն ընտրազանգվածների, ինչն իրենից ենթադրում է առավել պարզ և հեշտ ընկալելի իմիջի կառուցում թե՛ կուսակցությունների ներսում, և թե՛ արտաքին միջավայրում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված հետազոտությունների հիման վրա հանգել ենք մի շարք եզրակացությունների և առաջարկությունների, որոնցից հարկ է առանձնացնել հետևյալները՝

- Ժամանակակից աշխարհում քաղաքական գործընթացները բնութագրվում են, որպես դինամիկ փոփոխություններով գործընթացներ, որտեղ հաղորդակցությունները դուրս են գալիս ավանդական ձևերից և ձեռք են բերում հնարավոր ու անհնար դրսևորումներ՝ փոխելով քաղաքական դերակատարների էությունը և հիմնական գործառույթները:

- Կատարված ուսումնասիրությունից բխում է, որ խորհրդարանական մշակույթի կայացումն ամենևին չի պայմանավորվում մեկ ինստիտուտով, այն համալիր փոխգործության և համագործակցության բարձր մշակույթ ենթադրող երևույթ է, որի համար հիմք են հանդիսանում քաղաքական էլիտայի, քաղաքացիական և ժողովրդավարական ինստիտուտների հարաբերությունները, այդ ինստիտուտների լեգիտիմության աստիճանը և լեգիտիմացման գործընթացը, հասարակության քաղաքական համոզմունքները, քաղաքական գիտակցության, քաղաքական գործընթացներին մասնակցության, դրանց ընկալունակության աստիճանը, և այս համատեքստում, իհարկե, առանցքային դերը կայացած կուսակցական համակարգին է:

- Կարևորվում է համագործակցության մշակույթի առկայությունը հատկապես օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև, այսինքն՝ առաջ է գալիս հանրային իշխանություն իրականացնող և հասարակության ու ժողովրդի շահերն իրացնողների շահերի ներդաշնակման գործընթացը:

- Խորհրդարանական մշակույթի գործառույթների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ժողովրդավարական անցման պայմաններում խորհրդարանական մշակույթը ձեռք է բերում նաև հանրային-քաղաքական համերաշխություն ապահովողի գործառույթ, ինչպես խորհրդարանում, այնպես էլ դրանից դուրս՝ ապահովելով կուսակցությունների ժողովրդավարական համախմբումը:

- Խորհրդարանական մշակույթի ձևավորման առանցքային ու գլխավոր դերը թեև խորհրդարանն է, սակայն անհրաժեշտ է, որ ողջ քաղաքական համակարգը խորհրդարանին վերաբերվի որպես բարձրագույն օրենսդիր մարմնի, որն ունի ժողովրդի կողմից ազատ ընտրությունների միջոցով լեգիտիմություն, և որ ժողովրդի ողջ ուժը կենտրոնացած է հենց այս ինստիտուտում:

- Համաձայն կատարած ուսումնասիրության՝ խորհրդարանական մշակույթը գտնվում է միաժամանակ և՛ ինստիտուցիոնալ և՛ ոչ ինստիտուցիոնալ ոլորտներում՝ հանդիսանալով քաղաքական համակարգի կարևորագույն բաղադրիչ, հիմքում ունենալով քաղաքական և իրավական արժեքներ, շահեր և շարժառիթներ:

- Քաղաքական ժամանակով պայմանավորված՝ կուսակցությունների նկատմամբ ժամանակակից աշխարհում քաղաքական նոր տենդենցները (ընտրողների շրջանում անվստահությունը, քաղաքական կուսակցությունների ազդեցության անկումը, կուսակցական համակարգի անկատարությունը և այլն) որոշիչ ազդեցություն ունեցան դրանց գործառույթների, կազմակերպական և ֆինանսական կառուցվածքների, ինչպես նաև կուսակցական լիդերության ինստիտուտի վրա՝ միևնույն ժամանակ ետ մղելով խորհրդարանում կուսակցությունների խորհրդարանական մշակույթ ձևավորելու գործառույթը: Հետևաբար, նկատենք, որ անհրաժեշտ է արդիականացնել կուսակցական լիդերության ինստիտուտի տեսագործական դրսևորումները: Այստեղ նախ պետք է նկատի ունենալ, որ կուսակցական լիդերությունն ինքնին, որպես առանձին ուսումնասիրության առարկա բավականաչափ ուսումնասիրված չէ, այն հիմնականում դիտարկվում է ընդհանուր քաղաքական լիդերության շրջանակներում: Կուսակցական լիդերության առանձին ուսումնասիրության անհրաժեշտությունը հիմնավորում ենք լիդերի գործունեության քաղաքական և վարչարարական բնույթից ելնող առանձնահատկություններով:

- Առաջարկում ենք խորհրդարանական մշակույթի կայացման նպատակով բարձրացնել համագործակցության մշակույթը պետական կառավարում իրականացնող բոլոր ինստիտուտների և դերակատարների միջև:

- Հանգամանորեն հետազոտել և վերլուծել կուսակցական լիդերության ինստիտուտը՝ միաժամանակ այն դիտարկելով գործունեության թե՛ քաղաքական և թե՛ վարչարարական ոլորտներում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Օրենքներ և այլ իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն, 1995 թ.:
2. ՀՀ Սահմանադրություն, 2005 թ.:
3. ՀՀ Սահմանադրություն, 2015 թ.:
4. Կուսակցությունների մասին ՀՀ օրենքը (Ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3-ին)
5. Կուսակցությունների մասին ՀՀ օրենքը (Ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին)
6. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Եր., 2014 թ.:
7. Հայաստանի անկախության մասին հռչակագիր (Ընդունվել է 1990 թվականի օգոստոսի 23-ին)
8. Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքը (Ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին)
9. ՀՀ Նախագահի մասին ՀՀ օրենքը (Ընդունվել է 1991 թվականի օգոստոսի 1-ին)

### Գրականություն

1. Զաքարյան Ա. Բ., Կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Կուսակցությունները ժողովրդավարական քաղաքական գործընթացներում, Երևան, 2015 թ.:
2. Խուան Զ. Լինց, Ալֆրեդ Ստեփան, «Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության խնդիրները», 2011 թ.:
3. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թթ., Երևան, ՀՅԴ հրատ., 2005 թ.:
4. Հակոբյան Հ. Հ., Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մի քանի հիմնախնդիրների շուրջ, Երևան, 2005 թ.:

5. Հակոբյան Հ. Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Եր., Տիգրան Մեծ, 2007 թ.:
6. Հայզինգա Յ., Մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, Փրինթինգո, Երևան 2007 թ.:
7. Մարգարյան Մ. Մ., Լեզվաբանության հիմնախնդիրը քաղաքական զարգացումներում, «21-րդ դար», 2007, N 3(17):
8. Մարգարյան Մ. Մ., Պետություն, Երևան, ՀՀ ՊԿԱ, 2012 թ.:
9. Մարգարյան Մ. Մ., Քաղաքական արդիականաման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Պետական ծառայություն», 2019 թ.:
10. Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն, Երևան 2017 թ.:
11. Մաքիավելի Ն., Տիրակալը, Երևան 2010 թ.:
12. Միրզոյան Վ., Առաջնորդման փիլիսոփայություն, Երևան 2018 թ.:
13. Նժդեհ Գ., էջեր իմ օրագրէն, Կահիրե, 1924 թ.:
14. Պետրոսյան Ռ., Քաղաքագիտություն, Ղասազիրք բուհերի համար, Երևան, 2004 թ.:
15. Պլատոն, «Երկեր չորս հատորով» հատոր IV, Պետություն», Երևան 2017 թ.:
16. Զորջ Օրուել, «1984», Երևան «Անտարես», 2012 թ.:
17. Ռ.Ֆիշեր, Ու. Ուրի, Համաձայնության հասնելու ուղին: Բանակցություններ առանց պարտվողների: Եր., ՄՁՄԿ, 2005 թ.:
18. Սթիվեն Մ. Ֆիշ, Ավելի հզոր օրենսդիր մարմիններ, ավելի հզոր ժողովրդավարական երկրներ, Ժողովրդավարության ամսագիր 17:1 (2006), 5-20:
19. Ստեփանյան Վ., Կառավարման խորհրդային ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն// Օրենք և իրականություն, 2003, N19-20, էջ 1-2:
20. Վ. Պողոսյան, Կ. Միրումյան, Ա. Բաբաջանյան, Ս. Աստվածատրյան, Քաղաքագիտություն. Հանրագիտական բառարան, Երևան 2004., էջ 432
21. Քաղաքագիտություն, Հ. Մանուչարյան, Երևան, 2006թ., էջ 355-386:
22. Քաղաքագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Երևանի համալս. հրատ., Եր., 2006, էջ 289:

- 23.«Глобальный парламентский отчет» // "Изменяющийся характер парламентского представительства". Ташкент, 2012:
- 24.Алмонд Г., Верба С. Гражданская культура: политические установки и демократия в пяти странах. М., 2014:
- 25.Ачкасов В. А. Взрывающаяся архаичность: традиционализм в политической жизни России. СПб., 1997:
- 26.Ачкасов В. А. Трансформация традиций и политическая модернизация: феномен российского традиционализма // "Философия и социально-политические ценности консерватизма в общественном сознании России". Выпуск 1. СПб., 2004:
- 27.Баглай М. В. Конституционное право РФ, М., 1995:
- 28.Берк Э. Размышления о революции во Франции. М., Наука, 1994:
- 29.Бихари М., Парламентаризм.- Мир политики. Суждения и оценки западных политологов, М., 1992:
30. Большой юридический энциклопедический словарь, М., 2005:
- 31.Бурлацкий Ф. М. Социологические проблемы политики // "Социальные исследования". Выпуск 5. М., 1970:
- 32.Гаганова Н. А. Концепция разделения властей и идея субсидиарности. // Государство и право, 2003, N 3:
- 33.Гердер И., Идеи к философии истории человечества, перевод и примечания А. Михайлова, М.:Наука,1977:
- 34.Даймонд Л., Глобальная перспектива, 2000г:
- 35.Елисеев С. М. Политическая социология: учебное пособие. СПб.: Издательство «НесторИстория», 2007:
- 36.Категории политической науки. Мельвилль А.Ю. и др, М.: МГИМО, РОССПЭН, 2002:
- 37.Ковбенко Л.Н., Колесников В.Н. Парламентская культура как предмет научно-практического анализа // Власть 2008.№5:
- 38.Конституционное право зарубежных стран:
- 39.Локк Дж. Избранные философские произведения. Т. 2, М., 1960:

40. Лоутон А., Роуз Э., Организация и управление в государственных учреждениях- М., 1993:
41. М. Н. Марченко, М. Х. Фарукшин, Буржуазные политические партии, М., 1987:
42. Медушевский А. Н. Сравнительное конституционное право и политические институты. М., 2002:
43. Миронов О. О. Истоки российского парламентаризма.- Представительная власть, 1996, N 4-5:
44. Михельс Р. Социология политической партии в условиях демократии б 1990:
45. Монтескье Ш. Избранные произведения, М., 1955:
46. Общая и прикладная политология, М., 1997:
47. П. К. Гончаров, Ю. В. Ирхин, В. Карапивин. Начало политической науки. М., 1994:
48. Парламентское право России, М., 1999:
49. Руссо Ж. Ж. Трактаты. М., Наука, 1969:
50. Сартори Дж. Вертикальная демократия.-Полис, 1993:
51. Современный политологический словарь, Липецк, 2000:
52. Токвиль А. Демократия в Америке. Кн.1. ч.2, М, : Прогресс, 1992:
53. Ф. Ницше, Воля к власти: опыт переоценки всех ценностей. М.: "REFL-book", 1994:
54. Фоменко С.А., Политология, М., 2000:
55. Фрейд Зигмунд, Буллит Уильям, Вудро Вильсон. 28-й президент США. Психологическое исследование. -М.: Прогресс, 1992:
56. Хантингтон С., Третья волна. Демократизация в конце XX века / М., 2003:
57. Херманн М. Д. Стили лидерства в формировании внешней политики. – Полис. Политические исследования. 1991:
58. Чиркин В.Е. Основы сравнительного правоведения. М, 1997:
59. Шумпетер Й., Капитализм, социализм и демократия, М., Экономика, 1995:
60. Юридическая энциклопедия, М., 1997:
61. Д. Трамп, Лидерство. Золотые правила Дональда Трампа / Пер. с англ., М.: Издательство "Э", 2017:



62. O'Donnell G. Делегативная демократия. –Век XX и мир, 1994 N 2.3
63. Sartori G., Parties and Party Systems, ECPR Press, 2005:
64. Janda K. Political Parties: A Cross-national Survey. New York, 1980:
65. Jennings I. Cabinet Government. Cambridge, 1959:
66. Lapalambara J., Anderson J. Political Parties. Encyclopedia of Government and Politics. Vol.1.:
67. Osiatynski W., A Note on General Wojciech Jaruzelski // EECR, 1994, Vol. 3, N 1:
68. Sartori G. Parties and Party Systems: A Framework for Analysis, Vol. 1. New York, 1976:
69. Sartori G., Teoria dei partiti e caso Italiano, Sugarco edizione, S. r.l., viale Tunisia 41, Milano, Italia, 1982:
70. Bureteau G. Traite de science politique. Paris, 1977:

### **Համացանցային կայքեր**

1. Այսօր էլ Իտալիայի պառլամենտի ստորին՝ պատգամավորների պալատում ներկայացված են 8 կուսակցություններ (մանրամասն տե՛ս <https://www.camera.it/leg18/46>)
2. Մարգարյան Մ.Մ., Հայաստանի Հանրապետության քաղաքական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրը խորհրդարանական կառավարման պայմաններում, 2017թ. (<https://mmargaryan.wordpress.com/2017/06/21/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6/>)
3. Воробьев И. В. Становление института парламентаризма в современной России: взаимодействие депутатского корпуса и аппарата Государственной Думы: Автореф. дис. канд. социол.наук. М., 2004, Константинова Л. А., Лаврикова А. А.

Ценностные ориентации как фактор социальной стратификации современного российского общества (// [http:// cyberleninka.ru/article/n/tsennostnye-orientatsii-kak-faktor-sotsialnoy-stratifikatsii-sovremennogorossiyskogo-obschestva#ixzz2XUKA7vdt](http://cyberleninka.ru/article/n/tsennostnye-orientatsii-kak-faktor-sotsialnoy-stratifikatsii-sovremennogorossiyskogo-obschestva#ixzz2XUKA7vdt))

4. Щербинин А.И. Зарождение и развитие парламентаризма (// <http://duma.tomsk.ru/page/8313> )